


25.872



1448

Հրատարակութիւն ԲԺ. Ա. Բուդուղեանի:

1488

05 JAN 2010

334
n-93 ml

ԱՒՐԵՑՑՈՅՑ


300

1541-012

ԳԻՒՂԱՑԻ

ԿՈՉԵՐԱՏՈՐԻՆ

$$\begin{array}{r} 1003 \\ \times 2266 \\ \hline \end{array}$$




ԹԻԳԼԻՄ

1910

Тифлісъ, типографія „Гуттенбергъ“, уг. Ольгинск. и Слѣтицовск. № 1.

27 AUG 2013

25.872



Գործարանատէր

Մեժավաճառ

Միզնորդ

Մանրավաճառ

Ապառող

Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

Մեհնք որոշեցինք հրատարակել Գիւղ. փոխախնայող և արդիւնաբեր. ընկերակցութիւնների կոմիտետի Պետերբուրգի բաժանմունքի հրատարակած «Ուղեցոյց գիւղացի կօօպերատորին» գրքոյկը:

Սա մի զեղեցիկ օժանդակող գրքոյկ է գիւղական կօօպերացիայի համար և ինչպէս օգտակար ու գործնական գրքոյկ, արժէ, որ լայն ընդունելութիւն գտնէ ամեն տեղ, ինչպէս մեզանում՝ Կովկասում, այնպէս և Տաճկահայաստանում:

Մեր գիւղական համայնքների տնտեսական վրկութիւնը կախւած է և կօօպերացիայից. սա տնտեսական անհրաժեշտ պահանջ է: Կօօպերացիան սպառողի շահերն է պաշտպանում և նրան անպաշտպան չի թողնում իւր սկ օրերին:

Կօօպերացիան հոգս է տանում իւր անդամների մտաւոր կեանքի ու հոգևոր աշխարհի պահանջներին բաւարարութիւն տալու, վարժեցնում է նրանց իսկական քաղաքացիութեան և ինքնավարութեան և վերջապէս ներշնչում է միութեան ու համաձայնութեան ոգի:

Բժ. Ա. Բայրութեան.

1910 թ. 3-ին ապրիլի.
Պետերբուրգ:





Ի՞նչ է ԿՕՈՎԵՐԱՑԻԱՆ

I

Վերջին մի քանի տարում բանւորական և գիւղացիական շրջաններում սովորական խօսակցութեան մէջ մտել են օտարազգի խօսքեր—կօօպերացիա, կօօպերատօր, կօօպերատիւ ընկերութիւն:

Սակայն ի՞նչ է պարունակւում «կօօպերացիա» խօսքի մէջ: Այդ ի՞նչ կախարդական յատկութիւն ունի «կօօպերացիա» խօսքը, որ այդպէս արագ ժողովրդական զրոյցների առարկան դարձաւ:

Պատասխաննենք միանգամից. կօօպերացիա կոչում է միանալու այն ձևը, որի օգնութեամբ բանաւորներն ու գիւղացիք միմեանց համերաշխ ջանքերով կարող են բարեփոխել իրենց անտեսական դրութիւնը: Վաղուց արդէն, հէնց իրենք մեր բանւորներն ու գիւղացիք փորձում են գտնել այդ միջոցը. սակայն օտար պետութիւնների մէջ՝ Արևմուտքում, այդ միջոցը վաղուց արդէն հնարւած է: Այստեղ այդ միջոցը կատարելագործւած և փորձւած է հէնց գործադրութեան մէջ և բարեյածող հետևանքներ է տւել: Կեանքի պայմանների բարեփոխման կուի այդ միջոցը ամեն աեղ կոչւել է կօօպերացիա, այդ անունով էլ հաստատւել է մեզանում:

Եթէ կօօպերացիա խօսքը բառացի թարգմանելու լինենք հայերէն՝ կնշանակէ աշխատակցութիւն, այսինքն միացած գործունէութիւն:

Կեանքի մէջ ամեն քայլափոխում մենք պատա-

հում ենք մարդկանց միմեանց հետ աշխատակցելիս Նախ և առաջ կարիքը ինքն է ստիպում մարդկանց միմեանց աշխատակցել, շատ ժամանակ նոյն իսկ կախւած շինելով մասնակցողների կամքից։ Սակայն կօպերացիան կազմակերպւած, որոշ ու առաջուց մտածւած աշխատակցութիւն է, որի նպատակն է աշխատաւոր ժողովրդի կեանքի ու աշխատանքի պայմանները բարեփոխել։

Նայած նրան, թէ իրենց անտեսական դրութեան որ կողմն են ուզում փոխել գիւղացիք, դրա համար էլ կազմակերպում են կօպերատիւ կազմակերպութիւնների համապատասխան տեսակներ։

Եթէ գիւղում հնարաւորութիւն չկայ բոլորովին փոխառութիւն անել, փող պարտք վերցնել, և կամ մասնաւոր մարդկանցից փոխառութիւն անելու պայմանները շատ ծանր են գիւղացիների համար, այդ դեպքում գիւղական հասարակութիւնը կազմակերպում է վարկի կօպերատիւներ, որոնցից և մեծապէս օգտաւում է։

Եթէ գիւղացին ուզում է բարձրացնել իր տընտեսութիւնը՝ իր համար ամենից ձեռնառու պայմաններով ծախել գիւղատնտեսական մթերքները և գընել գիւղատնտեսական զործիքներ, — նա գիմում է գիւղատնտեսական ընկերութիւնների ու ընկերակցութիւնների օգնութեան։

Շատ ժամանակ գիւղացին ինքն էլ է հասկանում, որ եթէ փող լինի զործը սարգի գցելու, կարելի կլինի կանոնաւոր վերպով պատրաստել ու վաճառել գիւղատնտեսական մթերքներ։ Այն ինչ համարեա ամենքի համար էլ պարզ է, որ կաթնային տնտեսութիւնը, եթէ զործը կանոնաւոր դրւի, կա-

րող է գիւղական ամենաարդիւնաւէտ աղբիւրներից մէկը լինել։ Եւ երբ այդտեղ էլ միտք է ծագում միանալ ու միասին աշխատակցել, կօպերացիան, կաթնագործարանային արտելների ձևով, այստեղ էլ օգնութեան է գալիս։

Կօպերացիան, արդիւնագործական արտելների ձևով, հեշտացնում է գիւղական արհեստաւորների միացումն։

Վերջապէս, երբ գիւղացին ուզում է գիւղական ընտանիքի անձնական կարիքների համար պէտք եղած կեանքի անհրաժեշտ առարկաները գնել աժան ու լաւ տեսակինը, այդտեղ էլ կարիքը ստիպում է նրան գիմնել կօպերացիային — սպառողական ընկերութեան։

Ահա թէ ինչ է կօպերացիա կոչւածը. միջոց, որով վերոյիշեալ նպատակների համար միանում ու կազմում են զանազան տեսակի ընկերութիւններ, և որը ուրիշ երկրներում արդէն փորձւած ու ընդունւած է։

II

ԿՕՊԵՐԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ինչպէս տեսանք նախորդ գլխում, կօպերատիւ ընկերութիւնները լինում են հետևեալ տեսակների —

1) Վարկի և փոխառութնայողական ընկերակցութիւններ։

2) Գիւղատնտեսական ընկերութիւններ և գիւղատնտեսական ընկերակցութիւններ։

3) Գիւղական սպառողական ընկերութիւններ։

4) Արտելներ կամ համարհեստակցութիւն։

Ա. ՎԱՐԿԻ ԿՈՉԵՐԱՎՅԱԼ

Դիւղական տնտեսութեան մէջ փողի պակասութիւնն ու նեղութիւնը սովորական, համարեա անխուսափելի մի բան է: Շատ ժամանակ զիւղացին ոչ մի հարաւորութիւն չունի փող ճարելու: Իսկ եթէ մի կերպ ճարում էլ է, ինչպէս այդ բոլորին յայտնի է, հեշտութեամբ թաղում է պարտքերի մէջ և քայքայում իր տնտեսութիւնը:

Դրա առաջն առնելու ու պաշտպանելու համար կօպերացիան ահա հրաւիրում է բոլոր զիւղացիներին կազմել մի վարկի (կամ փոխատութիւնայողական գորա համարեա միենոյն բաներն են) կօպերատիւ ընկերակցութիւն:

Դիւղացիներից ամեն մէկը, ինչքան էլ աղքատ մինի, ձեռքը փող ընկած ժամանակ (աշխատավարձն ստանալուց յետոյ) միշտ կարող է մտցնել ընկերակցութեան գրամարկով որոշ, ոչ շատ մեծ, անդամավճար: Իսկ եթէ մէկի համար դժւար է միանգամից տալ ամբողջ անդամավճարը, թոյլ է արւում մասմաս վճարել: Այդ փոքրիկ զոհողութիւնների փոխարէն վարկի ընկերութիւնը հարիւճներով կը հատուցանէ զիւղացւն:

Փողի խիստ կարիքի բոպէին, օրինակ, գարնանը, երկրագործական աշխատանքների սկզբին, զիւղացին էլ կարիք չունի վազելու վաշխառուի մօտ: Դիւղացին ապահով գնում է իր վարկի կօպերատիւ ընկերութիւնը և ինչպէս նրա անդամ, կանոնադրու-

թեան հիման վրայ, վերցնում է, ի հարկէ որոշ, բայց փոքրիկ տոկոսով, իր համար պէտք եղած գումարը: Կօպերատիւ օգնութեան գործը հասկանալի կը լինի, եթէ յիշենք մեր հին տառածը—«գիւղը որ կանգնի, սար շուռ կտայ»: զիւղացիների անդամավճարների փշուրներից կօպերատիւ զրամարկում այնպիսի մի գումար է գոյանում, որով կարելի է, ժամանակաւոր կարիքի դէպում, մինչև իսկ ամբողջ զիւղական տնտեսութիւնը պահպանել:

Այդպիսի վարկի կօպերատիւ ընկերութիւնը նրա համար չէ հիմնում, որ փողը շահեցնելի, ինչպէս վաշխառուներն են վարում, և ոչ էլ նրա համար, որ կեղեքի զիւղացուն՝ օգտաելով նրա կարիքից ու անհրաժեշտութիւնից:

Այդ ընկերութիւնը հիմնում է նրա համար, որ համերաշխ ջանքերով զիւղացիք կարողանան իրենք իրենց օգնել, մէկ մէկու ձեռք մէկնելով ու տնտեսական ծանր բոպէներին օգնութեան համարով:

Ամեն մի զիւղացի, հէնց որ մտաւ այդ ընկերութեան մէջ, արդէն գտնում է կօպերատօր: Այդ բոպէից սկսած նա արդէն գտնում է այդ ընկերութեան տէրերից մէկը: Ընդհանուր ժողովներում նա միւս անդամների հետ միասին կարող է ընկերութեան համար կանոններ հիմնել, ընտել կառավարելու համար վստահելի անձնաւորութիւններ:

Վարկի ընկերութիւնների բացման համար անհրաժեշտ տեղեկութիւնները՝ թէ ի՞նչպէս պէտք է բացել ընկերութիւնը, որտեղից ձեռք բերել կանոնադրութիւնը, ուր գիմել, և այն, գնում ենք 8-րդ գլխում՝ «ինչպէս բացել վարկի կամ փոխատութիւնայողական ընկերութիւններ»:

Բ. ԳԻՒՂԱՏՆՑԵՍՍԿԱԾՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱԾ

Շատ անգամ՝ զիւղացին հնարաւորութիւնից գուրել է իր անտեսութեան համար պէտք եղած բանը զիւղում ճարելու, նոյն իսկ հէնց փողով։ Գիւղի «դալաները» ու ամեն տեսակի միջնորդ-գործակալները «հօր գները» գնում են ապրանքի վրայ։ Բայց աւելի յաճախ, փողով էլ ձեռք չի ընկնում խելքակառուր մի բան, որովհետեւ պէտք եղած բանը տեղում շատ անգամ չի էլ ճարւում։

Կամ եթէ, օրինակ, զիւղացին ցորեն, գարի ունի ծախելու, զիտէ, որ քաղաքում հացահատիկը լաւ գին է գնում, բայց ի՞նչ արած, տանել չի լինի—քաղաքը հեռու է, իսկ եղ կամ ձի քիչ ունի։ Ահա այդտեղ մէջտեղ է դալիս միջնորդը, ցորեն հաւաքողը ու կիսագնով գնում-հաւաքում է զիւղացոց հացահատիկները։

Գիւղացին շատ էլ լաւ է հասկանում, որ իրեն խարում, կողոպտում են, սակայն ի՞նչ կարող է անել։ Հացահատիկը պահելը դժւար է, տեղ չկայ, կը փթի, իսկ փողն էլ պէտք է։ ստիպւած ես համաձայնւել և առաջարկած գնով ծախել, հակառակ դէպքում սպառնում է ապրանքի բոլորովին չդնել։

Շատ կարեոր է զիւղացու համար հնարաւորութիւն ունենալ իր մթերքները, աշխատանքի պատրները ծախելու։ Իսկ իրագործել այդ, քիչ թէ շատ ձեռնաուր պայմաններով, միշտ էլ հնարաւոր չէ։

Ահա յիշածո դէպքերում, նման գժւարութիւնների ժամանակ, փխանակ ապրանքն առած դալալ-

ների գուռը ծեծելու, զիւղացիք ժողովւում են, խօսում, քննում են այն բոլոր վնասները, որ ամեն մէկը առանձին-առանձին կրել է, և ապա, միանալով կազմում են նոր կօօպերատիւ զիւղատնտեսական ընկերութիւն։

Այդ կօօպերատիւ ընկերութիւնը օգնում է նըրանց հետեւեալ ձեռվ։

Կարիքի ժամանակ, երբ պէտք է գնել որևէ մեքենայ, ձի, եղ, կով կամ ուրիշ մի բան, զիւղացին գնում յայտնում է այդ մասին իր ընկերութեանը։ Նոյն բանը անում են նաև միւս զիւղացի կօօպերատորները, այսինքն ընկերութեան անդամները։

Ասենք, թէ օրինակ, ընկերութիւնը ստանում է զիւղացիներից պատւէր՝ գնելու 17 ձի, 20 գութան, 100 փութ լաւ սերմացու։

Փոխանակ եռապատիկ գնով տեղական դալալից գնելու, զիւղատնտեսական ընկերութիւնը գնում է ուղղակի առաջին ձեռքից, ապրանքի տեղումը՝ քաղաքում, գործարանում, ձիավաճառանոցում, և ինարիէ, ցածր գնով։ Երբ զիւղում ստացւում է պատւիրած ապրանքը, հաշում են, թէ ինչ ծախս է նստել մարդու գնալ-դալը և ապրանքի ճանապարհածախսը։ Եւ ահա հէնց այստեղ պարզ երևում է՝ թէ ընկերութեան միջոցով արած առեւտրից ամեն մի զիւղացի խնայում-տնտեսում է բաւականին փող, բացի այն բանից, որ իր տեղում կարելի է լինում գնել ինչ տեսակի ապրանք որ ուզես և ամենապատւական յատկութեան։

Ընկերութիւնը հիմնելուց յետոյ զիւղացիք, այն բոլորը, ինչ որ իրենց պէտք է, աշխատում են գնել այդ ընկերութեան միջոցով։ Այդ ձեռվ առևտրից ըն-

կերութեան մէջ կազմւում է հասարակական գումարներ, որը պատկանում է բոլոր անդամներին, և որը նեղ օրերին գիւղացուն մեծ օգուտաներ կարող է տալ:

Այսպէս, օրինակ, եթէ մէկը մեքենայ գնելու համար պէտք եղած փողը չի կարող միանգամից գրանել ու վճարել, նա դիմում է իր ընկերութեանը, իսկ վերջինս կարող է գիւղացու պատւէրը կատարել ու գնել մեքենան և ապա ժամանակ տայ նրան մասմաս վճարելու:

Գիւղատնտեսութեան համար շատ դէպքերում անհրաժեշտ է լինում ձեռք բերել այնպիսի թանգ մեքենաներ, օր. կասիչ շողեշարժ մեքենայ, այնպիսի թանգ գործիքներ, որ ոչ մի գիւղացի առանձին, իր ոյժերով չի կարող գնել: Այդպիսի դէպքերում գիւղատնտեսական ընկերութիւնը դնում է ընդհանուր հասարակական - կօօպերատիւ մեքենայ, և չնչին վարձով տալիս է օգտելու իր անդամներին:

Մթերքների վաճառման գործում էլ գիւղատնտեսական ընկերութիւնը կարող է գիւղացիութեանը մեծ աջակցութիւն ցոյց տալ:

Եթէ գիւղացին կարիք ունի և ուզում է ձեռնտու պայմաններով ծախել իր ունեցած մթերքները և բը գիւղում կայ գիւղատնտեսական կօօպերատիւ ընկերութիւն - նա էլ չի դիմում «բարերար հաւաքողի» օգնութեան:

Գիւղատնտեսական ընկերութիւնը ինքը կապ է հաստատում քաղաքի խոշոր գնողների հետ և ինքը առանց միջնորդի ուղարկում է նոցա վագոններով հացահատիկներ, պտուղներ, անասուններ և այլն և, ի հարկէ, լաւ գներով:

Անյետաձելի կարիքի ժամանակ, գիւղացին կա-

րող է նոյն իսկ մինչև իր մթերքի (օր. ցորենի) ծախելը, գրա գրաւով փոխառութիւն անել, սովորաբար արժողութեան ^{2/3}-ի չափով:

Շատ յաճախ ժամանակաւորապէս հացահատիկների գները ընկնում են, և պարզ յայտնի է, որ մի երկու ամսից յետոյ գները կըարձրանան: Ի հարկէ այդ դէպքում ձեռնտու է սպասել և մի քանի ժամանակից յետոյ լաւ գնով ծախել:

Սակայն ամեն գիւղացի էլ չի կարող սպասել: Եւ ահա հէնց այդտեղ է, որ գիւղատնտեսական ընկերութիւնները նրան օգնութեան են համնում: Հացահատիկի գրաւով, նոքա փոխառութիւն են տալիս գիւղացոց և, վերցնելով նոցա հացահատիկները՝ լցնում են իրենց պահեստները ու սպասում յարմար ժամանակի: Ապրանքը ծախելուց յետոյ իւրաքանչիւր գիւղացի ստանում է իրեն հասանելիք աւելցուկ գումարը:

Որպէս զի ցոյց տրւի այն բոլոր օգուտները, որ գիւղացին ստանում է, երբ իր անտեսութեան մէջ կօօպերացիայի օգնութեան է դիմում, պէտք է իմանալ նաև այն, որ կօօպերատիւ միացումն անհրաժեշտ է և այն ժամանակ, երբ գիւղացիք պարապում են անասնապահութեամբ, թռչնապահութեամբ: Այստեղ էլ միանալով նոքա ստանում են նոյն օգուտները, ինչ որ գիւղատնտեսական ընկերութեան մէջ, այն տարբերութեամբ միայն, որ գործի համապատասխանութեան և նպատակայարմարութեան համար հիմնում են ոչ թէ ընկերութիւն այլ գիւղատնտեսական ընկերութիւններ, թէ ինչ տարբերութիւն

Թէ ինչպէս պէտք է կազմել գիւղատնտեսական ընկերութիւններ ու ընկերակցութիւններ, որտեղից գտնել կանոնադրութիւնները, թէ ինչ տարբերութիւն

կայ այդ երկուսի մէջ, այդ մասին տես 6-րորդ գըշ
լունը:

Գ. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՕՕՊԵՐԱՑԻԱ.

Եթէ կարելի լինէր մի կօօպերատիւ ընկերութեան միջոցով և փող պարտք տալ ձեռնուու պայմաններով, և գնել, և ծախել ամեն մի բան, սկսած գիւղանտեսական մեքենաներից մինչև կոշկեղէնը, շորեղէնն ու ծխախոտը, այն ժամանակի հարկէ մի կօօպերատիւ մի գիւղի համար բաւական կլինէր, նա ամեն ինչ կանէր:

Բայց մինչև հիմա ոչ մի տեղ դեռ այդպիսի ընկերութիւն չկայ: Մեր օրէնքների համաձայն, հէնց փորձի հիման վրայ էլ, այդ ծառայութիւնները անում են առանձին կօօպերատիւ ընկերութիւնները, ամեն մի տեսակ կարիքի համար հիմնում է առանձին ընկերութիւն: Այսպէս օր. մեր օրէնքի համաձայն, գիւղանտեսական ընկերութիւնը, առանց ըշբաղման տուրք (Промысловый налогъ) վճարելու, կարող է ծախել իր անդամներին միայն այն բաները, ինչ որ նոցա պէտք են գիւղական տնտեսութիւնը վարելու համար: Իսկ եթէ ուրիշ բան էլ ծախելու լինի, նա պիտի վերցնի առետրական վկայական (патентъ) ինչպէս բոլոր միւս վաճառականները:

Ահա այդ կարիքն էլ բաւարարութիւն է տալիս գիւղական կօօպերացիայի երրորդ տեսակ գիւղական սպառողական լինկերութիւնը:

Գիւղական կեանքի թանգութիւնն է, որ ստիպում է հիմնել սպառողական ընկերութիւններ:

Կեանքը հիմա էլ թանգ է, բայց օրէց օր աւելի գժւար է դառնում զլուկ պահելը: Կենսական, ան-

հրաժեշտ առարկաները արագ ու խիստ կերպով թանգանում են:

Ինչ կուզես արա, բայց ուտել պէտք է: Մի փուլք ալիւրի համար միշտ չի լինում քաղաք գնալ և, ակամայից, աւելի գնով առնում ես քո «հարկան» նպարավաճառից: Իսկ նա գիւղում - ոյժ է: Գիւղում եղած աւել կոպէկը նա ձեռքից բաց չի թողնի:

Գիւղացիք իրենք էլ տեսնում են թէ ուր է հալում գնում իրենց փողերը. գիւղում լաւ են հասկանում, որ գրոշանոց բանը ծախում են իրենց չըլաւած գներով: Արիւն ծծող, սզրուկներ են անւանում խանութպաններին, նստում իրենց գառն օրն լաց լինում ու չեն իմանում, որ միանալով միմեանց հետ նոքա կարող են խանութպանների կեղեքումներից ազատել:

Այդ միջոցն է ահա կօօպերատիւ սպառողական ընկերութիւնը: Բոլոր գիւղացոց էլ պէտք է ամենօրեայ սպառուման, գործածման համար թարմ և արժան ապրանք: Նոքա չեն ուզում ոչ ոքի աւելորդ մի կոպէկ տալ և հասկանում են ընդհանուրի համար կոպէկ տալ և հասկանում են ընդհանուրի համար գումարով գնելու օգտաւէտութիւնը: Այդ նպատակների համար է, որ բացում են գիւղական սպառողական խանութներ:

Ի՞նչ օգուտներ կարող է տալ իր անդամ-տէրերին սպառողական խանութը: Շատ մեծ և տարբեր նախ և առաջ դա էժանացնում է խանութից գնողների ապրուստը: Ընկերութիւնը գնում է մեծ դումարի ու քանակութեամբ ապրանք, և այդ պատճառով էլ կարող է ամեն ինչ ծախել շուկայի միջին գնով, այսինքն մասրավաճառների գներից շատ աւելի ցած գնով: Ընկերութիւնը աւելորդ փող չի վը-

ճարում գիւղական դալաներին, և սպառողական խանութը դրա համար էլ կարիք չունի դրանց տւածը ապրանքից դուրս բերել և գների վերայ դալ, ինչպէս որ այդ անում են խանութպանները:

Եւ վերջապէս որովհետև բոլոր անդամները հէսց իրենք խանութիւ տէրերն են, ուստի և սպառզական խանութը ոչ ոքի խարելու կարիք էլ չունի: Նա փրչացած ապրանքը չի ծախիլ. և երբ գիւղացին զնայ սպառզական խանութ՝ նա համոզւած կլինի, որ աշխարի մէջ կիր չի խառնած, իսկ բրինձի մէջ աւագ:

Ընկերութեան օգնութեան շնորհիւ սպառողական խանութը արագ կերպով ուժեղանում է ու առանձին խանութների առևտուրը կտրում: Վերջիններիս մնում է՝ կամ իրենց գործը ուրիշ տեղափակութել և կամ՝ փոխանակ փթած ապրանքը գիւղացու վզին կապելու, աւելի ազնիւ ու մաքուր զբաղմունք դանել իրենց համար:

Եւ եթէ անդամները ամեն ինչ իրենց խանութում են գնում, արագութեամբ զարգանում ու առաջէ գնում «ընկերութեան խանութը», շուտով մինչև իսկ վաստակ էլ է մնում: Այստեղ էլ բանից դուրս է գալիս, որ խանութը ոչ միայն էժանացրել է ապրուստը և լաւացրել ապրանքը, այլ և մի քանի ուրիշ բան էլ է արել: Կեանքն արդէն ցոյց է տւել, որ ամեն սպառողական խսնութ, եթէ գործը լաւ է տարւում, կարող է որոշ վաստակ տալ բոլոր զնողներին և շատ ուրիշ տեսակի օգուտներ ու ծառայութիւններ անել:

Մանր խանութպանի ջանքերը ուղղւած են ամբողջովին՝ որքան կարելի է մեծ վաստակ ստանալու:

Իսկ ստացած վաստակը նա դորձավրում է այնպէս, ինչպէս իր սիրան ուզում է:

Իսկ երբ սպառողականի խանութին վաստակ է սահմանվ, դրանից օգտում է ոչ քէ մէկը, այլ բոլոր անդամները, այն բոլոր գնողները, որոնք իրենց առած —զիածով պահպանել են այդ խանութը։ Տարւայ վերջը հաշիւ են տեսնում —ով ինչքան ապրանք է զնել — եւ տարած գումարի համաձայն իւրաքանչյուրին հասնում է վաստակի համապատասխան բաժինը։

Անդամների ցանկութիւնից է կախւած այդ գումարը իրար մէջ բաժանելը: Բայց առհասարակ այդպէս չի արւում, սովորաբար այդ փողի մի մասն են վերցնում, իսկ միւս մասը թողնում են խանութիւ բարգաւաճման ու շըջառութիւնը մեծացնելու համար: Անդամների չնշին մասնիկներից կազմում է բաւականին խոշոր գումար: Այդ գումարներով խանութին կից հիմնում են գրադարաններ, ընթերցանութիւն, դպրոցներ: Իսկ երբ փողը շատանում ու մեծ գումարների է հասնում, շինում են իրենց սեփական կօպերատու արհեստանոցներ, այսինքն, այսպիսի արհեստանոցներ, գործարաններ և այլն, որոնց տէրը իրենք բոլորն են և ոչ թէ մէկ գործառէր — շահագործող:

Մի խօսքով, երբ մի տեղ հիմնում է սպառզական կօօպերատիւ խանութ, և եթէ գործը հէնց սկըզբից լաւ է տարւում, բնակչութիւնը հեշտութեամբ ըմբռնում է նրա օդաւէտութիւնը, խնամքով ու գուրզուրանքով է վերաբերում նրա յետագայ գոյութեան:



Դ. ԱՐՏԵԼՆԵՐ
(համարհեստաւորների միութիւն)։

Վերջապէս գիւղացիք շատ տեղերում պարապում եմ ոչ միայն երկրագործութեամբ, այլ և արհեստներով։ Շատ գիւղերում տարածւած են տնայնագործական արհեստներ, խւզագործութիւն։

Տնայնագործական գործւածքներ հաւաքոդները, նաև կաթ, իւղ հաւաքոդները բոլորի համար անհրաժեշտ, բայց և առելի «բարեգործներ»—խնամողներ են։ Գիւղացիութեան մեծ մասն մինչև հիմա էլ այդ օժանդակիչ զբաղմունքներով պարապում է միմիանցից անջառւած, իր ընտանիքով։ Մասակարարիչը ընտանիքից առնում է ապրանքը ու նշանակում իր ենթը կտրած ողորմելի գինը—ինչ կարող ես անել, ընտանիքը պէտք է ապրի, չհամաձայնես, պիտի գնաս դռնէ դուռ ողորմութիւն հաւաքես։

Առելի վատ է այն տնայնագործ—գիւղացիների ու խւզագործութեամբ պարապողների գրութիւնը, ու որոնց տապիս է հաւաքողը իբրև «բարերարութիւն» իր սեփական գործիքը՝ զինը «հատուցանելու» պայմանով։ Ամբողջ տարիների ընթացքում գիւղացիք վճարում են այդ գործիքի արժեքը և էլի բարերարին պարագ են մնում։ Այստեղ ևս կարիքն ստիպում է դիմել կօօպերացիայի օգնութեան։

Այդ նպատակի համար գիւղացիք հիմնում են կօօպերատիւ ընկերութեան մի ուրիշ տեսակը, որը ուսւելէն լեզով արտել է կոչւում, որ հայերէն կնշանա-

կի համարհեստաւորների, «համքարների» միութիւն։

Արտելը այնպիսի կօօպերատիւ, այսինքն ընկերակցական միութիւն է, որի անդամները գործի յաջողութեան համար համաձայնուում են չպատրաստել որևէ մի գործւածք առանձին, անջատ, այլ բոլորը միասին մի ընդհանուր արհեստանոցում և ընդհանուր գործիքներով։

Այդպիսի միացեալ, ընկերակցական աշխատանքը հետեւալ օգուտներն է տալիս։

Արտելը գնում է հում նիւթը միանդամից, գումարով բոլոր անդամների համար, այդ պատճառով ապրանքը առելի աժան է նստում, քան եթէ ամեն մէկը առանձին գնէր։

Բացի այդ բոլոր արհեստակիցները աշխատում են մի ընդհանուր արհեստանոցում, ուրեմն և շահուում են ընակարանի վարձից։

Արտելի արհեստանոցի համար գործիքներ էլ քիչ է հարկաւոր։ Այստեղ գրանով բոլորն են աշխատում։ դա էլ մի օգուտ։

Իսկ ամենից գլխաւոր օգուտը նրանում է, որ արտելը իր պատրաստած գործւածքները գումարով կարող է ծախել, առանց հաւաքողին դիմելու, շատ առելի ձեռնտու գնով։ Առանձին գիւղացիք ոչ մի հնարաւորութիւն չունեն ձեռնտու գնող գտնելու, հէսց այն պատճառով, որ իբրենց պատրաստած գործւածքները քիչ են լինում քանակութեամբ։

Առանձնապէս կարևոր է այդպիսի միութիւնը խւզագործութեան համար։

Անջատանջատ ձեռնտու չի կաթը վերամշակել։ Իսկ միացած վերամշակման ժամանակ իւղագործու-

թիւնը կարելի է գարձնել զիւղական ամենաշահաւելաց աղբիւներից մէկը:

Թուսատանի շատ տեղերում, Սիրիում, Կուրանի շրջանում արդէն հարիւրաւոր զիւղական տընտեսութիւններ լաւ գնահատել են այդ գործում կօօպերատիւ նշանակութիւնը և հիմնել են իւղագործութեան արտելներ:

III

ԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՊԸ.

Այսպէս ուրեմն, ծանօթանալով կօօպերացիայի հետ և խմանալով՝ թէ ամեն մի դէպքում, որ կարիքի համար, ինչ տեսակ կօօպերատիւ ընկերութիւն է իւրեն պէտք, զիւղացին հիմա արդէն զիտէ իր ինքնապաշտանութեան այն միջոցներից մէկը, որով կարելի է կուել զիւղական տնտեսութեան ճնշիչ ու խառնաշփոթ պայմանների դէմ:

Ինչպէս արդէն վերել յիշեցինք, ներկայումս գոյութիւն չունի այսպիսի մի կօօպերատիւ ընկերութիւն, որը կարողանար պաշտանել զիւղացոց բոլոր չարիքներից ու դժբաղութիւններից: Եղել են փորձեր բարդ կօօպերատիւ ընկերութիւններ կազմելու, բայց այդպիսի փորձերը շատ քիչ են: Աւելի լաւ է մի կարիքից պաշտանել լաւ կերպով, քան բոլորից — վատ, ասում են իրենք զիւղացիք, և իւրաքանչիւրը ընտրում է իր համար այնպիսի կօօպերատիւ ընկերութիւն, որը աւելի սրտով է գալիս և կամ աւելի կարեոր է իր գործի համար:

Վերցնենք այսպիսի մի օրինակ: Եթէ մի զիւ-

շում չի զգացւում խիստ կարիք սպառողական խանութիւններու, այն իսկ պատճառով, որ իրենց արնատեսութեան համար բոլոր անհրաժեշտ իրերը իրենք տանը պատրաստում են, պարզ է որ տեղական զիւղացիք մեծ կարիք չունեն սպառողական ընկերութեան, և եթէ հիմնելու էլ լինի կօօպերատիւ խանութ, կարող է զրանից ոչինչ էլ դուրս չգալ:

Իսկ եթէ կարիք է զգացւում տնտեսութեան համար փոխարինութիւն, պարտք անել, այստեղ արդէն պարզ է, որ այդպիսի զիւղում պէտք է բացել վարկի կամ փոխատութիւնայի կօօպերատիւ ընկերակցութիւն և հէնց զրանից էլ պէտք է սկսել:

Երբ գործը լաւ գնայ և զիւղացիք համոզւեն, որ կօօպերացիան օգտաւէտ բան է, կ'հիմնեն ուրիշ տեսակի ընկերութիւններ էլ. և սպառողական, և զիւղատանտեսական ընկերութիւններ: Մի երրորդում — զիւղատնտեսականից: Չորրորդում — արտելից:

Իսկ ուրիշ զիւղերում, ընդհակառակը, ձեռնտու է տնտեսութեան մէջ կօօպերացիա գործադրելը սկսել սպառողական ընկերութիւններ: Մի երրորդում — զիւղատնտեսականից: Չորրորդում — արտելից:

Գիւղացիք՝ ապագայ կօօպերատորները պէտք է այդ բոլոր դէպքերը լաւ կշռադատեն և ապա ընտրեն այն կօօպերատիւ ընկերութիւնը, որ իրենց ներկայումս ամենից աւելի կարեւոր է: Լաւ պէտք է իմանալ, որ միայն այն կօօպերատիւներն են յաջողութիւն ունենում, որոնց կարիքը զգում ու հասկանում են բոլորը:

Մի բան միայն անկասկած է. Երբ մի տեղ կօօպերացիան փոքրիկ արմատ է զցել, էլ երբէք այստեղից չի անհետանալ:

Երա օգուտները հեշտութեամբ ակնյայտնի է

դառնում: Նա շուտով աճում, շուքատարած ծառ է դառնում և բոլորին էլ իր պառազները տալիս:

Եւ խսկապէս, երբ մի տեղ, նոյնիսկ մի քիչ, հիմնում է վարկի կօօպերացիա, այնտեղ գիւղացոց մէջ ցանկութիւն է ծագում հիմնել նաև գիւղատնտեսական ընկերութիւն, որպէս զի վարկի ընկերութիւնից վերցրած փողը լաւագոյն կերպով գործադրեն:

Եւ ընդհակառակը, երբ մի տեղ սկզբից բացւել է գիւղատնտեսական ընկերութիւն, այնտեղ արդէն չի կարելի չ'հիմնել նաև վարկինը: Շուտով պէտք է լինում բացել նոյնպէս և սպառողական:

Մի խօսքով, որ կողմից էլ որ նայես կօօպերատիւ ընկերութիւններին, նոքա բոլորն էլ գիմում են մի նպատակի: Նոքա բոլորը հիմնում են ոչնչացնել ու տնտեսական շատ խանաշփութիւններ ու կարիքներ և բոլորն էլ ծագումով նման են միմեանց:

Այն տեղերում էլ, որտեղ միասին հիմնում են և՝ սպառողական և՝ վարկի և՝ գիւղատնտեսական ընկերութիւններ—այդտեղ էլ նոցա մէջ անխուսափելիօրէն առաջ է գալիս բարեացակամ և՝ անձնական և՝ գործային կապ:

Վարկի ընկերութիւնը օգնում է գիւղատնտեսականին փոխառութիւն տալով: Գիւղատնտեսականը իր կողմից նպաստում է, որ վարկի ընկերութիւնի բացթողած փողերը գիւղացիք գործադրեն խելացի և լաւ կերպով, հնարաւորութիւն տալով այդպիսով իր ժամանակին վերադարձնել պարագերը: Սպառողական խանութը գնում է գիւղատնտեսականից գիւղական մթերքներ և այն: Աւելորդ է ասել, որ համարեա միշտ այդ բոլոր ընկերութիւնների անդամները միւնոյն մարդիկն են:

IV

ԿՈԶՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՀՆ-ՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Վերոյիշեալ տողերից կարելի էր նկատել արդէն, որ զանազան տեսակի կօօպերատիւ ընկերութիւնների օգնութեամբ գիւղացին կարող է կառավարել, տուանց գիմելու վաշխառուի, գալալի ու հաւաքողի օգնութեան, Ամբողջ այն շահը, որ ստանում էին այդ «բարերարները», կողովաելով զանազան հնարքներով բազմաչարչար երկրագործին, նրանց գիզած բոլոր հարստութիւնները, չնորին կօօպերատիւի ընկերութիւնների, մնում են գիւղացու գրանում: Դրա շնորհիւ գիւղացին կարողանում է մի քիչ մարդավայել տպրել և հետեւ է բարելաւել իր տնտեսութիւնը:

Ուրիշ երկրներում արդէն ոչ միայն գիւղացիք են հասկացել կօօպերացիայի բոլոր օգուտները, այլև և հասկացել են այն պետութիւնների կառավարութիւնները, որոնք նակասում են գիւղացոց հիմնելու այդպիսի կօօպերացիաներ:

Որքան շատ են հիմնում մի երկրում կօօպերատիւ ընկերութիւններ, այնքան աւելի ունեոր է դառնում գիւղացի ազգաբնակութիւնը, լաւ մշակում իր հողը, այնքան աւելի լաւանում է բերքը, հարստանում երկրը: Այդ է ցոյց ալիս Արևմուտքի օրինակը:

Գիւղական կօօպերատիւ ընկերութիւնները կարեսը են, նաև այն տեսակէտից, որ՝ կազմելով ընդհանութիւն ժողովներ, հաւաքում են բոլոր գիւղացոց հաւասար իրաւունքներով ու մասնակցել տալիս հասարակութեան գործունէութեան—ընտելացնում են գիւղացոց հասարակական գործունէութեան:

Այն մեծ արգելքը, որին հանդիպում է մեզանում կօօպերացիան—գա ժողովրդի ազիտութիւնն է, անզրագիտութիւնը: Դրագէտ մարդը միշտ աւելի հեշտութեամբ է հասկանում կօօպերացիայի բոլոր օգուաները:


Անա ինչու համար ամեն մի կօօպերատիւ ընկերութիւն ամենից առաջ շահագրգուած է, որպէսզի որքան կարելի շատ լինեն զրագէտ գիւղացիք: Շատ դէպքերում կօօպերացիանները իրենք են փող տալիս դպրոցներին և զրդում են գիւղացոց ուղարկել իրենց որդոց զպրոց: Մի խօսքով ժողովրդական լուսաւորութեան գործը միշտ մօտ է կօօպերացիայի սրախն:

Սակայն, խօսելով կօօպերացիայի բարիքների մասին, այնուամենայնիւ գիւղացի—կօօպերատորները պէտք է ի նկատի ունենան, որ նա ամեննին իր հետ չի բերում երանելի զրախտ:

Ընդհանութ օրէնքները, կօօպերատիւնների գոյութեան ժամանակ էլ մնում են օրէնքներ գիւղի համար: Հարկերը կմնան, ինչպէս առաջ: Իշխանութիւնը, կալւածատէրերը կմնան նոյնը, ինչ որ էին մինչեւ այդ էլ: Այս պէտք է իմանալ, որպէսզի թեթեամտի մէկը յետագայում չտաքանայ ու յուսահատի՝ տեսնելով որ կօօպերացիան չի ոչնչացնում այն բոլորը, ինչ որ իր կեանքի մէջ իրեն դուր չի գալիս:

Նախկին երեսներում ցոյց տրւեց, թէ ինչ օղուտներ կարող են քաղել գիւղացիք իւրաքանչիւր կօօպերատիւ ընկերութիւննից:

Այդ օգուտներն էլ մեծ կլինեն, եթէ համերաշխութեամբ կարողանան օգտւել կօօպերացիայի բարիքներից: Խոկ պահանջել նրանից ծափ կաթ բոլորովին գուր կլինի:



V



Մի ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՍԵՆՔ ԱՅԺՄ ԱՅՆ ՄԱՍԻՐԸ, Թէ Ի՞ՆՉ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԿԱՅ ԿՈՕՊԵՐԱՑԻԱՅԻ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋԸ.

Շատ անգամ ու շատ տեղերում կօօպերացիայի թշնամիներից, շատերը հէնց իրենց արհեստի պատճառով, ինչպէս խանութպանները—գալանները և այլն, մեզագրում են կօօպերացիան նրանում, որ իբր թէ այդ ընկերութիւններում քարոզւում են զանազան միասակար մտքեր, զաղափարներ, և որ հէնց այդ պատճառով էլ այդպիսի ընկերութիւններից բան գուրս չի գալ:

Այդպիսի ասէ-կօօպէների գէմ պէտք է անխնայ կերպով կուել: Դրանից էլ աւելի սուտ ու սխալ բան չի կարող լինել:

Ընդհակառակը, կօօպերատիւի մէջ մտնելու համար, ինչ տեսակի էլ որ գա լինի, սպառողական, թէ գիւղատնտեսական կամ վարկի, հարկաւոր չէ անպատճառ պատկանել մի որևէ է բաղաքական կուսակցութեան:

Պէտք է միայն մի բան. համակրել ու նպաստել ընկերութեան զարգացման գնել, վաճառել և արտադրել նրա միջոցով։ Այս է բոլորը։

Ամեն մի կօպերատիւ ընկերութեան մէջ կողք — կողքի կարող են մնալ ու գործել ամենաանհաշտ քաղաքական հակառակորդներ՝ ամենենին չդիպչելով մէկ — մէկու, միայն թէ նոքա ունենան դէպի կօպերացիան միատեսակ շահ։

Տարբեր բան է, երբ կօպերացիայի մէջ մանում են այսպիսի մարդիկ, որոնք իրենց սնուեսական շահերով հակառակ են կօպերացիային։ Կօպերացիան նոցա ոչ միայն պէտք չէ, այլ և անտառնելի է, որովհետեւ կօպերացիան փրկում է զիւղացիներին նոցա ձանկերից։

Ահա այստեղ է, որ եթէ այդ ուարոնները իրենց շետին նպաստեների համար մանելու մնեն զիւղացիական կօպերատիւ ընկերութեան մէջ նրան վնասելու համար, համերաժմ աշխատանքը անհնար կլինի. և այդ ոչ թէ քաղաքանութեան պատճառով, այլ այն, որ ՏԵՍԻԵՍԱԼՅԱՆ ՇԱԽԵՐԸ հակաղիր են, այստեղ է ահա որ չէ կարող բարեացակամ վերաբերմունք ստեղծել թոյլերի և ուժեղների մէջ։ Իսկ երբ չկայ ընդհանուր սրտացաւ վերաբերմունք և միատեսակ շահեր, այլ զրա վոխարէն վնասելու յետին մտքեր և հակադիր շահեր, այստեղ արդէն կօպերացիան չէ կարող յաջողութիւն ունենալ



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

VI

Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՐ Է ԲԱՆԱԼ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Գիւղատնտեսական ընկերութեան բանալու ամենաասարակ միջոցն է՝ բանալ ընկերութիւնը «տեղական գիւղատնտեսական ընկերութիւնների ընական (հորմալինայ) կանոնագրութեան» հիման վրայ, որը հաստատւած է Հողագործութեան և Պետական կայքերի նախարարի կողմից 1898 թ. Փետրւարի 28-ին։ Կանոնագրութիւնը ստանալուց յետոյ պէտք է նրա հետ լաւ ծանօթանալը և ապա, համոզւելով որ ընկերութեան բանալը խսկապէս անհրաժեշտութիւն է ներկայացնում, կարելի է ձեռնարկել բանալու ջանքերին։

Դրա համար պէտք է գտնել առնւազն 10 (տասըն) հոգի «հիմնագիրներ», որոնք, լցնելով կանոնագրութեան բաց տեղերը, ստորագրեն կանոնագրութիւնը, նշանակելով լիովին իրենց անունները, հայրական անունները, ազգանունները, կոչումը և բնակավայրը։

Այդ կանոնագրութիւնը կովկասում կարելի է ձեռք բերել «Թիֆլիզի Հայ Գիւղատնտեսական ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻց», «Գիւղատնտեսական խմբագրութիւնից», Կովկ. Գիւղատնտ. Ընկերութիւնից և այլն։

Այդ կանոնագրութեան հետ միասին պիտի խըն-

դիր ներկայացնել տեղական նահանգապետի անունով,
հետևեալ ձեռվ:

(Այս ինչ նահանգի) Պարոն կառավարչին

Այս ինչ անհանգ—նշանակել բոլոր հիմնա-
դիրների անունները, նարանոնները, աղ-
զանոնները եւ նասցեները.

Խ Ն Գ Ի Բ

Մենք ի ներքոյ ստորագրեալներս, ցանկանալով
բացել (յիշել նահանգի, գաւառի և գիւղի անունները)
գիւղում գիւղատեսական ընկերութիւն 1898 թ.
ընական կանոնագրութեան հիման վերայ և ներկա-
յացնելով սորա հետ հիմնելիք ընկերութեան նախա-
գիծը, խնդրում ենք Զերդ Գերազանցութեան թոյլ
տալ բացելու յիշեալ ընկերութիւնը: (Տարէթիւ-
և մասթիւ):

Այս խնդրի տակ պիտի ստորագրեն նոյն տասն
հոգիքը, որոնք ստորագրել են կանոնագրութիւնը:

Խնդրը, կանոնագրութեան նախագծի երկու օ-
րինակի հետ ուղարկում է պատրիքեալ նամակով նա-
հանգապետին:

Խնդրն ու նախագիծը ուղարկելիս, պէտք է ի
նկատի ունենալ, որ դոցանից ոչ մէկի համար չի պա-
հանջւում գերբովի մարկա և ամեն մի պահանջ այդ
մտքով ապօրենի է, որովհետև գերբովի հասոյթի կա-
նոնագրութեան 68 յօդի 4-րդ կէտի հիման վերայ
այդ խնդրագրերը ազատ են գերբային հասոյթից:

Հիմնադիր ժողովը կարելի է գումարել միայն նա-
հանգապետից թոյլտութիւն ստանալուց յետոյ: Գոր-

ծը սկսելիս լաւ կլինի դիմել երես 27-ում յիշած ընկե-
րութիւններից մէկին և խնդրել ուղարկել կօպերացիա-
յի հետ ծանօթ մի անձնաւորութիւն հէնց առաջին իսկ
ժողովին կամ թէ մերձակայ ժողովներից մէկին. սա
կարող է խիստ օգտակար լինել գործի սկզբի համար:

Յամենայն դէպս, պէտք է լիմանալ, որ գիւղա-
տեսական ընկերութեան բացելը միայն այն ժա-
մանակ յաջող կզնայ ու առողջ կ'զարգանայ, եթե
զական գիւղացիք պարզ ու որոշ կերպով զգան նրա
կարիքը: Դրա համար դեռ ընկերութեան բացւելուց
առաջ պէտք է տեղեակ լինել, թէ ինչ կարելի է
սպասել և ինչ չի կարելի սպասել այդ ընկերութիւ-
նից: Հէնց այդ պատճառով էլ ընկերութեան հիմնումն
պէտք է սկսել նախ և առաջ կանոնագրութեան հետ
ուշադրութեամբ ծանօթանալովք և գիւղացիական շըր-
ջանում բազմիցս քննութեան ենթարկելով: Այդ նպա-
տակի համար ստորև ենք գիւղատնաեսական
ընկերութեան բանական կանոնագրութիւնը^{*)}:

Հաստատած է նախարարների կօմիտեանի
գրութեան առաջին կէտի հիման վերայ, ու
հողագործութեան եւ պետական կայքերի նա-
խարարի կողմից 28 տետր, 1898 թ.

ԲՆՍԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Տեղական գիւղատնաեսական ընկերութիւնների
համար.

» . . . Գիւղական տնտեսութեան ընկերութիւն.

^{*)} Հողագործութեան գեպարտամենտը բացագրել է, որ
գիւղատնաեսական գրադարանները, որոնք գործում են 1898
թիւ կանոնագրութեան հիման վերայ, կարող են հիմնել
գիւղատնադրութեան յատուկ թոյլտութեան:

(«Գիւղատնտեսական ընկերութիւն»)

1. Ընկերութեան նպատակը, իրականացնելու միջոցները, նրա իրաւունքները և պարտականութիւնները:

№ 1. Գիւղական տնտեսութեան ընկերութիւնը (Գիւղատնտեսական ընկերութիւնը)
Նպատակ ունի իր գործունէութեան շրջավայրում նպաստել, իր անդամների միացեալ ուժերով, գիւղական տնտեսութեան ու արդիւնաբերութեան զարգացման ու կատարելագործման:

№ 2. Այդ նպատակներին համար ընկերութեան վերապահում է.

1) Ուսումնասիրել գիւղական տնտեսութեան զանազան ճիւղերի գրութիւնը և պարզելու տնտեսական կարիքներն ու պահանջները՝ ենթարկելով ընդհանուրի քննութեան, պարբերաբար հրաւիրած իր անդամների ժողովներում, զրանց վերաբերեալ հարցերը՝ նոյնպէս կազմել էքսպեդիցիաներ ու էկակուրսիաներ (խմբական ճանապարհորդութիւններ գիտական ուսումնասիրութեան և ծանօթութեան համար) — ինչպէս իր անդամների տնտեսութիւնները տեսնելու և գիտելու համար, այնպէս և առհասարակամենայն տեսակ գիւղատնտեսական ուսումնասիրութիւնների համար:

2) Տարածել գիւղատնտեսութեան վերաբերեալ տեսական ու գործնական տեղեկութիւններ՝ հրապարակային ընթերյանութեան միջոցով, տողագրելով ու տարածելով իր աշխատութիւնները, և ամենայն տեսակի գիւղատնտեսական գրւածքներ, իսկ հնարաւոր եղած դէպքում հիմնելով սեփական պարբերական

ժուրնալ, գիւղատնտեսական գովրոցներ, գրադարաններ և մուղեններ.

3) Հոգալ՝ մշակելու տնտեսութիւնը վարելու ամենից կանոնաւոր միջոցներ՝ կատարելով մշակման այնպիսի նոր ձևերի փորձեր, որոնք ընդունած են ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս և Արտասահմանում, տարածելով գոցանից այնպիսիները, որոնք օգտակար կլինեն տեղական տնտեսատէրերին, կազմակերպելով մըցութիւն երկրագործական մեքենաների, գործիքների, մի լծմամբ վարի և այլն, հիմնելով փորձնական կայարաններ, դաշտեր, ագրակներ, պարտէզներ, այգիներ, տնկարաններ և այլն. և նրապատելով յիշեալ հիմնարկութիւնների գործունէութեան՝ ինչպէս իր շրջավայրում գոյութիւն ունեցող ներին, նոյնպէս և յետագայում ծագողներին:

4) Նպաստելով տնտեսատէրերին՝ իրենց տնտեսական ձեռնարկութիւնները կանոնաւոր հիմքերի վերայ գնելով՝ տալով օգտաւէտ ցուցումներ և յանձնարականներ, նաև միջնորդ հանդիսանալ՝ տնտեսատէրերին տնտեսութեան համար անհրաժեշտ իրերի մատակարարման և տնտեսութեան մթերքների վաճառման՝ բացելով այդ նպատակի համար տեղեկատուկօմիսիօնական բիւրօ, գիւղատնտեսական պահեստներ և այլն:

և 5) Կազմել ցուցահանդէսներ, աճուրդներ և քաջալերել գիւղատնտեսական ասպարիզում արած աշխատաւթիւններն ու ծառայութիւնները՝ բաշխելով մեղաներ և այլ պարզնատրումներ:

Նկատողութիւն: Ընկերութիւնը իրաւունք ունի, նախագահի պատասխանատութեամբ, տպագրել առանց նախնական գրաքննութեան այնպիսի գուտ-

տնտեսական հրատարակութիւններ, որոնց հրատարակութիւնը, առանց գործին վկասելու, անյետաձգելի է. ինչպէս, ընկերութեան ժողովների օրագիրները, հաշւետութիւններ, հարցաթղթեր ու ժողովների ծրագիրներ, զանազան տեկելութիւններ, որոնք մտնում են ընկերութեան գործունէութեան շրջավայրերը և այլն, նաև ինչպէս առանձին, նոյնպէս և պարբերական այնպիսի հրատարակութիւններ, որոնք պայմանաւորւում են կազմակերպած ցուցահանդէսների կարիքներով: Ընկերութեան հիմնած պահեստները, որտեղ ծախւելու են երկրագործական գործիքներ ու մեքենաներ, նաև սերմացուներ, արհեստական պարարտանիթեր և այլ գիւղատնտեսական կարիք նիւթեր, Ուդ. Նարկ. կանոնադրութեան 223 յօդ. հիմնա վերայ, չեն վճարում առետրի իրաւունքի համար զրած հասոյթը: Ինչ որ վերաբերում է հրապարակային ընթերցանութեան կազմակերպութեան, համագումարների, ցուցահանդէսների, փորձնական կայարանների, ուսումնական ազգականների ու գիւղատնտեսական գլուզների և պարբերական թերթի հրատարակման, այդ գէտքերում ենթարկում ենթարկութիւն ունեցող կանոններին, պէտք եղած գէտքում անհրաժեշտ թոյլատութիւնը խնդրելով: Ընկերութեան գրադարանները ենթարկում են բարձրագոյն հաստատւած 1884 թ. յունարի 5-ի կանոններին և իրումն դոց ներքին գործոց նախարարութեան հրատարակած այն օրենսդրութիւններին ու կարգադրութիւններին, որոնք վերաբերում են հրապարակային գրադարանների ու ընթերցարանների բացման ու պահպանա: Ընկերութեան մեղաների նկարը հաստատում է հողագործութեան և պետական կայքերի նախարարի կողմից:

№ 3. Իւր գործունէութեան ընդայնման գէտքում ընկերութիւնը, նահանգապետի թոյլատութեամբ, կառող է կազմել իր միջից, իր գործունէութեան վե-

րաբերեալ գործերի համար, յատուկ կօմիտեաներ և իր գործունէութեան շրջավայրում բացել բաժանմունքներ. նոյնպէս նրան վերապահում է իրաւունք՝ աջակցել իւր անդամներին կազմակերպելու ընկերակցութիւններ՝ գիւղատնտեսական մթերքներ արտադրելու և վաճառելու համար, ինքն ևս կարող է հիմնել, օրինական կարգով, նման ընկերակցութիւններ: Տեղական բաժանմունքների, ինչպէս և յատուկ կօմիտեանների իրաւունքները և պարտականութիւնները, որոշում է ինքը ընկերութիւնը բնական կանոնադրութեան սահմաններում: Ընկերութիւնը իրաւունք ունի անկախ կերպով վակելու բաժանմունքները և կօմիտեանները, սակայն թէ վակեման և թէ նոր բաժանմունքների և կօմիտեանների բացման մասին յայտնում է իր գիտութիւնը նահանգապետին և Հողագործութիւնը Դեպարտամենտին:

№ 4. Ընկերութիւնը իրաւունք ունի ձեռք բերել իր նպատակների համար անհրաժեշտ շարժական և անշարժ կայքեր, օրէնքում ցոյց տրւած բոլոր միջոցներով. նաև օտարահաննել (ծախել) և գրաւ զնել իր անշարժ կայքերը և արժէքաւոր թղթերը, կապել պարտագիր պայմաններ՝ վերաբերեալ իր գործունէութեան առարկաներին, ընդհանուր օրէնքների հիման վերայ:

№ 5. Ընկերութիւնը դիմում է Հող. և Պետ. կայք. նախարարութեան իր գործունէութեան շրջանում զգացւած գիւղական տնտեսութեան կարիքների մասին և յարաբերութեան մէջ է մտնում իր գործերի վերաբերմամբ տեղական հիմնարկութիւնների և անձանց հետ:

№ 6. Ընկերութիւնը իրաւունք ունի միջնորդելու Հող. և Պետ. կայք նախարարի առաջ տալ պատւարժան պարզեներ գիւղատնտեսական յատուկ օգտաւէտ գործունէութեան համար:

№ 7. Գիւղ. Տնտ. կանոնադրութեան 32 յօդ. հիման վերայ ընկերութիւնը իրաւունք ունի Հող. և Պետ. կայք. նախարարի թոյլտութեամբ պահել իր նիստերի գահինձում իւր այն անդամների կամ այլ անձանց նկարները, որոնք իրենց աշխատութիւններով առանձնապէս օգտաւէտ են եղել գիւղատնտեսութեան ասպարիզում:

№ 8. Ընկերութիւնը գտնուում է Հողագործութեան և Պետ. կայքերի նախարարութեան տեսչութեան ներքոյ, նրա Հողագործութեան Դեպարտամենտի հսկողութեան տակ, որին և ամեն տարի ներկայացնում է իր գործունէութեան հաշիւը: Այդ հաշումը բացի հաշետարում ընկերութեան գործունէութեան վերաբերեալ տեղեկութիւններից, և բացի այնպիսիներից, որոնց ինքը կարիք է գտում մացնելու, պէտք է զետեղեն 1) ընկերութեան բոլոր անդամների և պաշտօնական անձնաւորութիւնների անւանացուցակը. 2) ընկերութեան գրամագլխի գրութեան և գումարների շարժման վերաբերեալ տեղեկութիւններ. 3) ընկերութեան կից գտնուող հիմնարկութիւնների մասին. տեղեկութիւններ:


№ 9. Ընկերութիւնը ունի իր կնիքը՝ նահանգական հիմնարկութիւնների համար հիմնուած օրինակի ձևով:



II Ընկերութեան ԿԱԶՄԸ

№ 10. Ընկերութիւնը կազմւած է պատւառը, նորասող և թղթակից անդամներից: Անդամների թիւը սահմանափակւած չէ:

№ 11. Ընկերութեան անդամ կարող են լինել, առանց սեռի ու կոչումի խտրութեան, գիւղատնտեսութեամբ պարապող ու հետաքրքրուող ամեն մի անձնաւորութիւն, բացի անչափահամներից (չհաշւած դասային աստիճանն ունեցողները), դպրոցական սամերից, իսկական զինւորական ծառայութեան մէջ գըտնող ստորին աստիճանաւորներից (զինւորներ) և իւնկերներից և դատարանով իրաւունքից սահմանափակւած անձնաւորութիւններից:



III ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ, ՆՈՅԱ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

№ 12. Պատւառը անդամները ընտրուում են տարեկան ընդհանուր ժողովում գաղտնի քէպարկութեամբ, խորհրդի առաջարկութեամբ, ներկայ եղող անդամների ձայների $\frac{2}{3}$ -ի մեծամասութեամբ, այնպիսի անձինք, որոնք յայտնի են իրենց գործունէութեամբ գիւղատնտեսական ասպարիզում և կամ ընկերութեան մատուցած իրենց ծառայութիւններով:

Պատւառոր անդամները ազատուում են անդամավճարից և չեն կրում ոչ մի պարտականութիւններ, բայց այն դէպքերից, երբ կամովին վերցնուում են իրենց վերայ որոշ պարտականութիւններ՝ օգտելով այդ դէպքում իսկական անդամների բոլոր իրաւունքներով։

№ 13. Իսկական անդամները ընտրուում են սուվորական ժողովներում գաղտնի քւէարկութեամբ ձայների պարզ մեծամասնութեամբ, խորհրդի կամ Ընկերեան պատւառոր ու իսկական անդամների առաջարկութեամբ—այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ցանկութիւն են յայտնում պատկանել ընկերութեան կազմին և պատրաստ են տալ կանոնադրութեան մէջ որոշած անդամավճարը։

Նկատողութիւն։ Սոյն կանոնադրութեան նախագիծը ստորագրող անձինք հաշուում են ընկերութեան հիմնադիրներ և մտնում են ընկերութեան իսկական անդամների թրի մէջ առանց քւէարկութեան։

№ 14. Իսկական անդամները ընկերութեան մէջ մտնելիս վճարում են 3 բուրքի և ապա իւրաքանչիւր տարի ընկերութեան դրամարկղը մտցնում են « » բուրքի։ Այն անձինք, որոնք կմտնեն միանւագ « » բուրքի ազատուում են տարեկան վճարից, անւանւելով մըշտական (ցմահ) իսկական անդամներ։ Այս բոլոր վրաճարների քանակը կարող է փոփոխել ինքը ընկերութիւնը։

№ 15. Այն անդամը, որ ընկերութեան որոշած արտօնեալ ժամանակամիջոցի ընթացքում չի վճարի անդամավճարը, հաշուում է դուրս եկած ընկերութիւնից, բայց կարող է նորից մտնել ընկերութեան մէջ առանց քւէարկութեան, վճարելով իր վերայ մասցած ապառիկը։

№ 16. Թղթակից եւ նպաստող անդամներ ընտրուում են նոյն եղանակով, ինչ որ իսկական անդամները այնպիսի անձնաւորութիւններ, որոնք չունեն ընկերութեան դործունէութեան շրջավայրում մշտական ընակավայր, բայց որոնց լուսաւորեալ աշակցութիւնը կարող է օգտաւէտ լինել ընկերութեան այս կամ այն հարցի լուսաբանման խնդրում, նաև արտասահմանեան անտեսատէրեր, որոնք յայտնի են գիւղատնտեսական առաջարիգում իրենց օգտակար գործունէութեամբ (որոնք կարող են նպաստել ընկերութեան նպատակներին՝ տալով ընկերութեան գործունէութեան վերաբերեալ օգտակար տեղեկութիւններ ինչպէս և կատարել ընկերութեան յանձնաբարութիւնները): Թղթակից և նպաստող անդամները պարտաւոր չեն վճարելու անդամավճար։

№ 17. Անդամներ առաջարկուող թեկնածուների մասին պէտք է յայտնել քւէարկելու նախորդ ժողովում։

№ 18. Ընտրուած անդամը ստանում է տեղեկութիւն այդ մասին գրաւոր կերպով խորհրդից, ստանում է նաև սոյն կանոնադրութեան մի օրինակ, մի օրինակ, դրա հիման վերայ կազմած ներքին կանոնադրութեան և ընկերութեան անդամների ցուցակ։

№ 19. Ընկերութեան բոլոր անդամները իրաւունք ունեն մասնակցելու ընկերութեան ժողովներին. պատւաւոր և իսկական անդամները վճռողական ձայնով, իսկ թղթակից և նպաստող անդամները—խորհրդակցական ձայնով. դիմելով ընկերութեան միջնորդութեան զանազան հիմնարկութիւնների և անձնաւորութեանց հետ յարաբերութեան մէջ մտնե-

լու համար, այնպիսի առարկաների վերաբերմամբ, որոնք կապ ունեն զիւղատնտեսական գործունելութեան հետ, և օգտւել ընկերութեան կից հիմնարկութիւններից՝ խորհրդի կազմած և ընդհանուր ժողովում ըմբռնւած ներքին կանոնադրութեան հիման վերայ:

№ 20. Որևէ է անդամին ընկերութիւնից հեռացնելու հարցը որոշում է № 41-ից ցոյց արւած եղանակով:



IV ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ՊԱՇՏՕՆԱՎԱՐՄԱՆ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՆՈՅԱ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№ 21. Ընկերութեան գործերի վարումն յանձնում է Խորհրդին, որը ընտրում է պատւաւոր և իսկական անդամներից: Խորհրդի նստատեղավայրը նշանակում է ի զիտութիւն:

№ 22. Խորհուրդը կազմւած է նախագահից (փոխ, նախագահից), քարտուղարից, գանձապահից և ընկերութեան կողմից որոշած թւով անդամներից: Քարտուղարի և գանձապահի պարտականութիւնները կարող են յանձնել միևնույն անձնաւորութեանը:

№ 23. Պաշտօնական անձնաւորութիւնները ընտրում են տարեկան ընդ. ժողովում գաղտնի քւէարկութեամբ, ներկայ եղող անդամների ձայների պարզմեծամնութեամբ « » տարով: Սակայն հեռանում են պաշտօնից որոշած ներթով, ընկերութեան որոշման կարգով և ոչ թէ բոլորը միանգամից: Նոյն ժողովում ընտրում են նաև փոխանդամներ,

որոնք, Խորհրդի անդամներից մէկի հիւանդութեան կամ երկարատև բացակայութեան դէպքում, փոխարինում են դոցա: Խորհրդի կազմից դուրս եկող անդամները կարող են իրենց համաձայնութեան դէպքում, նորից վերընարւել.

Նկատողութիւն: Խորհրդի կազմում եղած իւրաքանչիւր փոփոխութեան մասին վերջինս անմիջապէս տեղեկացնում Դեպարտամենտին:

№ 24. Պաշտօնական անձնաց ընտրելիս, ներկայ եղող անդամներից իւրաքանչիւր անդամ տալիս է փակ տոմս, նշանակելով ամեն մի պաշտօնի համար իր առաջարկած թիկնածւի անունը. ընտրութեան ժամանակ իւրաքանչիւր թիկնածու քւէարկութան է դրսում ստացած ձայների ներթով. ընտրւած համարում է ամենաշատ ընտրողական ձայն ստացողը, սակայն ոչ պակաս ներկայ եղող անդամների ձայների կիսից:

№ 25. Անկախ սորանից, ընկերութիւնը կարող է ընտրել № 41 ցոյց արւած եղանակով պատւաւոր նախագահ, որը նախագահում է, երբ ցանկանում է, ժողովների ու խորհրդի նիստերին, չստանձնելով սակայն ընկերութեան վերաբերմամբ ոչ մի պարտականութիւն:

№ 26. Խորհուրդը հանդիսանում է ընկերութեան բոլոր յարաբերութիւնների ժամանակ նրա ներկայացնուցիչը. նա ի կատար է ածում ընդհանուր ժողովի որոշումները, կատարում է ծախսերը՝ համաձայն ընդհանուր ժողովից հաստատւած նախահաշւի, և վերջինիս լիազօրութեամբ ու դրած սահմաններում կատարում է այն բոլոր գործողութիւնները, որոնք կապւած են փոխառութիւն կնքելու, ընկերութեան

կօմիսիօնական գործեր վարելու, ձեռք բերելու ամեն տեսակ կայքեր, նաև անհրաժեշտ դէպքերում վաճառելու ու գրաւ գնելու մասնաւորապէս անշարժ կայքեր ու արժէքաւոր թղթեր: Խորհուրդը հաշիւ է ներկայացնում ժողովին ընկերութեան վերաբերող իր բոլոր գործողութիւնների մասին, իսկ տարեկան ընդհանուր ժողովի համար, բացի այդ պատրաստում է մանրամասն հաշւետևութիւն՝ ընկերութեան հաշւետարւայ գործունէութեան, բոլոր մուտքերի ու ծախսերի և ընկերութեան հիմնարկութիւնների ու կայքերի զրութեան մասին, հետևեալ տարւայ նախահաշիւը և իւր ենթադրութիւնները նոյն տարւայ գործունէութեան ուղղութեան մասին:

№ 27. Իր գործավարութեան ընթացքում և դրամարկղի տնօրինման գործում Խորհուրդը դեկավարում է ժողովի կողմից հաստատած հրահանգներով:

№ 28. Խորհրդի նիստերը գումարում են նախագահի որոշած օրերը (սակայն ամիսը ոչ պակառն « « անդամ) և կայացած է համարւում, երբ ներկայ են առնւազն « » անդամ, իշարս որոց և նախագահը:

№ 29. Խորհրդում գործերը վճռւում են բացքւերկութեամբ, ձայների պարզ մեծամասնութեամբ, իսկ հաւասարութեան դէպքում վերակշռութիւնը տալիս է նախագահողի ձայնը (խորհրդի նիստերի օրագրերը վարում է քարտուղարը, իսկ վերջինիս բացակայութեան դէպքում — նախագահի համաձայնութեամբ, անդամներից մէկը, որ և ստորագրում են բոլոր անդամները):

№ 30. Խորհրդի նախագահը հանդիսանում է նաև

ընկերութեան նախագահը, որը հետևում է, որ ինչպէս Խորհրդի, նոյնպէս և ընկերութեան գործունէութիւնը ուղղած լինի սոյն կանոնադրութեան դրած նպատակներին:

№ 31. Նախագահը նախագահում է խորհրդի նիստերին և ընկերութեան ժողովներին, նայում է ներմուծւող բոլոր թղթերը, ստորագրում է արտածելի (գուրս եկող) թղթերը և հետևում է ընկերութեան ժողովների որոշումների ու կանոնադրութեան ճիշտ կատարմանը:

№ 32. Նախագահի օգնականը, նախագահի բացակայութեան ժամանակ, կատարում է նրա բոլոր ոլարտականութիւնները, իսկ երբ ժամանակաւորապէս բացակայում են երկուսն էլ, Խորհուրդը նոյն փոխարէն ընտրում է իր անդամներից մէկին:

Ծանօթ. (Այն կանոնադրութիւնների մէջ, որտեղ չկայ նախագահի օգնականի պաշտօնը, նախագահի բացակայութեան ժամանակ, նրա պաշտօնը կատարում է Խորհրդի անդամներից մէկը (ըստ աւագութեան) ընտրուելով):

№ 33. Քարտուղարը վարում է Խորհրդի նիստերի և ընկերութեան ժողովների օրագրերը, կազմում է ընկերութեան գործունէութեան տարեհաշիւը, նախագահաստում է բոլոր գործերը Խորհրդի նիստերում և ժողովներում վճռելու համար, վարում է գրագրութիւնը և վաւերացնում է ստորագրութեամբ արտածելի թղթերը: Քարտուղարն ու գանձապահը կարող են վարձարութիւն ստանալ, որի քանակը որոշում է ժողովը:

Նկատողութիւն: Ընկերութեան վերաբերեալ բոլոր գրագրութիւնները ու յարաբերութիւնները նաև


հաշւապահութիւնը միուսական կատարութեան սահմանաբում կատարում է ոռւսաց լեզով:

№ 34. Գանձապահը ստանում է քողոր ներմուծւող փողերը և կատարում է ընկերութեան ծախքերը՝ համաձայն նախահաշւի և Խորհրդի որոշումների, նաև փարում է ընկերութեան գանձարկղի ու կայքերի հաշւեառ ժապաւենեալ մատեաները (վաւերացրած նախագահի, քարտուղարի ու Խորհրդի անդամների ստորագրութիւններով ու ընկերութեան կնիքով) համաձայն այն հրահանգների, որ կազմում է Խորհուրդը և հաստատում ընկերութեան ժողովը:

№ 35. Խորհրդի միւս անդամները, փոխադարձ համաձայնութեամբ, բաժանում են իրենց մէջ ընկերութեան վերաբերող միւս պարտականութիւնները, ինչպէս՝ գրադարանի, այլ և այլն հիմնարկութիւնների տեսչութիւնը, եթէ այսպիսի հիմնարկութիւններ գոյութիւն ունեն ընկերութեան կից:

Նկատողութիւն: Ծնկերութեան հիմնարկութիւնների տեսչութիւնը կարելի է յանձնել նաև Խորհրդի կազմին չպատկանող ընկերութեան որևէ է անդամի մինչև անդամ կողմանակի մարդու՝ որոշ վարձատրութեամբ:

№ 36. Իւրաքանչիւր պատւաւոր և իսկական անդամ կարող է ներկայ լինել խորհրդի նիստերին, սակայն առանց ձայնի իրաւունքի:



Վ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ.

№ 37. Ծնկերութեան ժողովները լինում են սովորական և տարեկան:

Նկատողութիւն 1. Երբ ընկերութիւնը հիմնում է, հիմագիրները հրատիրում են առաջին ժողովը, որը, ընտրելով իր միջից նախագահ, մօտաւորապէս, որոշում է ընկերութեան կազմակերպութիւնը անդամավճարի վճարման քանակը, ժամանակամիջոցը, եղանակը, խորհրդի անդամների թիւը, պաշտօնական անձանց ծառայութեան ժամանակամիջոցը և նոցա Խորհրդի կազմից գուրս գալու եղանակը, նոյնպէս և Խորհրդի անդամների այն թիւը, որ անհրաժեշտ է Խորհրդի որոշումները օրինական համարելու, և կատարում է ընկերութեան պաշտօնական անձանց ընտրութիւնը: Այս ժողովի որոշումները կարող են վերաքննել միայն ընկերութեան տարեկան ժողովում, նոյնպէս և ընտրած պաշտօնական անձանց մասին ընկերութեան խորհուրդը անմիջապէս յայտնում է Հոգագործ: Դեպարտամենտին:

Նկատողութիւն 2. Ծնկեր. ժողովի ժամանակի, տեղի ու գրադմունքների առարկաների մասին նախապէս յայտնում է քողոր անդամներին, նոյնպէս տեղական ոստիկանութեան կառավարչին, և թոյլարևում ժողովի քննութեան դնել միայն այնպիսի առարկաներ, որոնք անմիջապէս վերաբերում են կանոնադրութեան մէջ նախատեսնեած ընկերութեան գործունէութեան և որոնց մասին յայտնուած է ոստիկանական կառավարչին:

№ 38. Սովորական ժողովները գումարելում են ըստ կարիքի (Խորհրդի որոշմամբ կանխապէս և ամբողջ տարւայ համար) (առնւազն « » անդամ տար-

ւայ ընթացքում) նոյնպէս վերաքննիչ յանձնաժողովի պահանջով և առնւազն « » անդամի յայտարարութեամբ: Սովորական ժողովները նվիրուում է ընթացիկ գործերի քննութեանը և առասարակ այն բոլոր հարցերին, որ վերաբերում են ընկերութեան գործունէութեանը. նոյնպէս և իսկական, թղթակից և նպաստող անդամների ընտրութեանը:

№ 39. Ժողովը համարուում է կայացած, եթէ ներկայ են առնւազն « » իսկական ու պատւառոր անդամները՝ չհաշւած Խորհրդի անդամներին:

№ 40. Ժողովում գործերը վճռուում են, բացի պատւառոր անդամների ընտրութիւնը և № 41 թրւածները, ձայների պարզ մեծամասնութեամբ, հաւասարութեան դէպքում գերակռութիւն է տալիս նախագահողի ձայնը: Բոլոր անձնական հարցերը, ինչպէս պաշտօնական անձանց և անդամների ընտրութիւնը, անդամութիւնից հետացնելու հարցը և այն, նոյնպէս և (այս ինչ), վճռում են ժողովում գաղտնի քւէարկութեամբ, երբ պահանջւում է այդ ներկայ եղող անդամներ « » մասը:

№ 41. Այն հարցերի վճռման համար, որ վերաբերում են 1) կանոնադրութեան փոփոխութեան, 2) ընկերութեան հիմնարկութիւնների բացման կամ փակման, 3) փոխառութիւն կնքելու և ձեռք բերելու ու ծախելու անհրաժեշտ անշարժ կայքեր, 4) անդամների հետացնելու, 5) ընկերութեան փակման, 6) պատւառոր նախագահի ընտրութեան—պահանջւում է կանխապէս յայտնումն (այսքան ժամանակ առաջ) ընկերութեան բոլոր անդամներին, առնւազն « » ներկայութիւնը

պատւառոր և իսկական անդամների և ներկայ եղող անդամների ձայների $\frac{2}{3}$ ոչ պակաս մեծամասնութիւն: Ժողովի ընդունած կանոնադրութեան փոփոխութեան նախագիծը ներկայացւում է նահանգապետի միջոցով չողագործ. և Պետական կայքերի նախարարութեան:

№ 42. Տարեկան ժողովում, որ գումարուում է « » ամսին, կարգացւում է՝ անցեալ տարւայ հաշւէտուութիւնը ընկերութեան գործունէութեան մասին (վերաքննիչ յանձնաժողովի կարծիքներով և խորհրդի բացարութիւններով), քննութեան է առնւում (և հաստատում) Խորհրդի կազմած գալիք տարւայ նախահաշիւը և տեղի է ունենում պաշտօնական անձանց ընտրութիւն (նոցա փոխարկողների և պատւառոր նախագահի) և պատւառոր անդամների ընտրութիւն: Բացի այս, տարեկան ժողովում կարող են վճռել և այլ հարցեր, ներկայ կանոնադրութեան դրած պահանջների սահմաններում:

№ 43. Նոյն ժողովում ընտրուում է « » անդամից վերաստուգող յանձնաժողով, այն անդամներից, որոնք ընկերութեան մէջ պաշտօններ չեն վարում (նաև այն անդամներից, որոնք ընտրւած չեն խորհրդի փոխանդամներ), վերաստուգելու համար խորհրդի գործունէութիւնը, ընկերութեան հաշիւները, դրամարկղը և կայքերը, նաև ընկերութեան կից հիմնարկութիւնները: Վերաստուգող յանձնաժողովի կարծիք որոշումները՝ Խորհրդի բացագրութիւնների հետ միասին ներկայացւում է կամ մերձաւոր սովորական ժողովին կամ հետևեալ տարեկան ժողովին:

№ 44. Եթէ ժողովում ծագեն այնպիսի հարցեր,

որոնց վճռման համար պահանջւի մանրամասն ու սումնասիրութիւն, դրա համար ընտրում են մի քանի անդամից առանձին յանձնաժողովներ:

№ 45. Հրապարակային ժողովները գումարում են Խորհրդի որոշմամբ. նախադահի հայեցողութիւնից է կախւած թոյլ տալ կողմանակի անձանց առանց ձայնի իրաւունքի միջամտել վիճաբանութեան:

VI Ընկերութեան ՄԽԶՈՑՆԵՐԸ ԵՒ ՆՐԱ. ՊԱՏԱՍԽԱ- ՆԱՏԻՈԹԻՒՆԸ.

№ 46. Ընկերութեան միջոցները, որ կազմւում են՝ անդամափականներից, կառավարութիւնից և հասարակական հիմնարկութիւններից ստացած նպաստներից ու նւիրաւութիւններից, նոյնպէս և ընկերութեան կազմակերպած ձեռնարկութիւնների հասոյթներից, ինչպէս՝ պահեստների, ցուցահանողէնների և այլն — գործադրում են ընկերութեան ընթացիկ ծախսերի համար: Մշտական (ցկեանս) անդամափակարներ մտցնուում են անձեռնմխւելի կամ պահեստի դրամադլմի մէջ, որոնցից օգուելու եղանակը որոշում է ինքը ընկերութիւնը:

№ 47. Եթե գոյութիւն ունի ընկերութեան արւած պարտաւորումների դիմաց պատասխանատւութիւն իրեն պատկանող ամբողջ կայքերով, այդ պատասխանատւութիւնը չի տարածւում այն գումարների վերայ, որ դրւած են նրա վարչութեան ներքոյ՝ յատուկ նպատակների գործադրութեան համար, կողմնակի անձանց ու հիմնարկութիւնների կողմից, նոյնպէս և չի տարածւում անդամների սեփական կայքերի վերայ:

VII Ընկերութեան ՓԱԿՈՒՄՆ

№ 48. Ընկերութեան փակելու մասին կայացած որոշման դէպքում, վերջին ժողովը որոշում է, թէ ինչի պիտի յատկացրւի, ընկերութեան պարտաւորութիւններին բաւարարութիւն տալուց յետոյ, ընկերութեան գումարներն ու կայքերը: Այդ որոշումը ի կատար է ածւում միայն Հողագ. և Պետակ. կայքերի նախարարի թույլաւութեամբ:

№ 49. Ընկերութեան փակման մասին կայացած որոշումը Խորհուրդը յայտնում է նահանգապետին և Հողագ. Դեպարտամենտին և յայտարարուում է նահանգական տեղեկագրի մէջ (թերթում):

№ 50. Ընկերութեան գործունէութեան փաստուքն զաղարման դէպքում նահանգապետը յայտնում է այդ մասին Հողագ. և Պետ. կայքերի նախարարութեան:

№ 51. Եթէ, անկախ նահանգապետին վերապահած իրաւունքից (321 յօդ. Օրէնք. Հաւաք., II հատ. նահանգ. ընդ. հիմն.) փակելու հասարակական ժողովները, նոցա մէջ նկատում է որևէ է բան հակառակ պետական կարգի և հասարակական անապահովութեան ու բարոյականութեան — նահանգապետը անհրաժեշտ գտնի փակել ընկերութիւնը, նա առաջադրում է այդ մասին Հողագ. և Պետ. կայք. նախարարին:

№ 52. Այն դէպքերում, որոնք ներկայ կանոնագրութեան մէջ նախատեսնած չեն, ընկերութիւնը

դեկավարւում է իր գործունէութեան վերաբերող կանոններով, նոյնպէս և կառավարութեան ընդհանուր օրէնսդրութիւններով և կարգադրութիւններով, ինչպէս և ներկայումս գոյութիւն ունեցողներով, նոյնպէս և ապագայում հրատարակողներով:

Գիւղատնտեսական ընկերակցութիւնների բացման եղանակը նոյն է, ինչ որ գիւղատնտեսական ընկերութիւններինը: Ծանօթութեան համար այսուեղ բերում ենք գիւղատնտեսական ընկերակցութիւնների բնական կանոնադրութիւննը:

ՄԱՆՐ ԳԻՒՂԱՑՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԸ.

Հաստատւած փոխ. Հողաշինութեան և Երկրագործութեան Նախարարի օգնականի կողմից 18 նոյեմբերի 1908 թ.

№ 1. . . Նահանգի . . . գաւառի . . . ընկերակցութիւնը նպատակ ունի նպաստելու իր անդամներին՝ 1) ձեռք բերելու գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ առարկաներ, նոյնպէս և վաճառելու գիւղատնտեսական արտադրութիւններ և դոցատեխնիկական մշակման կազմակերպած և ընդհանուր հաշւով պահուող հիմնարկութիւններում և 2) բարելաւելու ընկերակցութեան անդամների տնտեսութիւնները՝ համապատասխան միջոցների միացեալ քննութեան և կատարման միջոցով:

№ 2. Ինչ վերաբերում է հարկերի և ամենայն տեսակ հասոյթների վճարմանը, անշարժ սեփականութիւն ձեռք բերելուն, գիւղատնտեսական արտադրութիւնների մշակման համար բացած գործարաններին ու խանութներին և դոցատանըմանը, ցուցահանդէմների, գրադարանների, գիւղատնտեսութեան վերաբերող ընթերցանութեանց ու զրուցադրութիւնների կազմակերպութեանը, գրքերի ու գրքոյկների տպագրութեանը և այլն, ենթարկում են դոցավերաբերեալ որոշած օրէնսդրութիւններին և կանոններին:

Նկատ. 1 { Վերաբերում է մասնաւորապէս Խունկատ. 2 { սական մի քանի նահանգներին:

№ 3. Ընկերակցութիւնը ունի կնիք իր անւան մակագրութեամբ:

№ 4. Ընկերակցութիւնը իւրաքանչիւր տարի ներկայացնում է Հողաշինութեան և Հողային գըլխաւոր վարչութեան ենթակայ գիւղատնտեսութեան և գիւղատնտեսական ստատիստիկայի բաժանմունքին իր գործունէութեան հաշիւը՝ հաստատւած ընդհանուր ժողովից. բացի այդ, ընկերակցութիւնը պարտաւոր է հաշիւներկայացնել նաև այն հիմնարկութիւններին, որոնցից նպաստներ (սուբսիդիա) է ստանում, որպէս և նահանգապետին: Ընկերակցութիւնը պարտաւոր է իր շրջանառութեան դրամագլուխը տամա հազար (10,000) ըուբլու համելու դէպրում, տպագրել իր հաշւէկշիուր (բալանս) «Վետանիկ. Ֆինանս. Պրօմիշ. և Տօրգովի» թերթում:

№ 5. Ընկերակցութիւնը բացում է իր գործունէութիւնը, երբ ունենում է առնւազն 12 անդամ, իսկ գործունէութեան բացման մասին պէտք է յայտա-

բարւի «Գուրելնս. Վեղօմսս» ում: Ընկերութիւնը համարւում է չկայացած, եթէ կանոնազրութիւնը հաստատելուց մի տարի յետոյ, չի բացել իր գործունէութիւնը: Եոյնպէս և ընկերակցութիւնը համարւում է վերջնականապէս լուծւած, երբ յետադայում նրա մէջ մնան 12-ից պակաս անդամներ:

№ 6. Ընկերակցութիւնը կարող է ի գիմաց իր ներկայացուցիչների լինել անդամ գիւղատնտեսական ընկերութիւնների և այլ խոշոր գիւղատնտ. ընկերակցութիւնների:

№ 7. Ընկերակցութեան անդամ ընտրուում ենք քւէարկութեամբ՝ երկու սեռի հողատէրեր, գիւղացիք, կալւածների կառավարիչներ և կապալառուներ, ուրո՞ք զբաղւում են գիւղատնտեսութեամբ . . . նահանգի . . . գաւառում:

№ 8. Ընկերութեամնը կարող են անդամակցել նաև մանր գիւղատնտեսական ընկերակցութիւններ՝ յանձին իրենց ներկայացուցիչների:

№ 9. Անդամ չեն կարող լինել՝ անչափահամները, բացի դասային աստիճան ունեցողները, դպրոցական սամները, իսկական ծառայութեան մէջ զբանւող զինուորական ցածր աստիճանաւորները (զինուորները) և իւնկերները, նաև դատարանով իրաւունքների սահմանափակութեան ենթարկւածները:

№ 10. Ընկերակցութեան ամեն մի անդամ վըճարւում է տարեկան ըուբին, որից « » մասնաւելացւում է ընկերակցութեան զբամագլիքի վըշայ, իսկ անդամավճարների միւս մասը ծախսուում է ընթացիկ կարիքների վերայ: Վճարած փողերը չեն վերադարձնւում ոչ ընկերակցութեան անդամներին և ոչ էլ նոցա ժառանգներին:

№ 11. Այն անդամը, որ ընդհանուր ժողովի ուրոշած ժամանակամիջոցից յետոյ արտօնեալ մի ամսայընթացքում չի մտցնիլ իր անդամավճարը, հաշւում է ընկերակցութիւնից գուրս եկած: Բացի այդ, ընդհանուր ժողովին է վերապահուում հեռացնել անդամներին՝ ընկերութեամնը դիտաւորեալ կերպով վկաս հացնելու և անվայել արարքների գէպքերում:

№ 12. Ընկերակցութեան անդամները ժողովներին մասնակցում են անձամբ և ունին մի ձայնի իրաւունք:

№ 13. Ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերակցութիւնը կարող է վերցնել առանձին կօմիսսիօնական վճար՝ իր պահեստից զանազան առարկաներ ծախելու ժամանակ, անկախ իր ծախսերի ծածկումից, ինչպէս իր անդամներին նոյնպէս և կողմնակի անձանց, իր անդամների յանձնաբարութեամբ զանազան իրեր բերել տալու և նոցա տնտեսութեան արտադրութիւնների վաճառման գէպքում: Կօմիսսիօնական վճարի քանակը, ինչպէս և նրանից որոշ մաս շրջանառութեան զբամագլիքին կամ ընդհանուր ծախսերին յատկացնելը, որոշում է ընդհանուր ժողովը:

№ 14. Ընկերութեան անդամները կարող են, ընդհանուր ժողովի որոշած պայմաններով, պէտք եղած իրերի զնման ժամանակ, օգտել մաս-մաս վճարելու իրաւունքով:

№ 15. Տարւայ վերջը չծախսւած գումարները գործադրուում են իւրաքանչիւր անդամ ընդհան. ժողովի որոշած չափով՝ շրջանառութեան զբամագլիքի ուժեղացման և պահեստի զբամագլիքի կազմման համար: Իսկ մնացած գումարները ընդհանուր ժողովը կարող է բաժանել անդամների մէջ իրը վերադար-

ձումն՝ համեմատական չափով վերջին տարւայ ընթացքում նոցանից վերցրած կօմիսսիօնական վճարների կամ թէ վաստակի ձևով: Յիշեալ գումարները ընդհանուր ժողովը կարող է յատկացնել տեղական գիւղատնտեսութեան շահերին համապատասխանող հանրօգուտ ձեռնարկների: Շրջանառութեան և պահեստաշիւները պահւում են առանձին:

№ 16. Ընկերութիւնը իրաւունք ունի ընդհանուր ժողովից հաւանութիւն գտած և որոշած պայմաններով, փոխառութիւն կնքել: Այդ փոխառութիւնների և առհասարակ ընկերակցութեան բոլոր պարտաւորութիւնների դիմաց ընկերակցութիւնը պատասխանատու է իր բոլոր շարժական և անշարժ կայքով և բացի այդ միջոցների չբաւելու դէպքում, ընկերութեան անդամները պատասխանատու են իւրաքանչիւրը մինչև իր անդամավճարի եռապատիկ գումարը: Դուրս եկած անդամները չեն ազատում պատասխանատութիւնից, եթէ պարտաւորութիւնը կայացել է իրենց անդամութեան օրով, իսկ նոր մըտածները՝ եթէ պարտաւորութիւնների ժամանակամիջոցը լրացել է ընկերութեան մէջ իրենց մտնելուց յետոյ:

№ 17. Ընկերակցութեան գործերը վարում է վարչութիւնը: Վարչութեան անդամների թիւը, ծառայութեան ժամանակամիջոցը, զբաղմունքների բաժանումն—որոշում և փոփոխում է ընդհանուր ժողովը: Ընդհանուր ժողովն է որոշում նոյնպէս, թէ որ տեսակի գործերն պահանջում են վարչութեան բոլոր անդամների ստորագրութիւնները: յամենայն դէպս բոլոր պարտաւորութիւններն ու պայմանները, որ կապւում են ընկերակցութեան անունից, հաշւէտւու-

թեան մէջ ստորագրւած պիտի լինին վարչութեան ամբողջ կազմի կողմից:

№ 18. Վարչութեան անդամների թիւը պէտք է լինի առնւազն երեք, որոնցից մէկը—նախագահ, որը ընարւում է առանձին և հանդիսանում է նախագահ որպէս ընկերակցութեան այնպէս և վարչութեան:

№ 19. Դրամարկղի վերատեսչութիւնն ու հաշւապահութիւնը պէտք է յանձնւի միենոյն անձնաւորութեանը:

№ 20. Ընկերակցութիւնը իրաւունք ունի, եթէ ցանկանայ, ընտրել ընդհանուր ժողովի որոշած ժամանակամիջոցում պատւաւոր նախագահ այնպիսի անձնաւորութիւններից, որոնք առհասարակ իրաւունք ունին լինել գիւղատնտեսական ընկերակցութիւնների անդամ:

№ 21. Ընկերակցութեան ընդ. ժողովները մենում են տարեկան, յատուկ և սովորական:

№ 23. Տարեկան ժողովները գումարում են իւրաքանչիւր տարի « » ամսւայ ընթացքում, ծառայում են 1) նախագահի, վարչութեան անդամների և փոխանդամների, վերաքննիչ յանձնաժողովի ընտրութեանց համար. այդ յանձնաժողովը պարտաւոր է հետեւեալ տարեկան ժողովից առաջ քննել վարչութեան տարեկան հաշիւր, 2) քննելու ընկերակցութեան անցած տարւայ հաշիւր վերաքննիչ յանձնաժողովի նըկատողութիւններով. 3) ընկերակցութեան գործերի վարման եղանակը որոշելու 4) քննելու համար բոլոր այն հարցերը, որոնք սոյն կանոնադրութեամբ վերապահւած են ընդհանուր ժողովների իրաւասութեանը (№№ 7, 11, 13, 14, 15, 16, 17, 20 և 21):

№ 24. Արտակարգ ժողովները կարող են գու-

մարտել վարչութեան կողմից կամ առնւազն ընկերակցութեան անդամների ^{1/5}-ի պահանջմամբ միայն անյետաձգելի կարիքի ժամանակ և միայն այն գործերի համար, որ համաձայն № 23-ի վերապահւած են տարեկան ժողովներին, կամ այսպիսի հարցերի առթիւ, որոնք վեր են վարչութեան իշխանութիւնից կամ չեն նախատեսնւած ընդհանուր ժողովից նրան՝ տւած հրահանգներում:

№ 25. Սովորական ժողովները գումարւում են միայն գիւղատնտեսական խնդիրների վերաբերեալ զրուցադրութիւնների համար, իսկ վարչական ընտրութիւն ունեցող հարցերի քննութիւնը այդ ժողովներում չի թոյլատրւում:

№ 26. Ընդհանուր ժողովներ գումարում է վարչութիւնը:

№ 27. Տարեկան և արտակարգ ժողովները օրինական են հաշւում, եթէ ներկայ են բոլոր անդամների թւի կէսից ոչ պակաս, իսկ սովորականները — որչափ անդամ էլ որ ներկայ լինին: Եթէ տարեկան կամ արտակարգ ժողովը չկայանայ՝ անդամների որոշւած թւի պակասութեան պատճառով, մի շաբաթից յետոյ գումարւում է հետեւեալ ժողովը, որը օրինական է՝ որքան անդամ էլ որ ներկայ լինին:

№ 28. Տարեկան ընդհանուր ժողովում նախագահում է պատւառոր նախագահը, իսկ նրա բացակայութեան դէպքում, ժողովը ընտրում է իր միջից նախագահ: սակայն ոչ վարչութեան անդամը և ոչ էլ վերաբննիչ յանձնաժողովի անդամը չի կարող ընտրել նախագահ: Միւս ընդհանուր ժողովներում նախագահում է ընկերակցութեան նախագահը:

№ 29. Ընդհանուր ժողովներում հարցերը վճռու-

ում են ձայների մեծամասնութեամբ, ձայների հաւասարութեան դէպքում գերակշռութիւն է տալիս նախագահովի ձայնը:

Իսկ ընկերութեան փակման, կանոնադրութեան փոփոխութեան, վարչութեան անդամների ժամանակից շուտ հրաժարման և անդամութիւնից հեռացնելու հարցերը, որպէս և փոխառութիւն կնքելու հարցը՝ վճռում է ներկայ եղողների ձայների ^{2/3}-ի մեծամասնութեամբ:

№ 30. Իւրաքանչիւր ընդհանուր ժողովի օրւայ և ըննութեան առարկաների մասին կանխապէս յայտնում է մերձաւոր ոստիկանական վարչութեանը:

№ 31. Ընդհանուր ժողովների քննութեան նիւթթոյլատրւում է դարձնել միայն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են կանոնադրութեամբ նախատեսնւած ընկերակցութեան գործունէութեանը:

№ 32. Ընդհանուր ժողովի որոշման մասին փակել ընկերակցութիւնը, վարչութիւնը յայտնում է նահանգապետին և գիւղական տնտեսութեան և գիւղատնտեսական ստատիստիկայի բաժանմունքներին, և յայտարարում է տեղական նահանգական Վեդոմուտի մէջ: Ապա վարչութիւնը նահանգ: Վեդոմուտի միջոցով հրաւիրում է ընկերակցութեան պարտատէրերին և ձեռնարկում է ընկերութեան գործերի լուծմանը, նոյն եղանակով, որ ընդունւած է առհասարակ առևտրական գործերում: միաժամանակ ներկայացնելու է ընդհանուր ժողովին՝ վերջինիս որոշած ժամանակամիջոցում, հաշւէտութիւն լուծման ընթացքի մասին: Պարտատէրերին բաւարութիւն տալուց յետոյ՝ մնացած գումարներն ու կայքերը յատկացւում է վերջին ընդ.

ժողովի որոշած նպատակներին՝ հաստատած հողաշին. և Հողագ. դլաւոր Կառավարչի կողմից:

VII

Ի՞նչՓէՄ ԲԱՑԵԼ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ներկայումս սպառողական ընկերութեան բացման ամենահեշտ ձևն է՝ ընդունել նախարարութեան կողմից դրա համար արդէն հաստատած բնական կանոնադրութիւնը և բացել սպառողական ընկերութիւնը դորա հիման վերայ:

Լաւապէս ծանօթանալով այդ կանոնադրութեան հետ, որը բերում ենք ներքեւում և, գտնելով ապագայ ընկերութեան մէջ մտնել ցանկացող 40—50 մարդ, կարելի է ձեռնարկել ընկերութեան բացման ջանքերին:

Դրա համար Կովկասում «Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւն»-ից պէտք է բերել տալ բնական կանոնադրութեան երկու բլանկ:

Բլանկների մէջ կէտերով նշանակած դատարկ տեղերը լեցւում են հիմնադիրների ստորագրութեամբ: Երբ երկու օրինակներն էլ լեցւած կլինեն միատեսակ, դոցա պէտք է ստորագրեն առնւազն 20 հոգի հիմնադիրներ: Աւելի լաւ է 25—30. ստորագրութիւնները պէտք է պարունակեն իրենց մէջ՝ անուն հայրանուն, ազգանուն, կոչում և մշտական բնակման տեղը:

Մի բլանկի վերայ աջ անկիւնում գրւում է «Проектъ устава» (կանոնադրութեան նախագիծ), միւսի վերայ—«Копія проекта устава» (կանոն-

նախագծի պատճէն) և ապա գրւում է խնդիր հետեւալ բովանդակութեամբ.

Նորին Գերազանցութեան . . . Նախանդի Կառավարչին

Խ Ն Գ Ի Բ

(Անուն, հայրանուն, ազգանուն և քնակառեան վայրը բոլոր ստորագրողների).

Մենք, իներքոյ ստորագրեալներս, (այս ինչ) գիւղի բնակիչներս անհրաժեշտ գտանք հիմնել մեր գիւղում սպառողական ընկերութիւն՝ խնդրիս յարակցւած բնական կանոնադրութեան համաձայն, ուստի և պատիւ ունենք խնդրելու թոյլ տալ մեզ բացել (այս ինչ) սպառողական ընկերութիւնը: (Ամսաթիւ և տարեթիւ):

Խնդրի տակ ստորագրում են բոլոր այն անձինք, որոնք ստորագրել են կանոնադրութեան նախագիծը և նախագծի պատճենը:

Խնդրի վերայ պէտք է կոլցնել երկու գերբովի մարկա 75 կ. արժողութեամբ, իսկ կանոնադրութեան նախագծի ամեն մի թերթին մի հատ 75 կ. մարկա:

Աւելորդ ծախսերի մէջ չընկնելու համար լաւ է ձեռք բերել կանոնադր. տպած բլանկները, որ բաղկացած է միայն երկու թերթից:

Խնդրիը կարելի է ուղարկել պատիրեալ նամակով նահանգապետի անունով, կամ ուղարկել հաւատարմատարի միջոցով: Վերջին դէմքում պէտք է տալ հաւատարմատարին հաւատարմագիր՝ ստորագրած բոլոր նոյն անձանց կողմից, որոնք ստորագրել

Են կանոնադրութիւնը և վաւերացրած պրիստաւի կամ նոտարի կողմից:

Հիմնադիր ժողով կարելի է գումարել միայն նահանգապետից թոյլտութիւն ստանալուց յետոյ:

Խանութ պիտի բացել 200--300 ըուբլի հաւաք-
ելուց յետոյ միայն: Փայը պիտի նշանակել 5 ըուբ-
լուց ոչ պակաս: Մուտքի վճարը 50 կոպ.: Սկզբից և
եթ հիմնադիրները պէտք է խիստ զգոյշ լինեն և չպի-
տի փոքր գումարներով վաճառականական մեծ ձեռ-
նարկութիւնների դիմեն:

Առաջին օրից իսկ, իսկական յաջողութեան հաս-
նելու համար, պէտք է ղեկավարւել քօջիլեան հե-
տեւալ կանոններով:

1. Բոլոր անդամները պէտք է հաւասար իրաւունք
ունենան և լնկերութեան զործերում իւրաքանչիւրը
պիտի ունենայ միայն մի ձայն:

2. Փայերը պիտի բարձր ջինեն, որպէսզի մա-
տելի դարձնեն ազգաբնակութեան ամենասլաքաց
խաւերին:

3. Փայերի քանակը ամեն մի անդամի համար
պիտի սահմանափակ լինի:

4. Վահառել կարելի է միայն կանխիկ դրամով
և ոչ ապառիկ:

5. Պէտք է վահառել շուկայի չափաւոր, միջին
զներով և ոչ թէ ապրանքի առած զներով:

6. Վասակը պէտք է բաժանել ոչ թէ ըստ փա-
յերի քանակի, այլ իւրաքանչիւրի գնած ապրանքի հա-
մեմատ:

Բացի այդ, զործի լաւագոյն տարման հիմնական
սկզբունք պիտի ընդունել՝ նոգասար վերաբերուն:

Դեպի խանութի ծառայողները, աշխատանքի լաւ
վարձատութիւն եւ վայելով վերաբերուն:

Կանոնադրութեան հաստատելուց յետոյ անմի-
ջապէս հիմնադիրները պիտի խնդրով դիմեն տեղա-
կան կազեօննի պալատը՝ ուղարկելու իրենց առեստրի
իրաւունքի վկայական: Խնդրին պիտի կպցնել եր-
կու 75 կոպ. գերբ. մարկաներ:

Ընկերութեան ամենասկզբնական քայլերի համար
ամհրաժեշտ է խմանալ, որ այն սպառողական ընկե-
րութիւնները, որոնց փայերի դրամագլուխը չի հաս-
նում 10,000 ըուբլու պետական զբաղման հարկի 371
յոդ. 10 կէտի հիման վերայ, ազատում են զբաղման
վկայական վերցնելուց: Սակայն ընկերութիւնները
պէտք է վերցնեն վաւերաթուղթ, որը տալիս է ձրի
տեղական կազեօննայա պալատան: Վաւերաթուղթը
տրում է միայն մի տարի ժամանակով: Ստանալու
համար սպառողական ընկերութիւնները իւրաքանչիւր
տարի պիտի յայտագրով դիմեն կազեօննայա պալա-
տին վճարելով 1 ր. 50 կ. գերբային հասոյթ, նոյն
պէս պարտաւոր են ներկայացնել նախկին վաւերա-
թուղթը և ընկերութեան գործունէութեան հաշիւր:

Եթէ ընկերութիւնը գիտաւորութիւն ունի վա-
ճառելու բացի միւս ապրանքներից նաև ծխախոտ,
օղի, գարեջուր, զրա համար պիտի վերցնի առանձին
վճարով վկայական շրջանային ակցիզային վարչու-
թիւնից:

Որպէսզի հէնց սկզբից և եթ ընկերութիւնը կա-
րողանայ գործերը լաւ տանել և պարզ հաշիւ պահել,
պիտի ձեռք բերի մի շարք անհրաժեշտ մատեաններ,
որոնք կարելի է բերել տալ Մօսկվայի սպառողների

միութեան միջոցով (Москва, Сухарева—Садовая, Московскій Союзъ Потребителей).

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒԽՆ.

Ընկերութեան սպատակը, իրաւունքները եւ պարտականութիւնները.

№ 1. . . Սպառողական ընկերութիւնը հիմնւում է այն նպատակով, որ մատակարարէ իր անդամներին, ըստ կարելոյն աժան գնով, կամ չափաւոր, շուկայի գներով, սպառման և տնային գործածութեան համար անհրաժեշտ այլ և այլ առարկաներ, նաև հնարաւորութիւն տայ իր անդամներին ընկերութեան առետրական գործունէութեան վաստակից խնայողութիւն անել:

Նկատ. Ընկերութեան կից, պահանջւած թոյլաւութեամբ և գոյութիւն ունեցող օրէնքների կատարմամբ, կարող են հիմնել այնպիսի հիմնարկութիւններ, որոնց նպատակն է զանազան միջոցներով և ձեռքով բարելաւել ընկերութեան կեանքի նիւթական և բարոյական պայմանները:

№ 2. Համաձայն № 1-ի ցոյց տւած նպատակի, ընկերութեան վերապահումը է իրաւունք՝

ա). Հիմնել սեփական մթերանոցներ ու գործարաններ կամ վերցնել այդպիսիք կապալով՝ սպառման և տնային գործածութեան համար անհրաժեշտ իրեր պատրաստելու, պահելու և վաճառելու համար:

բ) Կապել պայմաններ և պարտաւորութիւններ կողմանակի անձանց ու հիմնարկութիւնների հետ՝ մատակարարելու ընկերութեան սպառման և տնային

գործածութեան համար անհրաժեշտ առարկաներ, նոյնպէս և ընկերութեան շրջանառութեան համար անհրաժեշտ դրամական միջոցների վերաբերմամբ:

գ) Զեռք բերել սեփականութիւն, ընդհանուր հիմքերի վերայ, ընկերութեան նպատակների համար անհրաժեշտ անշարժ կայքեր—և


դ) Սկսել պատշաճաւոր թոյլաւութեամբ, ընկերութեան նպատակներին համապատասխան այլ ձեռնարկութիւններ:

№ 3. Ապրանքների և սպառման առարկաների վաճառութիւն ընկերութեան անդամներին կատարում է կանխիկ կամ ապառիկ. օգտելու պայմանները որոշում է ընդհ. ժողովը:

Նկատ. Այս և յիշած առարկաները կարելի է վաճառել նաև կողմանակի անձանց, միայն կանխիկ, որպայմանները ևս որոշում է ընդհ. ժողովը:

№ 4. Ընկերութիւնը, նրա գործարանները, գրասենեականները, գործակալները ենթարկելում են զիւղիական տուրքերի, առևտրի իրաւունքի համար զրած հասոյթների, մաքսային, գերբային և այլ տեղային ու ընդհանուր հասոյթների վերաբերմամբ բոլոր կանոններին ու որոշումներին, ինչպէս ընդհանուր, նոյնպէս և ներկայումս ընկերութեան վերաբերեալ կայսերութեան մէջ գործողներին, նաև այն բոլորին, որ ապագայում այս առարկայի վերաբերեալ կ'հատարակւեն:

№ 5. Ընկերութիւնը ունի կնիք՝ իր անւան արտայտութեամբ:



ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻԶԱՅՆԵՐԸ.

№ 6. Ընկերութեան միջոցները կազմւած են շրջանառութեան և պահեստների դրամագլուխներից:

№ 7. Շրջանառութեան դրամագլուխը կազմված է

ա. Մուտքի վճարից. (№ 13).

բ. Անդամավճարից (№ 13) և

գ. Փոխառութիւններից, որ կայացնում է ընկերութեան վարչութիւնը, ընդհանուր ժողովի որոշած չափով:

№ 8. Շրջանառութեան դրամագլուխը ծառայում է ընկերութեան առևտրական գործառնութեան և ընթացիկ ծախսերի համար:

№ 9. Պահեստի դրամագլուխը կազմւած է

ա. Ընկերութեան գործառնութիւններից ստացած վաստակի որոշ մասի յատկացումից՝ իւրաքանչիւր տարի (№ 55).

բ. Ընկերութեան կանոնադրութեան և հաշվեմատեանների վաճառումից ստացած գումարներից:

գ. Կոպէկների այն կոտրակներից (մասերից), որոնք դուրս են քցւում վաստակի բաժանման ժամանակ (№ 55 նկատ. 4.)

դ. Պատահական մուտքերից:

№ 10. Պահեստի դրամագլուխը նշանակում է ծածկելու ընկերութեան կրած այն վնասները, որ կարող են տեղի ունենալ ընկերութեան գործառնութեան ընթացքում չնախատեսնեած պատճառներից:

№ 11. Պահեստի դրամագլուխը, ընհանուր ժողովի որոշմամբ, դարձնեում է պետական կամ կառավարութիւնից ապահոված տոկոսաբեր թղթեր և պահեում է ինայողական դրամարկղներում, պետական բանկում, նրա դրամաեակներում ու բաժանմունքներում կամ, պատշաճաւոր թոյլտութեամբ, գահնձատներում։ Պահեստի դրամագլուխի ծախսումն համաձայն իր նշանակութեան (№ 10) կատարում է միայն ընկերութեան ընդհանուր ժողովի որոշմամբ։

ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№ 12. Ընկերութեան անդամ ընդունում են նրանք, որոնք ցանկութիւն են յայտնում ենթարկել սոյն կանոնադրութեան։

Նկատ. 1. Անդամների թիւը չի սահմանաւուած է վակւում ոչ մի թւով։

Նկատ. 2 Ընկերութեան մէջ չեն ընդունում։

ա. Դպրոցների սահմերը.

բ. Իսկական զինւորական ծառայութեան մէջ գործած ցածր աստիճանաւորները և

գ. Դատարանով իրավունքներից սահմանափակած անձնաւորութիւններ։

№ 13. Ընկերութեան անդամ դառնողը մացընում է.

ա. Մուտքի վճար՝ . . . չափով.

բ. Փայ ՝

Նկատ. Փայը կարելի է մտցնել միանգամից, կամ մասմաս ընդհանուր ժողովի որոշած ժամանակամիջոցներում։

№ 14. Փայերի այն թիւը, որ կարող է ունենալ իւրաքանչիւր անդամ, որոշում է ընդ. ժողովը:

№ 15. Իւրաքանչիւր անդամ, ընկերութեան մէջ մանելիս, ստանում է վարչութիւնից ընդ. ժողովի որոշած արժէքով, մի օրինակ կանոնագրութիւն և հաշւէմատեան, որի մէջ նշանակում է՝ անչափ արւած վճարները, նրա տարած ապրանքների արժէքը և գնածի չափով նրան հասանելիք յաւելադրամը և իր փայի չափով դիւիդէնտի մասը:

Նկատ. Իւրաքանչիւր անդամի մի տարւայ ընթացքում գնած ապրանքի քանակը որոշելու համար ընկերութեան հիմնարկութիւններում պէտք է պահւեն առանձին մատեաններ՝ անդամների անձնական հաշիւներով:

№ 16. Ամեն մի անդամ ընկերութեան ընդհ. ժողովներում ունի միայն մի ձայն, անկախ նրա փայերի քանակութիւնից. այդ իրաւունքը ոչ ոքի չի կարելի ընձեռնել (տալ):

Նկատ. 1. Ընկերութեան անչափահաս անդամները ընդհ. ժողովներում ձայնի իրաւունք չունին և չեն կարող ընտրւել ընկերութեան գործերի վարման ոչ մի պաշտօնի մէջ:

Նկատ. 2. Այն անդամները, որոնք անմիջապէս շահագրգռած են որևէ մի հարցում (ապրանքների մատակարարման, շինութեան վարձման և առևտրական գանագան պայմանաւորումների մէջ) չեն մասնակցում դոցա վճռման ժամանակ:

№ 17. Փայերը կարող են ընձռնւել (տրւել), վարչութեան գիտութեամբ, ինչպէս ընկերութեան միւս անդամներին, նոյնպէս և անդամ լինելու իրաւունքից չըրկւած կողմնակի անձանց. կողմնակի անձնաւորութեան տալու դէպքում, վերջինը պարտաւոր է մուտքի վճարը մտցնել:

Նկատ. Անդամների մուտքի վճարը չի վերադարձնում ոչ նոցա կամովին հեռանալու դէպքում և ոչ էլ ընկերութիւնից հեռացնելու ժամանակ:

№ 18. Իւրաքանչիւր մի անդամ, վսասի ժամանակ, պատասխանատու է միայն ընկերութեան դրամարկղում գտնւած իր փայերի չափով, գորանից բացի նա չի կրում ոչ անձնական պատասխանատութիւն և ոչ էլ լրացուցիչ ընկերութեան վերաբերեալ այլ պարտաւորութիւններ:

№ 19. Այն անդամը, որ ճշտապահ չի լինի ընկերութեան վճարելիք իւր վճարումների վերաբերեալ, (№№ 3 և 13) կարող է վարչութեան առաջարկով և ընդհ. ժողովի վճիռով հեռացնել ընկերութեան անդամութիւնից:

№ 20. Բայցի վճարի անձշտապահութիւնը, հեռացման պատճառ կարող է ծառայել նաև կանոնադրութեան յամառ խախտումն և ընկերութեան շահերին մնաս պատճառելը:

№ 21. Անդամութիւնից հեռացնելու որոշումը պիտի կայանայ ընդհ. ժողովի ներկայ եղող անդամների ձայների $\frac{2}{3}$ -ով (№ 31), որը պարտաւոր է, հեռացւող անդամի ցանկութեան դէպքում, լսել կանխապէս վերջինիս բերած արդարացման վաստերը և բացարձութիւնները:

№ 22. Ինչպէս հեռացւող, նոյնպէս և կամովին հեռացող անդամները, նաև մի քանի փայ ունեցողները, կարող են յետ ստանալ վարչութիւնից ընկերութեան դրամարկղում գտնւած իրենց պատկանեալ փայերը և հասանելիք դիվիդենտն ու յաւելադրամը ըստ գնած ապրանքի քանակութեան, կամ

իրենց փայտաժինները՝ տալով դրա համար յայտագիր, միայն այն ժամանակ, երբ ընդհ. ժողովը արդէն հաստատած լինի նոյն տարւայ հաշիւը և միայն այն դէպքում, երբ նոքա վերջացնեն ընկերութեան հետ ունեցած իրենց հաշիւները, նաև ֆնասի դէպքում իրենց փայերի վերայ ընկնող ընկերութեան վընասների վճարումից յետոյ: Յետ տրման ժամանակամիջոցը որոշում է ընդհ. ժողովը, սակայն այդ ժամանակամիջոցը չպիտի անցնի Յ ամսից:

№ 23. Այն անդամները, որոնք հեռացել կամ հեռացւել են ընկերութիւնից վճարումի անձաւապահութեան համար, կարող են նորից ընդունել, համաձայն № 13-ի վճարելով: պարտաւորեալ փայը և մուտքի վճարը. իսկ այլ պատճառներով հեռացւածները ոչ մի դէպքում նորից չեն ընդունում ընկերութեան անդամ:

Նկատ. Անձաւապահութեան պատճառով հեռացրւած անդամները, յետ ընդունելու դէպքում, պարտաւոր են, բացի այդ, վճարել ընկերութեան իրենց պարտերը:

№ 24. Անդամի մահւան դէպքում, նրան պատկանեալ փայերը և հասանելիք դիւիդենան ու յաւելազրամը, ըստ գնած ապրանքի քանակութեան, տըռում է ժառանգներին նոյն հիման վերայ, ինչ որ կամովին դուրս եկողներին (№ 22):

Ընկերութեան գործերի վԱՐՈՒԽՄՆ.

№ 25. Ընկերութեան գործերը վարում են.

ա) Անդամների ընդհանուր ժողովը, —և

բ) Վարչութիւնը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

№ 26. Ընդհանուր ժողովին վերապահում է իրաւունք, եթէ նա անհրաժեշտ է գտնում ընտրել, վարչութիւնից զատ . . . որի գործունէութեան կարգը որոշում է ընդհ. ժողովը՝ տալով դրա համար անհրաժեշտ հրահանգներ:

27. Ընդհ. ժող. լինում են սովորական և արտակարգ: Սովորական ժող. գումարում է վարչութիւնը, ոչ ուշ ապրիլ ամսից քննելու և հաստատելու անցեալ տարւայ հաշիւն ու հաշւէկշիւը (բալանս), եկող տարւայ ծախսերի նախահաշիւը և գործունէութեան պլանը, նոյնպէս և վարչութեան (№ 36) և վերաքննիչ յանձնաժողովի (№ 53) անդամների ընտրութիւնը: Այս ժողովներում քննուում և վճռուում են այն հարցերը, որոնք բարձր են վարչութեան իրաւասութիւնից, և կամ այնպիսիները, որոնց կառաջարկի ընդհ. ժողովին վարչութիւնը:

Նկատ. Ընկերութեան ոչ մի անդամ իրաւունք չունի հրաժարել, առանց յարգելի պատճառի, ընդհ. ժողովի կողմից նրա վերայ դրած պարտականութիւնները կատարելուց:

№ 28. Արտակարգ ընդհ. ժող. հրաւիրում է վարչութիւնը կամ իր հայեցողութեամբ, կամ վերաքննիչ յանձնաժողովի և կամ ընկերութեան բոլոր անդամների . . . մասի պահանջով: Վերաքննիչ յանձնաժողովի կամ անդամների ժողով գումարելու պահանջը պիտի ի կատար ածւի վարչութեան կողմից ոչ ուշ, քան ելք կու շաբաթ, դիմումից յետոյ:

№ 29: Բնդհանուր ժողովը վճռում է համաձայն այս կանոնադրութեան, բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են ընկերութեան գործերին, սակայն մշտապէս նրա վարչութեան ներքոյ գտնուում են հետևեալ հարցերը. որոշումները՝ ընկերութեան գործառնութեան առարկաների և չափերի, ընկերութեան համար անշարժ կայքերի ձեռք բերելու, ընկերութեան պատկանող այդպիսի կայքերի ծախելու, կապալով տալու, զրաւ դնելու, ինչպէս և ձեւնարկութեան ընդլայման վերաբերեալ: Բնդհանուր ժողովին է վերապահւում ձեւնարկութեան ընդլայնման և անշարժ կայքեր ձեռք բերելու դէպքում որոշել այն եղանակը, որով պիտի հանդցրվին արած ծախսերը: Բնդհ. ժող. զբաղման առարկաներին է պատկանում նաև բոլոր այն հարցերի վճիռը, որ կառաջարկեն նրան վարչութիւնը, վերաքննիչ յանձնաժողովը, ընկերութեան առանձին անդամները, նաև հանդապետը, ներքին գործոց նախարարը:

Նկատ. Բնդհանուր ժողովներում կարող են քննուել միայն այն հարցերը, որոնք նշանակւած են ժողովի հրաւիրաթղթերի մէջ, որ կառ ունեն կանոնադրութեամբ որոշած ընկերութեան անմիջական գործունէութեան հետ և սրանց մասին յայտնուած է տեղական ստիկանութեան կառավարչին:

№ 31. Բնդհ. ժողովը օրինական լինելու համար պահանջուում է, որ ներկայ լինեն առնւազն « » ընկերութեան այն անդամների, որոնց ընակավայրը գտնուում է ընկերութեան վարչութեան տեղում: Իսկ ընկերութեան անդամութիւնից հեռացնելու, ձեւնարկութեան ընդլայնման, շրջանառութեան զբաղմագլխի շատացման կամ քչացման, կանոնադրութեան փոփոխման և լրացման, նաև ընկերութեան գործերի

վերջնական լուծման հարցերի որոշման համար պահանջւում է, որ ներկայ լինեն անդամների ընդհանուր թւի « » մասը: Բնդհ. ժողովում հարցերը վճռուում են ժողովին ներկայ եղող անդամների ձայների մեծամասնութեամբ, բացի վերոյիշեալներից, որոնց վճռման համար պահանջւում է ներկայ եղողների ձայների $\frac{2}{3}$ մեծամասնութիւն: Պարզ մեծամասնութեամբ հարցերի որոշման ժամանակ, ձայների հաւասարութեան դէպքում, ընդունուում է այն կարծիքը, որի հետ համաձայն է նախագահը:

Նկատ. 1 Բնդհ. ժող. կայացուղ բոլոր ընտրութիւնները (№№ 36 և 53), նաև № 21-ի հիման վերայ անդամութիւնից հեռացնելու հարցերը որոշուում են գաղտնի քէարկութեամբ, միւս հարցերի վերաբերմամբ ձայնառութեան եղանակը որոշուում է ընդհ. ժողովը:

Նկատ. 2 Բնդհանուր ժողովի ընդունած, պահպանելով № պահանջւած պայմանները, ներկայ կանոնադրութեան փոփոխման կամ լրացման վերաբերեալ որոշումները ներկայարւում է կառավարութեան հաստատութեան ընդունուած եղանակով, յարակցեալ այն պատճառների և դիառումների, որոնք անհրաժեշտ են դարձնում այդ փոփոխութիւններն ու լրացումներն:

№ 32. Եթէ ժողովը ներկայ եղող անդամների թւի կողմից բաւարարութիւն չի տալ նախորդ № յիշած այն պայմաններին, երբ ժողովը համարւում է օրինական, այդ դէպքում ոչ շուտ քան մի շաբաթ անցնելուց յետոյ հրաւիրում է երկրորդ ընդհ. ժողովը, որը համարւում է օրինական, իսկ որոշումները վերջնական, անկախ ներկայ եղողների թւից. այդ մասին վարչութիւնը պարտաւոր է կանխապէս հրաւիրի մէջ նախագործացնել անդամներին: Այդ երկրորդ ընդհ. ժող. կարող են վճռել այն հարցերը, ու

ըոնք քննուելու էին առաջին ընդհ. ժողովում, և չէին վճռւել. այստեղ ևս նախորդ № յիշեալ առանձին հարցերը որոշում են ձայների $\frac{2}{3}$ մեծամասնութեամբ, իսկ միւս հարցերը պարզ մեծամասնութեամբ: Ընդհ. ժողովի որոշումները պարտաւոր են բոլոր անդամների համար, ինչպէս ներկայ եղողների, նոյնպէս և բացակայողների:

№ 33. Գործերը մտցնուում են ընդհ. ժողով միայն վարչութեան միջոցով, ուստի այն անդամները, որոնք կցանկանան, որևէ առաջարկ անել ընդհանուր ժողովին, պետք է գրաւոր դիմեն և ներկայացնեն վարչութեան առնուազն ընդհ. ժողովից մի շաբաթ առաջ: Եթէ առաջարկութիւնը արւած է անդամների $\frac{1}{10}$ -ի կողմից, վարչութիւնը պարտաւոր է ներկայացնել այդ հետեւեալ ընդհ. ժող., իր կարծիքների հետ միասին:

№ 34. Ընդհանուր ժողովներում գործերին. կանոնաւոր ընթացք տալու համար, ժողովը ընտրում է մի նախագահ. իսկ արձանագրութիւնները կազմելու համար—քարտուղար: Մինչև նախագահ ընտրելը նրան փոխարինում է վարչութեան նախագահը:

№ 35. Ընդհ. ժողովների որոշումները վաւերացնուում են արձանագրութիւններով, որոնք, ժողովի վերջին, կարգացւում են և ապա ստորագրում են ժողովի նախագահը, քարտուղարը, ժողովում ներկայ եղող վարչութեան բոլոր անդամները, և ընկերութեան ներկայ եղող առնուազն երեք անդամ:

ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ՆՐԱ ԻՐԱԿՈՒՅՑՆԵՐԸ եւ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

№ 36. Ընկերութեան գործերի անմիջական վարումն պատկանում է վարչութեան, որ գտնուում է . . . և կազմւած է . . . անդամից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը իր միջից երեք տարով:

Նկատ. 1 Վարչութեան անդամ կարող են լինել այն անդամները, որոնք ունեն առնւազն մէկ ամբողջ փայ:

Նկատ. 2 Վարչութեան անդամների թիւը որոշում է ընդհ. ժողովը, նայած ընկերութեան առնարարդիւնաբական գործունէութեան չափերին. թուլաւում է գործունէութեան իւրաքանչիւր ճիւղի վարժան համար ընտրել վարչութեան առանձին անդամ:

Նկատ. 3 Այն անդամները, որոնք մատակարարում են ընկերութեան ապրանք, կամ ունեն նոյնանըման գործառնութիւն, նոյնպէս և ընկերութեան գործակատար եղողները, չեն կարող ընտրել վարչութեան անդամներ:

№ 37. Վարչութեան անդամներին փոխարինելու համար, վերջիններիս հիւանդութեան և երկարատեղացակայութեան, նոյնպէս և նոցա մահւան կամ դուրս գալու դէպքում, ընտրում են ընդհ. ժողովում փոխանդամներ (կանդիտատներ) համապատասխան թւով, որոնք վարչութեան մէջ պաշտօնավարութեան ընթացքում օգտառում են նոյն իրաւունքներով ու արտօնութիւններով, որ կապւած է այն պաշտօնի հետ:

№ 38. Վարչութեան անդամների ու փոխանդամների սկզբնական ընտրութիւնից մի տարի անցնելուց

յետոյ, դոցա մի մասը, որի քանակը որոշում է ընդհ. ժողովը, դուրս է գալիս, սկզբում վիճակով, իսկ յետոյ ըստ աւագութեան վարչութեան անդամ դառնաւու, դուրս եկածների փոխարէն ընտրում են նոր անդամներ ու փոխանդամներ:

Նկատ. Դուրս եկած անդամներն ու փոխանդամները կարող են, եթէ իրենք ցանկանան, նորից վերընտրել:

№ 39. Վարչութեան դուրս եկած անդամին փոխարինող փոխանդամը մնում է վարչութեան կազմի մէջ մինչև այն ժամանակամիջոցի լրումն, որ ընտրւած էր անդամը, սակայն ոչ աւել այն ժամանակամիջոցից, որ ընտրւել է ինքը փոխանդամը:

№ 40. Վարչութեան անդամները իւրաքանչիւր տարի ընտրում են իրենց միջից նախագահ և փոխնախագահ, նոյնպէս և գանձապահ ու քարտուղար:

Նկատ. Դանձապահի և քարտուղարի պաշտօնները կարող են յանձնել մի մարդու:

№ 41. Վարչութեան անդամները իրենց աշխատանքի համար կարող են ստանալ, ընդհանուր ժողովի որոշմամբ, կամ որոշ վարձատրութեան և կամ ընկերութեան վաստակի որոշ տոկոսը:

№ 42. Վարչութիւնը անօրինում է ընկերութեան բոլոր գործերն ու դրամագլուխները. նրա պարտականութիւնները կազմում են.

ա). Ընդհ. ժողովի որոշած կարգով զանազան գումարների և տոկոսաբեր թղթերի ընդունումն, դուրս տալն, պահումն:

բ). Հաշւապահութեան կազմակերպումն և հաշւէտութեան վարումն, նաև № 51—53-ի հիման վերայ տարէհաշվի, հաշւէկշոփի, նախահաշվի և գործունէութեան պլանի կազմումն:

գ). Ընկերութեան ծառայողների ընդունելութիւնը, նոցա գործունէութեան առարկան և ոռմիկ նշանակելը, և նոցա արձակելը:

դ). Սպառման և տնային գործածութեան զանազան առարկաների գնումն, վաճառումն և պահելը. նաև նոցա բարեյատկութեան վերահսկումն:

ե). Մթերման առարկաների յատկութեան որոշումը և նոցա ձեռք բերելու եղանակը (կանխիկ դրամով թէ ապառիկ):

զ). Ընկերութեան ձեռնարկութիւնների կազմակերպութիւնը և նոցա տեսչութիւնը:

է). Սպառման տնային գործածութեան առարկաների էժանացման և բարելաւման միջոցների հետախուզութիւնը:

ը). Ընկերութեանց գործառնութեանց համար անհրաժեշտ մթերանոցների, ընակարանների և այլ շինութիւնների վարձումն:

թ). Ընկերութեան կայքերի ապահովագրումն:

ժ). Ընկերութեան ընդհ. ժողովի որոշած սահմաններում, մուրհակների և այլ պարտաւորութիւնների տալն ու ընդունելը ի հատուցում:

ժա). Ընկերութեան անունից, ընկերութեան ապահ մատակարելու պայմանագրեր և պայմաններ կապելը:

ժբ). Տալ հաւատարմագրեր այն անձանց, որոնք ընդունեած են ընկերութեան ծառայութեան մէջ վարչութեան կամ ընդհ. ժողովի կողմից:

ժգ). Կայացնել օրինական ակտեր՝ կայքերի ձեռք բերման և ծախելու ժամանակ:

ժդ). Ընդհ. ժողով գումարելը և առհասարակ ար-

Նօրինումն ու վարումն բոլոր այն հարցերի, որ վերաբերում են ընկերութեան, ընդհ. ժողովի ընդգծած սահմաններում:

Վարչութեան գործունէութեան մերձաւոր եղանակը, նրա իրաւունքների և պարտականութիւնների սահմանը, որոշում են այն հրահանգներով, որ հաստատում և փոփոխում է ընդհ. ժողովը:

№ 43. Վարչութիւնը կատարում է ծախսերը՝ համաձայն այն նախահաշիւնների, որ հաստատում է իւրաքանչիւր տարի ընկ. ընդհ. ժողովը: Ընդհ. ժողովին է թողնւած որոշել, թէ ինչ գումար կարող է վարչութիւնը ծախսել նախահաշւից դուրս, անյետաձգելի կարիքների ժամանակ: Ամեն մի այդպիսի ծախսի մասին պիտք է յայտնալի մերձաւոր ընդհ. ժողովին ի հայեցողութիւն:

№ 44. Վարչութիւնը առանձնապէս պիտի հոգտանի, որ ընկերութեան շրջանառական զրամագլուխը չմնայ առանց շրջանառութեան. այդ նպատակի համար վարչութեան անդամները նկատողութեան են առնում պահանջւող այն ապրանքները, որ չի պահւում խանութում և ազատ փողերը գործադրում են այդ ապրանքները գնելու: Իսկ եթէ այդ ապրանքների գնումն, այլ և այլ պատճառներով անժամանակ և աննպատակ դանւի, ազատ փողերով ձեռք են բերւում տոկոսաբեր թղթեր կամ պիտք է տեղաւորւեն ընթացիկ հաշւով ընդհ. ժողովի ընտրութեամբ, տեղական վարկի հիմնարկութիւններից մէկում:

№ 45. Ընկերութեան հիմնարկութիւններում ապրանքները ծախսում են առանց սակար կութեան միևնույն որոշեալ գնով, որի վերայ խիստ հսկում է վարչութիւնը: Ապրանքների որոշ գնով վաճառման

համար վարչութիւնը կազմում է գների ցուցակը (պլէյս-կուրանտ), որը պիտի ստորագրւած լինի վարչութեան անդամների կողմից և կախւած ընկերութեան հիմնարկութիւններում աչքի ընկնող տեղում: Եթէ ապրանքների բազմազանութեան և տեսակների բազմաթւութեան պատճառով անյարմար կլինի զետեղել բոլորը գների ցուցակում, գները նշանակում է ապրանքների վերայ:

№ 46. Ընկերութեան զրագրութիւնը կատարում է վարչութեան անունից, նախագահի կամ վարչութեան մի այլ անդամի ստորագրութեամբ:

№ 47. Մուրհակները, հաւասարմաթղթերը, պայմանագրերը, պայմանաւորումները, կայքերի գնման վաւերաթղթերը և այլ ակտերը, նոյնպէս և ընկերութեան գումարները, վարկային հիմնարկութիւններից յետ ստանալու պահանջները պիտք է ստորագրւած լինեն առնւազն վարչութեան անդամների թւի կիսի կողմից: Պօստից դրամական գումարներ, պօստային կապոցներ, գոկումնենտներ ստանալու համար բաւական է ընկերութեան մի անդամի ստորագրութիւնը և ընկերութեան կնիքի դրօշմը:

№ 48. Վարչութիւնը ժողովում է ըստ կարիքի, սակայն առնւազն մի անգամ ամսական, ժողովի օրը վճռում է վարչութիւնը անդամների փոխադարձ համաձայնութեամբ, և այդ մասին յայտնում է ընկ. անդամներին ի գիտութիւն: Վարչութեան ժողովներին, ընդհ. ժողովի թոյլաւութեամբ կարող են ներկայ լինել բացի վարչութեան անդամներից նաև ընկերութեան այլ անդամներ, առանց վճռողական ձայնի իրաւունքի: Վարչութեան վճիռների օրինաւորու-

թեան համար անհրաժեշտ է վարչութեան անդամների մեծամասնութեան ներկայութիւնը:

Վարչութեան նիստերին կազմում են արձանագրութիւններ, որոնք և ստորագրում են ներկայ և ղողների կողմից:

№ 49. Վարչութեան վճիռները կայանում են ձայների մեծամասնութեամբ, իսկ մեծամասնութիւն չկայացած դէպքում, վիճելի հարցը դրւում է ընդհ. ժողովի առաջ, որին թողնուում է նաև այն հարցերը, որոնց վերաբերմամբ վարչութիւնն և վերաբնիչ յանձնաժողովը կցանկանան գործել ընկերութեան միւս անդամների համաձայնութեամբ, կամ որոնք ընդհանուր ժողովի կողմից հաստատւած հրահանդների կամ կանոնադրութեան հիման վերայ, դուրս են վարչութեան իրաւասութիւնից:

Նկատ. Վարչութեան վճոի հետ չհամաձայնող անդամը եթէ պահանջում է իր կարծիքը մտցնել արձանագրութեան մէջ, աղատուում է պատասխանատւութիւնից այդ որոշման վերաբերմամբ:

№ 50. Վարչութեան անդամները կատարում են իրենց պարտականութիւնները ընդհանուր օրէնքների և սոյն կանոնադրութեան մէջ պարունակող կանոնադրութեանց հիմանց վերայ և ապօրինի կարգադրութեան, իշխանութեան սահմաններից անցնելու, անգործութեան և ինչպէս կանոնադրութեան, նոյնպէս և ընդհ. ժողովի կանոնադրութիւնների խախտումի դէպքում պատասխանատու են օրէնքի ընդհանուր հիման վերայ:

Նկատ. Վարչութեան անդամները, ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող են հեռացնել ժամանակամիջոցից առաջ:

Ընկերութեան գործերի ՀԱՇԻՑԻՈՒԹԻՒՆԸ, ՎԱՍՏԱԿԻ ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ եւ ԴԻԻԴԵՆՏԻ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ.

№ 51. Ընկերութեան գործառնութեան տարին հաշուում է յունւարի 1-ից առ մէկն յունւարի: Իւրաքանչիւր անցած տարւայ համար վարչութիւնը կազմում է, ընկերութեան սովորական տարեկան ընդհ. ժողովին քննութեան ու հաստատման ներկայացնելու համար, ընկերութեան գործառնութեան մանրամասն տարէհաշուուր և շրջանառութեան հաշւէկշիւր (բալանս):

Նկատ. Տարեկան ընդհ. ժողովից երկու շաբաթ առաջ լաց է արւում ընկերութեան անդամների համար վարչութեան բոլոր մատեանները, հաշւէկշուն և հաշւէկտութեան վերաբերեալ բոլոր հաշիւններով, վաւերաթղթերով և յաւելւածներով:

№ 52. Հաշիւր պէտք է պարունակի մանրամասնորէն հետեւեալ գլխաւոր կէտերը.

ա). Դրամագլուխների գրութիւնը ինչպէս շըրջանառութեան, նոյնպէս և պահեստի:

բ). Ընդհանուր մուտք ու ելք, այն ժամանակամիջոցի վերաբերեալ, որի առթիւ կազմուած է հաշիւր, ինչպէս սպառման առարկանների գնման ու մթերման, նոյնպէս և վաճառման:

գ). Ընկերութեան ծառայողների ոռճիկների և գործերի վարման վերաբերեալ ծախսերի հաշիւր:

դ). Ընկերութեան կանխիկ գոյքի ըի և նրան պատկանող պահեստների հաշիւր:

ե). Ընկերութեան ուրիշներին աւած պարտքերի և ուրիշներից վերցրած պարտքերի հաշիւը:

դ). Եկամուտի և մսասների հաշիւը.—և

է). Զուտ վաստակի հաշիւը և դրա բաժանման մօտաւոր ձեր:

№ 53. Հաշիւների և հաշւէկշուի վերաստուգութեան համար ընդհանուր ժողովը նշանակում է մի տարով վերաքննիչ յանձնաժողով՝ բազկացած երեք կամ աւել անդամներից: Այդ յանձնաժողովը ժողովւում է ոչ ուշ, քան մի ամիս, հետեւալ տարեկան ընդհ. ժողովից առաջ, և վերաստուգելով անցած տարւայ հաշիւը և հաշւէկշիւը, բոլոր մատեանները, հաշիւները, վաւերաթղթերը և յաւելածները նաև վարչութեան ու ընկերութեան բաժանմունքների գործավարութիւնը, մտցնում է հաշիւը և հաշւէկշիւը, իր կարծիքների հետ միասին ընդհ. ժողով, որը և առլիս է դրանց վերաբերմամբ իր վերջնական վճիւը: Այդ յանձնաժողովին վերապահում է իրաւունք, եթէ նա պէտք է համարի կամ ընդհ, ժողովը յանձնարարի նրան, նայել և վերաքննել ընկերութեան ամբողջ գոյքը իրենց տեղերում, ստուգել տարւայ ընթացքում կատարած առևտրական գործողութիւնները, նաև գոյքի պահպանման համար կատարած ծախսերը, և առհասարակ կատարել անհրաժեշտ բոլոր հետախուզութիւնները, որոշ եղբակացութիւն հանելու համար՝ օգտաւէտութեան աստիճանի և ժամանակի յարմարութեան և առհասարակ ընկերութեան շահերին ձեռնտութեան վերաբերմամբ, ինչպէս արդէն կատարած գործողութիւնների և ծախսերի նոյնպէս և ընկերութեան բոլոր շրջանառութեան: Վերոյիշեալի կատարման համար վարչութիւնը պարտաւոր է ներ-

կայացնել յանձնաժողովին բոլոր միջոցները: Նոյն յանձնաժողովի նախական քննութեան է յանձնուում նաև եկող տարւայ նախահաշիւը և գործունէութեան պլանը, որը իր կարծիքների հետ, յանձնաժողովը մացնում է ընդհ. ժողովը: Բացի այդ, յանձնաժողովը իրաւունք, ունի պահանջել վարչութիւնից հրաւիրել արտակարգ ընդհ. ժողով՝ № 28:

Նկատ. Ընկերութեան գործերի վերաստուգութիւնը կարող է կատարւիլ նաև կարգագըրութեամբ, եթէ նա տեղեկութիւն կստանայ ընկերութեան գործերում տիրող անկարգութիւնների և կանոնադրութեան խախտման մասին:

№ 54. Տարեհաշիւը և հաշւէկշիւը, ընդհ. ժողովի հաստատումից յետոյ, ներկայացրւում է (Յ օրինակ) ներքին գործոց նախարարութեան տեղական տնտեսութեան գործերի գլխաւոր վարչութեան և . . . բացի այդ, ընդհ. ժողովի հայեցողութեամբ կարող է բարեկամական հրատարակել պարբերական հրատարակութիւնների մէջ:

№ 55. Հաշիւը ընդհ. ժողովում հաստատելուց յետոյ, տարեկան գուտա աշխատանքից, այսինքն, այն գումարից, որը մնում է բոլոր ծախսերը և վասները, եթէ կան, ծածկելուց յետոյ, յատկացւում է առնըւազն $10^{\circ}/_0$ պահեստի դրամագլխին, և փայերին իբր գիւղենա այնպիսի մի գումար, որ փայերի իւրաքանչիւը ըուբլուն ընկնի տարեկան $10^{\circ}/_0$ -ից ոչ աւել: Մնացած գումարը, գուրս գալով վարչութեան անդամներին արւելիք վարձարութիւնը, եթէ այդ որոշած կլինի ընդհ. ժողովի կողմից, (№ 41) բաժանուում ւած է ընկերութեան անդամների մէջ համեմատական չափով ըստ նոցա ընկերութիւնից գնած ապրանքների քանակի:

Նկատ. 1. Ընդհ. ժողովը կարող է վաստակի մի մասը յատկացնել ընկերութեան օգտաւէտ նալատակի (№ 1, նկ.):

Նկատ. 2. Երբ պահեստի զրամագլուխը հասնի շրջանառութեան դրամագլխի չափին, յետագայ յատկացումները վաստակից յօդուտ պահեստի զրամագլխի, ընդհ. ժողովի որոշմամբ կարելի է դադարեցնել: Պարտաւրեալ յատկացումը նորոգուժում է, եթէ պահեստի զրամագլխի մի մասը ծախսւի:

Նկատ. 3. Դիւիդենարը յատկացւում է միայն լըրիւ փայերին և լրիւ ամիսների համար:

Նկատ. 4. Դիւիդենատի կողեկների կոտորակները դուրս են գցուում և յատկացւում պահեստի զրամագլխին:

№ 56. Դիւիդենարը տրւում է, վարչութեան հաշիւը ընդհ. ժողովի կողմից հաստատելուց յետոյ, եթէ ամսւայ ընթացքում:

№ 57. Դիւիդենարը, փայատիրոջ ցանկութեամբ, կարող է թողնել ընկերութեան դրամարկղում, նոր փայ կազմելու համար: Այն դիւիդենարը, որ նշանակած ժամանակում չի վերցրւում, հաշւում է թողնըւած նոր փայ կազմելու համար:

Նկատ. Երբ անդամի փայեղբամը հասնում է ընդհան. ժողովի համաձայն № 14 որոշած նորմային, դրանից աւել ընկերութեան դրամարկղում թողած դիւիդենատի համար տոկոս չի վճարւում:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՎԵՃԵՐԻ ԼՐԻԾՈՒՄՆ, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԴԱԴԱՐՈՒՄՆ ԵՒ ՆԲԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՌԻՒՆԵՐԸ.

№ 58. Ընկերութեան բոլոր գործերի վերաբերեալ վէճերը ընկերութեան անդամների միջև, նոցա

և վարչութեան անդամների մէջ, ինչպէս և վարչութեան անդամների և ընկերութեան միւս ծառայողների ու մասնաւոր անձանց միջև լուծւում են կամ ընդհ. ժողովում, եթէ երկու կողմն էլ համաձայն են կամ քննւում են դատաստանական ընդհանուր կարգով:

№ 59. Ընկերութեան պատասխանատութիւնը սահմանափակւում է նրան պատկանեալ շարժական և անշարժ գոյքերով ու զրամագլուխներով:

№ 60. Եթէ հաշիւները կազմելուց վերջացնելուց յետոյ, որիէ չնախատեսնած պատճառով կատարի վսաս, այդ ծածկում է պահեստի զրամագլխից. իսկ զրամանքաւարարութեան դէպքում անդամների փայերից՝ շրջանառութեան դրամագլխից: Այդպիսով իւրաքանչիւր փայի չափը պակասացնելով, եթէ կլինեն անդամներ, որոնք չեն ունենալ լրիւ փայ, նոքա պարտաւոր են լրացնել իրենց փայերը մինչև նորմալ չափը, այն ժամանակամիջոցում, որ կ'որոշի ընդհ. ժողովը:

№ 61. Ընկերութեան գոյութեան ժամանակամիջոց չի նշանակւում: Եթէ, ըստ գործերի ընթացքի, ընկերութեան փակումն անհրաժեշտ կ'գտնեի, նրա զործունէութիւնը զադարեցնուում է ընկերութեան ընդհ. ժողովի որոշմամբ, նրա երկու իրար հետեւող արտակարգ նիստերում. Եթէ երկրորդ նիստում չի վերացի առաջին նիստում փակման համար բերած պատճառաբանութիւնները:

Նկատ. Եթէ Ընկերութիւնը չի սկսի իր գործունէութիւնը, հաշւած հիմնադիրների բացման թոյլաւութիւն ստանալուց մի տարւայ ընթացքում, այդ դէպքում հաշւում է չփայացած:

№ 62. Ընկերութեան գործունէութեան դադար-
ման դէպքում ընդհ. ժողովը ընտրում է իր միջից
առնւազն երեք հոգուց բաղկացած լիկիդացիայի
(լուծման) յանձնաժողով և որոշում է ընկերութեան
գործերի վերջնական լուծման եղանակը: Այդ յանձ-
նաժողովը ընդունում է գործերը վարչութիւնից:
Լուծողները հրաւիրում են յայտարարութեան միջո-
ցով ընկերութեան պարտատէրերին, միջոցներ են
ձեռք առնում նոցա լիակատար բաւարարութիւն տա-
լու, ընկերութեան գոյքը վեր են ածում կանխիլ
դրամի, մտնում են երրորդ անձնաւորութիւնների
հետ համաձայնութեան և հաշտման պայմանների մէջ՝
ընդհանուր ժողովի որոշած հիմանց վերայ և սահ-
մաններում: Ընկերութեան պարտատէրերին բաւա-
րութիւն տալու, նոյնպէս և վիճելի պահանջներին
լրիւ բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ գու-
մարները, մտցնում են լուծողների կողմից պարտա-
տէրերի հաշվին պետական վարկային հիմնարկութիւնն-
երից մէկը. մինչև այդ ժամանակ չի կարելի ձեռ-
նարկել ընկերութեան անդամներին բաւարարութիւն
տալու՝ ըստ այն միջոցների, որ կմնայ ընկերութեան
տրամադրութեան տակ: Իրենց գործունէութեան մա-
սին լուծողները հաշվե են ներկայացնում ընդհ. ժո-
ղովին, նրա որոշած ժամանակամիջոցներում: Իսկ
անկախ դրանից, լուծումն վերջնական ընդհանուր հաշվե:


№ 63. Երբ ընդհ. ժողովը հաստատում է լու-
ծողների ներկայացրած ընդհանուր հաշվեը (№ 62),
անդամներին վերադարձնուում է իրենց փայերը և
հասանելիք դիւիդենտն ու յաւելագրամը կամ հանած
նրանց վերայ ընկնելիք մնաները (№ 60). Իսկ մնա-

յած գոյքը, եթէ լինի, գործադրուում է որևէ է հան-
րօգուտ նպատակի, ընդհ. ժողովի որոշմամբ, որ մըտ-
նում է ուժի մէջ . . . հաստատութեամբ. իսկ . . .
հետ համաձայն չլինելու դէպքում հարցը ուղարկուում
է ներքին գործոց նախարարի վերջնական որոշման:

№ 64. Ինչպէս լուծման սկսելու նոյնպէս և վեր-
ջինիս աւարտման մասին յետագայ կարգադրութիւն-
ների բացադրութիւնների հետ միասին, առաջին
դէպքում վարչութեան, իսկ երրորդ՝ լուծողների կող-
մից, յայնուում է . . . միջոցով ներքին գործոց
նախարարին, նոյնպէս արւում է անհրաժեշտ յայտա-
րարութիւն՝ ի գիտութիւն ընկերութեան անդամնե-
րի և ընկերութեան գործերի հետ առնչութիւն ու-
նեցող անձանց:

№ 65. Եթէ, անկախ նահանգապետներին և քա-
ղաքապետներին վերապահած իրաւունքներից (յօդ.
321 և 863, հատ. II օրէնք. հաւաք. 1892 թ. հրատ.
ընդհ. նահ. հիմն.) փակելու հասարակական ժողովնե-
րը՝ երբ նկատի պետական կարգերին հակառակ և
հասարակական ապահովութեան ու բարոյականութեան
դէմ որևէ է բան, եթէ . . . անհրաժեշտ գտնի փա-
կել ընկերութիւնը ուրիշ պատճառներով, նա յայտ-
նուում է այդ ներք. գործ. նախարարին ի հայեցու-
դութեան:

Նկատ. Երբ ընկերութիւնը փակւում է . . . կար-
գադրութեամբ, վերջինից է կախւած հրաւիրել ընդհ.
ժողով լուծման հարցը վճռելու համար կամ անմիջա-
պէս ընտրել ընկերութեան անդամների միջից յանձնա-
ժողով նրա գործերի լուծման համար:



Ի՞նչՊէս ԲԱՑԵԼ ՎԱՐԿԻ ԿԱՄ ՓՈԽՍՏՈՒ—ԻՆԱՅՈՂԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Սկզբներում ամենից լաւ է բացել ընկերակցութիւնը կանոնադրութեան հիման վերայ: Կանոնադրութիւնը կարելի է ստանալ ձի պետական բանկի բաժանմունքներում: Հիմնադիրների ժողովը (առնւազն 20 հոգի) վճռում է, թէ որտեղից փող պարագ վերցնի և ըստ այսմ խնդիր է տալիս: Եթէ վճռում է— վերցնել պետական բանկից կամ մանր վարկի զլիսառոր կառավարութիւնից, այդ դէպքում խնդիրը սովորաբար գրւում է այսպէս:

«Մենք ի ներքոյ ստորագրեալներս (այս ինչ) գիւղի ընակիչները խնդրում ենք թոյլ տալ մեզ բացել վարկի ընկերակցութեան ընական կանոնադրութեան հիման վերայ: Ընկերութիւնը կ'կոչչի (անունը) վարչութիւնը կ'գտնի (գիւղի անունը): Միաժամանակ խնդրում ենք տալ մեզ պետական բանկից փոխարինաբար հիմնական գրամագլուխի համար (այսքան) բուբին: Փոխարինութեան պայմանները մեզ յայտնի են ըստ կանոնադրութեան 22 յօդ: Բացի այդ մենք խնդրում ենք պետական բանկում բացել մեզ կարծ ժամանակեայ վարկ (այսքան) բուբին: Իւրաքանչիւր անդամի թոյլատրելիք պարտքի քանակը որոշուում է . . . բուբին, իսկ հացահատիկների կամ արհեստային գործածքների գրաւով վերցրած փոխառութեան հետ . . . բուբին»:

«Իւրաքանչիւր անդամ պատասխանառու է ընկե-

բակցութեան պարտաւորութիւնների դիմաց (այսքան) անդամ աւելով, քան իրեն բաց թողած վարկը: Խընդ-ըիս կցում ենք, բացի կանոնադրութեան նախագիծը, տեղեկութիւններ մեր դասային և անտեսական գրութեան մասին, նաև այն գիւղերի մասին, որոնց վերայ ենթադրւում է տարածել ընկերակցութեան գործունէութիւնը: Մեր հաւատարմատարեր և մեզ նետ ամեն տեսակ գրաւոր յարաբերութիւն պահելու համար նշանակում ենք (անուն, հայրանուն և ազգանուն): Նամակները պէտք է ուղարկել այս հասցէով (այս ինչ մարդուն): Յետոյ պիտի լինի հիմնադիրանդամները:

Փոխառու — խնայողական ընկերակցութեանց համար փոխարութիւն պէտք է խնդրել մանր վարկի գլխաւոր կառավարչութիւնները:

Հիմնադիրների գոյքերի և գրութեան մասին, նախ այն գիւղերի մասին, ուր պիտի գործէ ընկերակցութիւնը, անհրաժեշտ տեղեկութիւնները պէտք է գրել առանձին թղթի վերայ: Խնդիրը ուղարկում է մանր վարկի գործերի նահանգական կօմիտէտը: Կանոնադրութիւնը հաստատելուց յետոյ, ընդհանուր ժողովում ընտրում են վարչութիւնը և նոր անդամներ:

Ահա մի քանի խորհուրդներ, որոնցով պիտի գեկավարվ ընկերակցութիւնը:

1. Գրաւել որքան կարելի է շատ անդամներ և դըրամ գնողներ: 2. Աշխատանքին մասնակցեն բոլորը: 3. Լաւ հաշւապահութիւն. 4. Վաւերաթղթերը և դըրամը պահել խիստ ուշադրութեամբ. 5. Դատային գրադրութիւնից խոյս տալ: 6. Զվերցնել փոխարինաբար փող առանց ծայրահեղ կարիքի: 7. Շուտով անց-

նել միջնորդի գործառնութեանց: 8. Զգտել լուսաւո-
րութեան գործունէութեան զարգացման: 9. Քարողել
ընկերութեան մասին:

Կովկասում բնական կանոնադրութիւնը՝ չորս
մանրամասն հարցացուցակով, կարելի է ստանալ պե-
տական բանկերի բաժանմունքներից:

Վարկի և փոխառու—խնայողական ընկերակցու-
թիւնները, համաձայն 1904 թ. շ. յունիսի օրէնքի, չեն
վճարում ոչ հիմնական և ոչ լրացուցիչ արհեստային
տուրք: 1905 թւից սկսած, ըստ բացատրութեան Ա-
ռևտիւնաբերութեան բաժանմունքի, վարկի
և փոխառու—խնայողական ընկերակցութիւնները ա-
զատած են նաև քաղաքային հարկերից, իբրև յաւե-
լումն արհեստային տուրքի վկայականների: Արհես-
տային տուրքից ազատելու համար, ոչ վարկային և
ոչ փոխ.—խնայողական ընկերութիւնները պարտա-
ւոր չեն խնդրամատոյց լինել կազեօննի պարատին և
ոչ էլ ուղարկել դոցա իրենց կանոնադրութեան պատ-
ճէնները:

Միայն այն դէպքում, եթե վարկի կամ փոխ.—խն-
այողական ընկերակցութեան կից դոյութիւն ունի
ապրանք ծախելու պահեստ, նա զբաղման տուրքի
վերաբերմամբ հաւասարեցրւում է սպառողական ըն-
կերութեան: Մինչև 10,000 ր. դրամագլուխը յիշեալ
տուրքը չի վճարում, իսկ 10,000-ից աւել դրամագլուխ
ունենալու դէպքում պէտք է վերցնել զբաղման տուր-
քի վկայական:

Եթէ այս հողի վերայ ընկերակցութեան և կա-
զեօննի պարատի մէջ վէճ ծագի, այդ դէպքում
ընկերակցութիւնը պէտք է վճոփ պատճէնը ստանա-
լուց յետոյ մինչև մի ամսւայ ընթացքում դիմէ պա-

լատի ընդհանուր ատեանի միջոցով զբաղման տուր-
քի նահանգական ատեանը: Ժամանակամիջոցը բաց
թողնելոց կորչում է բողոքելու իրաւունքը:

Ի՞նչպէս կը ԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՐՏԵԼ.
(Համարհեստակիցների միութիւն):

Շատ յաճախ զիւղացիների մէջ,—առանձնապէս
այն գիւղերում, որոնք պատրաստում են քաղաքի
շուկայի համար որևէ մի մթերք, միտք է ծագում
շուկայի ըմդհանուր կօպերատիւ արտադրութեան հա-
մար արտել,—կամ տնայնագործական, կամ երկրա-
գործական և կամ վերջապէս արհեստային:

Նախ քան այդ արտեներից որևէ է մէկին ձեռ-
նարկելը, կանխապէս պէտք է ծանօթանալ, թէ ինչ-
պէս է նայում արտեների կազմակերպութեանը մէր
օրէնսդրութիւնը. ինչ իրաւունքներ է տալիս նոցա և
ինչ պարտականութիւններ է դնում նոցա վերայ:
Մէր օրէնսդրութիւնը թոյլ է տալիս արտենե-
րի օրինական գոյութեան երկու տեսակը.

1). Արտելային պայմանաւորման հիման վերայ, և
2). Արտելային կանոնադրութեան հիման վերայ:
Այդ մասին խօսում է 91 յօդ. օրէնք հաւաք. XI
հատ. 2. մասի, «Առևտրական կանոնադրութեան», ո-
րը պէտք է մատնացոյց անել անհրաժեշտ դէպքում:
Ահա այդ յօդւածը:

«Արտեների կազմը և նոցա ներքին կառավար-
չութեան կարգը որոշւում է կամ անդամների կամո-
վին համաձայնութեամբ ընդունւած պայմաններով և
կամ օրինական կարգով հաստատած կանոնադրու-
թեամբ»:

Պայմանաւորւած արտելները գործում են ընդհանուր օրէնքների հիման վերայ, ենթարկւելով դրանց ամեն բանով:

Պայմանաւորւած արտելները համարւում են կայացած այն օրից, երբ արտելի մէջ մտնող բոլոր դիւղացիք ստորագրում են պայմանագիրը, որը կազմում են հէնց իրենք: Պայմանագիրը ստորագրում են նոտարի մօտ, կամ եթէ նոտարը հեռու է Շինական կառավարութեան մէջ: Արտել բացելու համար տեղական իշխանութիւնից ոչ մի թոյլտութիւն չի պահանջում ստանալ:

Պայմանաւորւած արտելի օգտաւէտ ու վնասակար կողմերը հէնց նրա կազմութեան մէջ է: Այդ կողմերը պէտք է լաւ իմանալ, կարողանալ առաջուց կռւել, և բոլորն էլ կհամոզւեն, որ ձեռնտու է արտել կազմելը:

Պայմանաւորւած արտելի օգտաւէտ կողմերն հետևեան է.

Նախ, շատ հեշտ է բացել՝ երբ ուղէք և առանց որևէ է թոյլտութեան.

Երկրորդ, կարելի է երբ ուղէք փոփոխել պայմանը, եթէ գործի տեսակէտից անպէտք լինի. սակայն անհրաժեշտ է դարձեալ կամ նոտարի կամ շինական կառավարութեան մօտ և անպատճառ բոլոր ստորագրածների համաձայնութեամբ: Բաւական է որ մէկն չհամաձայնէ ու փոփել պայմանը առանց նրա համաձայնութեան անկարելի է դառնում:

Վնասակար կողմն կայանում է նրանում, որ պայմանաւորւած արտելին մասնակցողը ամենից առաջ պատասխանատու է արտելի բոլոր վնասների հա-

մար՝ ոչ միայն գործի մէջ դրած իր փողով, այլ ուղղակի իր ամբողջ շարժական և անշարժ գոյքով:

Այն դէպքում ևս եթէ մէկը, գտնելով անձեռնուտու արտելի մէջ մնալը, ցանկանայ թողնել արտելը ու հեռանայ, նա կարող է այդ անել միայն բոլորի համաձայնութեամբ, նոտարի մօտ:

Եթէ միւս արտելչիկները չտան իրենց համաձայնութիւնը—ամբողջ կեանքումդ պիտի շարունակես պատասխանատու լինել քո ամբողջ ունեցւածքով արտելի վճարների համար:

Միւս տեսակի, կանոնադրութեան արտելները, օրէնքի (այսպէս կոչւած դրութիւն արտելների) հիման վերայ, ունեն մի քանի սուտելութիւններ, բայց ունեն և վնասակար կողմեր:

Կանոնագրութեան արտելի սուանձնայատկութիւններն հետեւանեն են.

Պայմանաւորւած արտելի հակառակ, արտելի անդամները առանց նահանգապետի թոյլտութեան չեն կարող կանոնագրութեան մէջ ոչ մի փոփոխութիւն մտցնել:

Իսկ նահանգապետի թոյլտութեամբ մեծամասնութիւնը կարող է մացնել ամեն տեսակ փոփոխութիւններ, եթէ փոքրամասնութիւնը չցանկանայ իսկ:

Կանոնագրութեան արտելի ամենախոշոր սուանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ արտելի անդամները պատասխանատու չեն իրենց ամբողջ ունեցածով արտելի վնասների համար, ինչպէս պայմանաւորւած արտելում, այլ միայն այն գումարով, որ նոքա իրենք կանոնագրութեան մէջ որոշել են: Կանոնագրութեան մէջ կայ բաց տեղ և ամեն մի արտել

ինքը կարող է մտցնել պատասխանաւութեան չափը
(փայից երկու երեք և այն անգամ՝ աւելով):

Վերջերս տնայնազործական և արհեստային ար-
տելների մեծամասնութիւնը գերադասում է արտել-
ների կանոնադրութեան ձևը:

Այդ բացադրում է նրանով, որ կանոնադրու-
թեան արտելները աւելի կայուն են; քան պայմա-
նաւորւած արտելները և իրենց գործային շրջանա-
ռութեան ընթացքում աւելի հաւատ են ներշնչում:

Արտելների հաստատւած օրինակելի կանոնադր-
ուութիւնը կարելի է գործադրել—չնչին, գուտ ձեա-
կան փոխուսութիւններով և յաւելումներով, որ թոյ-
լատրում է նահանգապետը—տնայնազործական և ար-
հեստային արտելների մեծամասնութեան համար:
Բայց այդ կանոնադրութիւնը բոլորովին անպէտք է
այն արտադրող արտելների համար, որտեղ արտադր-
ուութիւնը կրում է բացառիկ, առանձին բնաւորու-
թիւն, օրինակ երկրագործական իւղագործարանային
արտելների համար:

Կանոնադրութեան արտելը բացւում է տեղական
նահանգապետի կամ հէնց ֆինանսների նախարարի
թոյլատութեամբ:

Եթէ կանոնադրութիւնը մշակւած է ինքնուրոյն
կերպով, արտել կազմող անձանց ձեռքով, այդ գէպ-
քում այդ կանոնադրութեան նախագիծը, ինզրի հետ
միասին ուղարկում է պօստով ֆինանսների նախա-
րարին:

Խնդիրը գրւում է այսպէս.

Նորին Գերազանցութեան

Ժինանսների Պարոն նախարարին.

Այս ինչներից (նշանակել կանոնադրութիւնը
ստորագրող գլուղագիների կոչումը, անոնք,
հայրանունը, ազգանունը, բնակավայրը):

Խ Ն Դ Ի Ռ

Ներկայացնելով սորա հետ արտելի
կանոնադրութեան նախագիծը, պատիւ ունենք խընդ-
րելու Զերդ Գերազանցութեանը հաստատել այդ՝ ար-
դիւնաբերութեան կանոնադրութեան 282 յօդ. Նկա-
տողութիւն հիման վերայ: (Ստորագրութիւններ):

Խնդրի և կանոնադրութեան նախագծի վերայ
կպցնուում է գերբային մարկաներ, առանց որի խըն-
դրել նոյն իսկ չի ել նայւի:

Խնդրի վերայ երկու 75 կոպէկանոց, այսինքն
1 լ. 50 կոպ., իսկ կանոնադրութեան—իւրաքանչիւր
զրած թերթի վերայ մէկ 75 կոպ. մարկա:

Եթէ գիւղացիք ցանկանում են ստանալ հաս-
տատւած կանոնադրութեան պատճէնը, դրա համար
պէտք է ուղարկեն նոյնակիսի քանակութեամբ գերբ.
մարկա, ինչ որ կանոնադրութեան, իսկ խնդրի մէջ
պէտք է աւելացնել պատճէնի համար ուղարկում
ենք այսքան մարկա:

Արտելը կարող է սկսել իր գործունէութիւնը
միայն կանոնադրութեան հաստատումից յետոյ:

Այս տեսակի, արտելչիկների իրենց կազմած կա-
նոնադրութեան հաստատումը շատ ժամանակ է պա-
հանջում: Ֆինանսների նախարարը հարցնում է հիմ-
նադիրների բարեյուսութեան մասին նահանգապետին,
նահանգապետը տեղական իշխանութեան, և դրա վե-
րայ ահագին ժամանակ է կորչում:

Շատ աւելի հեշտ է բացել արտելը օրինակելի կանոնադրութեան հիման վերայ, որ հաստատւած է գինանների նախարարութեան կողմից 1905 թւին:

Այն անձինք, որոնց համար «արտելների օրինակելի կանոնադրութիւնը» յարմար կլինի, պլատի լցնեն միայն կանոնադրութեան բայց տեղերը, կպցնել մարկաներ, ինչպէս և առաջին դէպրում իւրաքանչիւր թերթին մի հատ 75 կ. մարկա և ապա ուղարկել, արդէն ոչ թէ ֆինանսների նախարարութեան, այլ տեղական նահանգապալետին, այսպիսի խնդրի հետ:

Նորին Գերազանցութեան

Պարոն (այսինչ) նահանգապետին.

Այսինքերի (անուն, հայրանուն ազգանուն և այլն):

Խ Ն Դ Ի Ծ

Ներկայացնելով սորա հետ . . . արտելի կանոնադրութեան նախադիմը և նրա պատճենը, պատիւ ունենք խոնարհարար խնդրել Զերդ Գերազանցութեան հաստատել այդ 1902 թ. յուն. 1 արտելների պօլօժենիայի 4-րդ յօդւածի հիման վերայ, և պատճենը ուղարկել մեզ: (Ստորագրութիւններ):

Խնդրին կպցնելում է 2 հատ 75 կոպ. մարկաներ: «Օրինակելի կանոնադրութեան» բանկները կովկասում կարելի է ստանալ կովկասեան և Հայոց Գիւղատնտես. Ընկերութեան Վարչութիւնից:

Որովհետեւ համարեա բոլոր արտելների ընդհանուր վիճակն է շրջանառութեան դրամագլուխի պակա-

սութիւնը, ամեն մի արտել գեռ նոր հիմնւած, ձըգտում է փոխառութիւն անել իր գործերի զարգացման համար, ուստի և փոխառութիւն անելու կարգի մասին կարելի է հետեւեալ ցուցումներն անել.

Արտելները կարող են փոխառութիւն խնդրել 1) իրենք անմիջապէս պետական բանկից փոխադրձ երաշխաւորութեամբ, միանալով դրա համար, եթէ բանկը պահանջի, երկու-երկու արտելներ, կամ 2) բանկին յայտնի մի յուսալի անձնաւորութեան երաշխաւորութեամբ: Պետական բանկից փոխարինութիւն խնդրելու համար պէտք է բանկից բերել առանձին ըլանկներ: Պէտք է ի նկատի ունենալ, որ ապասիկները արգելը են հանդիսանում փոխարինութիւն անելու պետակ. բանկից: Փոխարինութեան խնդրին բաւարարութիւն արւում է բաւականին ուշ՝ շնորհիւ նրան որ հարցաքննութիւն է կատարուում արտելների առևտրական և քաղաքական բարեյուսութեան մասին:

Յամենայն դէպս, նոր կանոնադրութիւն կազմելու դէպրում, միշտ պէտք է ի նկատի ունենալ օրէնքի բոլոր այն յօդւածները, որոնք վերաբերում են արտելներին: Միայն այն ժամանակ կանոնադրութիւնը կ'հաստատեի, եթէ համաձայնեցրած լինի օրէնքների հետ:

Տեղեկութիւնների և դեկավարութեան համար այստեղ դնում ենք 1902 թ. յուն. 1-ի «Աշխատաւորական պօլօժենիայի» լիակատար բնագիրը:



ԱՇԽԱՏԱԿՈՐԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ.
(Բարձրագոյն հաստատւած 1902 թ. յունիսի 1 ին):

1. Աշխատաւորական արտելներ ճանաչւում են այնպիսի ընկերակցութիւնները, որոնք կազմւել են որոշ աշխատանք կամ այ հետային նիւթեր արտադրելու, նոյնպէս և մասնակց ողների անձնական աշխատանքով որոշ ծառայութիւններ կամ պաշտօններ վարելու՝ իրենց ընդհանուր հաշւով ու փոխադարձ երաշխատութեամբ:

2. Աշխատաւորական արտելները կազմւում են կամ կանոնադրութեան և կամ պայմանաւորման համար գոյութիւն ունեցող որոշումների հիմանց վերայ:

3. Կանոնադրութեան հիման վերայ գործող արտելների վերաբերմամբ գործադրում է ստորև գրած (4—27) յօդւածների որոշումները:

4. Արտելների կանոնադրութիւնը ներկայացւում է ի հաստատութիւն, ըստ արտելի վարչութեան տեղի, տեղական նահանգապետին: Հաստատւած կանոնադրութիւնները նրա կարգադրութեամբ հրատարակում են տեղական նահանգական վեցօմոսաներում:

5. Եթէ նահանգապետը գժւարանում է որոշ արգելքների պատճառով հաստատել կանոնադրութիւնը, նա մի ամսւայ ժամանակամիջոցում, հաշւած կանոնադրութիւնը ստանալու օրից, ներկայացնում է այդ մասին գինանոների նախարարին, որ և, համա-

ձայնութեան գալով պատշաճաւոր տեսչութիւնների հետ, լուծում է ծագած կասկածը:

6. Հաստատման ներկայացրած արտելների կանոնադրութիւնները պիտի ստորագրւեն առնւազն հիմք հիմնադիրների կողմից և պիտի պարունակեն հետեւալները.

1). Արտելի անունը, նպատակները և գործունէութեան վայրը, յիշելով գործունէութեան ժամանակամիջոցը, եթէ հիմնւած է ժամանակաւրապէս:

2). Անդամների ու աշակերտների ընդունելութեան պայմանները, նոցա իրաւունքներն ու, պարտականութիւններն, նոյնպէս և դոցա դուրս գալու ու հեռացնելու պայմանները:

3). Արտելի մէջ վարձու աշխատանքի գործադրելու պայմաններն, կարգը և սահմանները:

4). Արտելի անդամներին տուգանքի ենթարկելու կարգը, ինչպէս և նոցա վերայ դրւելիք դրամական տուգանքի ամենամեծ չափը:

5). Արտելի անդամների պատասխանատւութեան չափը արտելի պարտաւորութիւնների դիմաց, եթէ այդ պատասխանատւութիւնը սահմանափակում է (յօդ. 19):

6). Արտելից դուրս եկող կամ հեռացող անդամների հասանելիք գումարների տրման ժամանակամիջոցները և այլ պայմանները, նոյնպէս և այն ժամանակամիջոցները, որի ընթացքում վերոյիշեալ անդամները շարունակում են պատասխանատւ լինել արտելի պարտաւորութիւնների դիմաց, եթէ այդպիսի պար-

- տաւորութիւնների համար որոշած է մի տաւուց աւել ժամանակամիջոց (յօդ. 25):
- 7). Արտելի դրամագուխների պահելու, կազմելու և ծախսելու եղանակը:
 - 8). Անդամավճարների մացնելու կարգը. արտելի մնացները ծածկելու եղանակը:
 - 9). Արտելի գործերի կառավարչութեան եղանակը, ցոյց տալով դրա կազմումն, իրաւունքները և պարտաւորութիւնները և նրա կազմի մէջ մտնող անձնաւորութիւնները, նոյնպէս և նոցա ընտրութեան պայմանները. արտելի մասնակցողների և վարչութեան կազմի անւանացուցակների կազման եղանակը. ընդհանուր ժողովների գումարման ժամանակամիջոցները, և գործերի վճռման կարգը այդ ժողովներում:
 - 10). Արտելի հաշւետութեան և լիկիդացիայի եղանակի ընդհանուր հիմքերը:
- Արտելի կանոնագրութեան մէջ կարող են մտնել և այլօրէնքներին չհակասող որոշումներ:
7. Ֆինանսների նախարարը, համաձայնութեան գալով միւս պատշաճ տեսչութիւնների հետ, կարող է հրատարակել դեկավարութեան համար աշխատաւոր արտելների տարբեր տեսակների համար առանձին օրինակելի կանոնագրութիւններ:
 8. Կանոնագրութեան հաստատումից յետոյ արտելի ընդհանուր ժողովը ճանաչում է նրան կայացած և ընդհանուր ժողովի այդ որոշման մասին յայանում է նահանգապետին: Այս որոշման կայացումից սկսած արտելը ստանձնում է բոլոր այս իրաւունքներն ու պարտաւորութիւնները, որ արւած է նրան այս դրութեամբ:

9. Արտելի անդամ կարող են լինել երկու սեռի անձնաւորութիւններ ևս, 17 տարեկանից ոչ պակաս: Արտելի անդամների թիւը սահմանափակ չէ:
10. 17 տարեկանից մինչև 21 տարեկան անձնաւորութիւնները կարող են ընդունել արտելի մէջ կանոնագրութեան հիման վերայ, բայց իրաւունք չունեն գործերի կառավարչութեան մէջ մտնելու:
11. Արտելի աշխատանքների մէջ անդամների մասնակցութեան, իրենց անձնական աշխատանքով, եղանակը որոշում է կամ կանոնագրութեամբ կամ ընդհ. ժողովում:
12. Արտելը կարող է՝ ձեռք բերել գոյքեր, պայմանաւորութիւնների մէջ մտնել, պահանջ ներկայացնել և պատասխանել գատարանում: Արտելներին թոյլ է տրում ունենալ իրենց արդիւնաբերական և առետրական հիմնարկութիւնները:
13. Արտելը կառավարում է իր անդամների ընդհ. ժողովի կողմից, որը գործերի անմիջական կառավարչութեան ու անօրինութեան համար ընտրում է իր միջից անհրաժեշտ քանակութեամբ անձնաւորութիւններ: Կանոնագրութեան մէջ կարելի է նախատեսել վիտարինելու ընդհանուր ժողովը վագօրների ժողովով:
14. Ընդհ. ժողովում իւրաքանչիւր անդամ ունի մէկ ձայն. ձայնի իրաւունքը կարելի է, բացակայելու դեպքում, ընձեռնել (տալ) միայն արտելի անդամներին՝ կանոնագրութեան մէջ որոշած պայմաններով:
15. Ընդհ. ժողովը համարում է կայացած, եթէ մասնակցող անդամները անձամբ կամ հաւատարմագրով կազմում են անդամների թւի կեսից ոչ պա-

կաս. գործերը վճռում են ձայների պարզ մեծամասնութեամբ: Կանոնադրութեան փոխուման ու լըրացման, արտելից անդամներ հեռացնելու, պաշտօնական անձնաւորութիւնների ընտրած ժամանակից շուտ արձակելու, փոխառութիւն կնքելու, արտելի փակման և գործերի լիկվիդացիայի հարցերի վճռման համար պահանջւում է բոլոր անդամները $\frac{2}{3}$ -ից ոչ պակաս. անդամների մասնակցութիւնը՝ անձամբ և հաւատարմագրով: Այս հարցերի վերաբերեալ որոշումները կարող են կայանալ միայն այն ժամանակ, եթե ընդհ. ժողովում կայանայ մասնակցողների ձայները $\frac{2}{3}$ մեծամասնութիւն: Կանոնադրութեան մէջ կարելի է նախատեսել, բացի յիշեալներից նաև այլ հարցեր, որոնց վճռման համար պահանջւում է ձայների ուժեղացրած մեծամասնութիւն:

16. Անդամավճարները տրուում է ինչպէս զրամով, նոյնպէս և արտելի համար անհրաժեշտ առարկաներով:

17. Անդամավճարը բոլորի համար պիտի միաւտեսակ լինի: Իսկ արտելի վաստակի բաժանումը անդամների մէջ կատարւում է, ըստ իւրաքանչիւրի կատարած անձնական աշխատանքի, ընդհ. ժողովի որոշմամբ:

18. Իր վերայ վերցրած պարտաւորութիւնների համար, որպէս և արտելի անդամների իրենց վերայ վերցրած պարտաւորութիւնների ճշտութեամբ կատարման համար և առհասարակ արտելի վերցրած գործերում անդամների և վարձու աշխատաւորների հասցրած վսասների դիմաց արտելը պատասխանատու է իր ամբողջ ունեցւածքով: Արտելի վճարած գումարները վերջինս կարող է պահանջել այն անձնա-

որութիւններից, որոնց անուշադրութեան կամ մեղաւորութեան պատճառով արտելը վսաս է կրել:

19. Արտելի գոյքերի չբաւելու դէպքում այդ գումարների դիմաց, որ պիտի վճարէ արտելը, նրա անդամները, փոխադարձ երաշխաւորութեամբ, պատասխանատու են իրենց բոլոր ունեցւածքով, շարժական և անշարժ, առանց սահմանափակման կամ այն սահմաններում, որ որոշւած է արտելի կանոնադրութեան մէջ (յօդ. 6 կ. 5.):

20. Փոխադարձ երաշխաւորութեան համաձայն պատասխանատուութիւնը բոլոր անդամների վերայ ընկնում է հաւասար չափով, եթէ կանոնադրութեան մէջ չէ նախատեմնուած ըստ համաշափութեան պատասխանատուութեան հիմքերը: Մէկ կամ մի քանի անդամից չստացած պակասորդը բաժանուում է նոյն ձևով միւս անդամների վերայ: Ուրիշի փոխարէն վըճարող անդամները կարող են պահանջել այդ նոյնականից:

21. Արտելի մէջ մտնող անդամը պատասխանատու է նաև այն պարտաւորութիւնների համար, որ ծագել են մինչև նրա անդամ մտնելը:

22. Արտելի գոյքերը և զրամագլուխները չեն կարող ծառայել իբրև առարկայ անդամների անձնական պարտքերի և պարտաւորութիւնների պահանջի բաւարարութեան:

23. Անդամների անձնական պարտքերի ու պարտաւորութիւնների պահանջները կարող են բաւարարեցնել նոյն արտելի վաստակից հասանելիք բաժնից, միայն պահպանելով արդիւնաբերութեան կանոնադրութեան 100 յօդւածում, բանւորների աշխա-

տավարձից պլահանջներին բաւարարութիւն տալու,
որոշած պայմանները:

24. Արտելի անդամները, արտելի վերցրած պարագաւորութիւնների կամ կանոնադրութեան ու ընդհ. ժողովի որոշումների չկատարելու դէպքում, նոյնպէս և պախարակելի վարմունքի կամ դէպի աշխատանքն ունեցած անփութութեան դէպքում, բացի պատճառած միամների պատասխանատութիւնը, կարող են ենթարկել, կանոնադրութեան որոշած եղանակով, պախարակման, դրամական տուգանքի, ժամանակաւորապէս արտելից հեռացման և վերջնական արձակման արտելից:

25. Դուրս եկող կամ դուրս արւող անդամին արւում է կանոնադրութեան մէջ որոշած ժամանակամիջոցի ընթացքում, նրա հաշվին եղած գումարները, հանելով, պէտք եղած դէպքում, նրանից առնելիք տուգանքներն և արտելի կրած միամների համապատասխան մասը: Դուրս եկած կամ դուրս արւած անդամը գեռ ևս մի տարւայ ընթացքում, եթէ կանոնադրութեամբ չէ որոշած աւելի երկար ժամանակամիջոց, շարունակում է միւսների հետ միասին կրել պատասխանատութիւն արտելի այն պարտաւորութիւնների վերաբերմամբ, որ ծագել են նրա անդամութեան օրօք:

26. Արտելների գոյութիւնը դադարում է 1) լրացմամբ այն ժամանակամիջոցի, որ որոշած է նրանց գոյութեան համար, 2) աւարտմամբ այն աշխատանքների, որոնց համար հիմնել են, 3) արտելի անդամների ընդհ. ժողովի որոշմամբ, 4) նահանգապետի որոշմամբ, եթէ նրա գործունէութիւնը կճանաչ-

ւի անհամաձայն կանոնադրութեան հետ կամ հակառապող գոյութիւն ունեցող օրէնքների:

27. Արտելի դադարման դէպքում նրա գոյքը բաժանւում է անդամների մէջ կամ յատկացւում այլ նպատակի այն կարգով, որ որոշած է կանոնադրութեան մէջ. իսկ եթէ կանոնադրութիւնը այդ չի նախատեսել—ընդհանուր ժողովի հայեցողութեամբ:

X

ԻՆՉՊԵՍ ԲԱՑԵԼ ԻՒՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՐՏԵԼ.

Նախ և առաջ պէտք է որոշել, թէ քանի հոգի են մասնակցելու և ապա հաշւել իւրաքանչյուր անդամի կթու կովերի թիւը: Որքան շատ անդամ—այնքան լաւ: Իրարից 3—5 վերստ հեռաւորութիւն ունեցող գիւղերը համարձակ կարող են մի արտելով կառավարւել:

Փորձը ցոյց է տւել, որ գործի յաջողութեան համար բոլոր զիւղացի—անդամների կովերի ընդհանուր թիւը լինելու է 300-ից ոչ պակաս:

Եթէ պէտք եղած քանակութեամբ կովերը հաւաքւեն, գումարում է ընդհանուր ժողով և կապւում է արտելային պայման, որի մէջ անպատճառ պէտք է մտցնել հետեւալ պայմանը. կաթը պէտք է տալ միայն մէկ արտելի գործարանին և ոչ թէ ուրիշներին էլ:

Իւղագործութեան արտելների համար թէ կ գոյութիւն ունեն պայմանների առանձին ձևեր, սակայն նոցանից և ոչ մէկը չի համարւում օրինակելի: Զիայ նոյնպէս իւղագործութեան արտելների բը-

Նական օրինակելի կանոնադրութիւն, այդ պատճառով
էլ ստիպւած պէտք է կազմեն իրենք հիմնադիրները
և անցկացնեն նախարարի միջոցով։ Յանձնարարում
է իբրև մշակւած նորմաներ օգտւել «Սիբիրի իւղա-
գործութեան միութեան» պայմաններով ու կա-
նոնադրութիւններով։ հասցէն. ր. Կурганъ, Тоболь-
ской губ. „Сибир. Маслодѣльный Союзъ“.

Պայմանը պէտք է վաւերացրւի շինական կառա-
վարութեան մէջ կամ նօտարի մօտ։

Պայմանի ձեր ամբողջապէս կախւած է գիւղա-
ցիներից։ Բայց ամենից աւելի յարմար ձեր համար-
ւում է Բալաշինի Սիբիրի իւղագործութեան ար-
տեների պայմանների ձերը, որը և կարելի է յանձ-
նարարել, իբր գործնականում փորձւած ձեւ։

ԻԻՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՐՏԵԼԻ ՊԱՅՄԱՆԻ ԶԵԽԸ

«Հազար իննհարիւր. . . թիւ, ամսի. . . : Մենք ի
ներքոյ ստորագրեալներ. . . . նահանգի. . . . գա-
ւառի. . . գիւղի ընկերութիւններ, թւով. . . հոգի (տուն),
օգտաւէտ և անհրաժեշտ գտնելով հիմնել իւղագոր-
ծութեան ընկերակցութիւն (արտել կամ կօօպե-
րացիա), կապեցինք մեր մէջ սոյն պայմանը։

1) Կապալով վեցնել. . . գիւղում հող մեր ըն-
կերակցութեան գործարանի համար. 2) շինել մեր
ընկերակցութեան իւղագործութեան գործարանը և
դնել անհրաժեշտ մեքենաները. 3) մինչև սեփա-
կան իւղագործութեան գործարան շինելը, հիմնել
գործարանը վարձու շինութեան մէջ. 4) ենթարկել
այն օրէնսդրութիւններին, որոնք վերաբերում են
իւղագործութեան ընկերակցութիւններին՝ 5) պա-

նել մեր ընկերակցութեան գործերը վարելու համար
հաւատարմատար, իսկ եթէ ցանկալի գտնուի՝ նաև
խորհրդատուններ. 6) մեր վերցրած բոլոր առարկանե-
րի համար պարտաւորւում ենք վճարել իր ժամանա-
կին, պայմանաւորւած ժամանակամիջոցում, միմեանց
փոխադարձ երաշխաւորութեամբ. 7) մենք, ընկերնե-
րու, պարտաւորւում ենք տանել գործը համերաշխ
յօգուտ ընդհանուրի և մեր կովերի կաթը չտալ ուրիշ
գործարանների։ Իսկ եթէ մեզանից որևէ է մէկը
սկսէ կաթ տալ ուրիշ գործարանի, պարտաւոր է վը-
ճարել յօգուտ ընկերակցութեան 5 բուրփի տուգանք՝
ամեն մի կովի համար, որոնց թիւը համարւում է
այն քանակութիւնը, որ ունեցել է զանցառուն սոյն
պայմանը ստորագրելիս, որպիսի թիւը որոշելու հա-
մար իւրաքանչիւր անդամ պայման ստորագրելիս
ներկայացնում է նաև իր ունեցած կովերի թիւը։
Ստորագրութիւններ։

Այդ Միութիւնը նպատակ է դրել միացնել ար-
տեներին, որպէսզի կարողանայ արտեներ գործարա-
նի իւղերը վաճառել անմիջապէս գնողներին և ձեռք
բերել այդ նպատակի համար անհրաժեշտ նիւթերն
ու ապրանքները տուածին ձեռքից։

Միութեան վարչութիւնը վարում է գործերը
համաձայն բոլոր արտեների լիազօրների ընդհանուր
ժողովի որոշման։

Միութիւնը ներկայումս զբաղւում է իւղի ան-
միջական արտահանութեամբ, ինչպէս ներքին, նոյն-
պէս և արտասահմանեան շուկաներում։

Մատակարարում է արտեներին կաթնային արն-
ակսութեան համար անհրաժեշտ բոլոր պատկանելիք-

ներով։ Վերցնում է իր վերայ նաև նոր իւղագործարանային արտելների լիակատար սարքումն։

Միութիւնը, համաձայն իր կանոնադրութեան, կատարում է իւղագործարանային արտելների ամեն տեսակ յանձնարարութիւն։ Կարեոր դէպքերում արտելները կարող են ստանալ միութիւնից իւղագործութեան վարպետներ և պրակտիկ-ուսուցիչներ։

Միութեան կից գոյութիւն ունի իւղագործութեան վարպետների ընկերութիւնը։ Նա իր արամադրութեան տակ ունի յատուկ դպրոցական իւղագործութեան վարպետներ, յանձնարարում է իւղագործութեան արտելներին վարպետ ստանալու համար դիմել Վարպետների Միութեանը, որը ուղարկելով վարպետ, վերցնում է նրա գործողութիւնների պատասխանատութիւնը իր վերայ։ Բայց այդ, ընկերութիւնը ունի նաև փորձնական դպրոցներից մարդիկ, որոնց նոյնպէս յանձնարարում է արտելներին։ Իբր գործնականին տեղեակ ուսուցիչներ։

Ամենայն տեսակ տեղեկութիւնների և ցուցումների համար կարելի է դիմել այս հասցէով՝ ր. Կур-
գանъ, въ главную контору Союзъ Сибирскихъ
маслодѣльныхъ Артелей.

XI

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Նախորդ գլուխներում մենք ցոյց տվինք, թէ ինչպէս պէտք է բացել զանազան տեսակի կօօպերա-
տիւ ընկերութիւններ։ Ընկերութիւնների և ընկե-

րակցութիւնների բացման ձևը նա է՝ դոքա յարմա-
րեցւած են կառավարութեան կողմից հաստատւած բը-
նական կամ օրինակելի կանոնադրութիւններին։

Մեր կօօպերատիւնների բացման այդ եղանակը բա-
ւարարութիւն է տալու ոչ ամենքին։ Գիւղական սպա-
ռողական կամ գիւղատնտեսական ընկերութիւնների հիմնադիրներին բնական կանոնադրութիւնը բոլորով-
վին գուր չի գալիս. ապա ի՞նչպէս անել։

Արևմտեան Եւրոպայում, համարեա բոլոր եւրո-
պական պետութիւնների մէջ, չկայ ոչ մի տեղ այդ-
պիսի պարտաւորեցուցիչ «բնական» կանոնադրու-
թիւններ։ Այդ երկրների մեծամասնութեան մէջ կօօպերա-
տիւ ընկերութիւնների իրաւունքներն ու պարտակա-
նութիւններն։ Ղեկավարելով այդ օրէնքներով, այն-
տեղ իւրաքանչիւր կօօպերատիւ ընկերութիւն կարող է կազմել իր ուղած կանոնադրութիւնը։ Նա կարող է որքան անգամ որ կամենայ փոփոխել, լրացնել և այլն իր կանոնադրութիւնը։

Իսկ մեղանում, Ռուսաստանում, կօօպերատիւ օրէնքրութեան բացակայութեան պատճառով, մեր կօօպերատիւնների իրաւունքները սահմանափակւած են նրանով, որ իւրաքանչիւր կօօպերատիւ ընկերու-
թեան կանոնադրութիւնը պէտք է դեռ հաստատի վարչական իշխանութեան կողմից։

Այդ թոյլտութեան ստանալու դիւրացման հա-
մար է, որ գոյութիւն ունեն բնական և օրինակելի
կանոնադրութիւնները, որոնք թէև դեռ ամենենին կա-
տարեալ չեն և շատերի համար անպէտք են, սակայն

Նոցա հաստատութիւն ստանալը տեղական նահանգապետից բաւականին հեշտ:

Այժմ մենք ցանկանում ենք ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է վարւել այն դէպքում, երբ սպառողական, գիւղատնտեսական ընկերութիւնների հիմնադիրները, չհրապուրւելով կանոնադրութեան հաստատման հեշտութեամբ, անպէտք կհամարեն հաստատւած կանոնադրութիւնները և կցանկանան անձամբ մշակել իրենց համար յարմար կանոնադրութիւն:

Ինչ էլ որ լինի, մեր օրէնքներով իսկ, կարելի է որոշ ճանապարհով հաստատել տալ սեփական կանոնադրութիւնը:

Բոլոր կօօպերատիւ ընկերութիւնների համար այդ դէպքում կայ միայն մի ճանապարհ և միատեսակ կարգ:

Կազմելով կանոնադրութիւնը, հիմնադիրները պէտք է դիմեն խնդրով. 1) սպառողական ընկերութիւնների բացման դէպքում—ներքին գործոց նախարարին, 2) գիւղատնտեսական ընկերութեան ու ընկերակցութեան—հողագործութեան և հողաշինարարութեան կառավարչապետին, 3) վարկի կամ փոխառու.՝ խնայողականի—ֆինանսների նախարարին և 4) արտելների—ֆինանսների նախարարին:

Բայց որովհետեւ այդ ճանապարհով նախադի հաստատել տալը ամիսներ, երբեմն տարիներ է խլում, ուստի այդիսի դէպքերում հիմնադիրները, գործը արագացնելու համար, հաւատարմագիր են տալիս իրենց ճանաչած մայրաքաղաքում ապրող մի անձնաւորութեան կամ ուղարկում են իրենց հաւատարմատարին, որը և գործը զլուխ է բերում:

Աւելորդ ժամանակի կորուստից և ծախսերից

խուսափելու համար կանխապէս պէտք է հաւատարմագիր տալ հաւատարմատարին, որ նա կարողանայ վարել հաստատման վերաբերեալ բոլոր գործերը: Հաւատարմագիրը պէտք է հաստատել տալ կամ նոտարի մօտ և կամ շինական կառավարութեան մէջ:

Յիշեալ նախարարները կարող են իրենց իշխանութեամբ հաստատել ներկայացրած կանոնադրութիւնները: Եթէ նախարարը անհրաժեշտ գործի փոփոխութիւններ մտցնել, կանոնադրութիւնը ուղարկուում է յետ զիւղը՝ նորից արտագրելու և ստորագրելուու: Իսկ եթէ ուղարկած է հաւատարմատար, գործը հեշտանում է՝ նա ստորագրում է փոփոխած կանոնադրութիւնը միւսներից ստացած լիազօրութեան հիման վերայ: Փոփոխած կանոնադրութեան վերայ կպցըրած է նոյնքան մարկաներ, որքան և առջինի վերայ և նորից ուղարկուում նախարարին:

Նախարարը կարող է մերժել երկու պատճառով. կամ հիմնադիրները անբարեյոյս են համարւել կամ գտել է որ կանոնադրութիւնը հակասում է օրէնքին:

Այդ դէպքում կարելի է փոխարինել հիմնադիրներին, կամ փոփոխել կանոնադրութիւնը:

Իսկ եթէ գիւղացիք գտնեն նախարարի որոշումը անկանոն կամ չեն կարող համաձայնել նրա առաջարկած փոփոխութիւնների հետ, այդ դէպքում նոքա կարող են դիմել կառավարիչ Սենատի 1-ին դեպարտամենտին:

XII

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՍԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Իրենց տնտեսութեան բարելաւման գործում ցըւած, միմեանցից կտրւած գիւղացիք անզօր են ուրեմ բան անել. այդ պատճառով էլ նոքա միանում են ու կազմում իրենց սեփական կօպերատիւ, օրին. գիւղատնտեսական ընկերութիւնը կամ ընկերակցութիւնը:

Անհատների միացման այդպիսի ձևի օգուտները բաւականաչափ պարզեցինք մենք նախորդ գլուխներում:

Սակայն, չնայած գիւղատնտեսական ընկերութիւնների ամբողջ ուժերին, նրանց համար ևս կայ մի սահման, որից այն կողմը անզօր են անցնելու իրենք ընկերութիւններն իսկ: Այստեղ արդէն անհրաժեշտ է դառնում կազմել միութիւն ոչ թէ անհատների, այլ ընկերութիւնների:

Մի քանի գաւառների ու գաւառակների գիւղատնտեսական ընկերութիւնները եթէ միանալու լինեն, այդպիսի միացումից կարող են դուրս բերել այնպիսի օգուտներ, որը չի կարող անել ոչ մի գիւղատնտեսական ընկերութիւն և ընկերակցութիւն առանձին վերցրած:

Այդպիսի օգուտների շարքին է պատկանում, օրինակ, մի ընդհանուր գիւղատնտեսական մեքենաների ու սերմացուների պահեստի հիմնումն, որը անշուշտ շատ էֆան կնստի ամեն մի ընկերութեան,

քան եթէ ունենալ 20 առանձին պահեստներ. դա կ'էժանացնի և մեքենաները, չորսիւ մեծ քանակութեամբ՝ գումարով գնելուն:

Ուրիշ երկրներում գիւղատնտեսական ընկերութիւնները ունեն իւրաքանչիւր շրջանի համար շրջանային միութիւն, իսկ ամբողջ երկրի համար՝ կենտրոնական միութիւն: Բուսաստանում այդ գործը գեռշատ մատադ է. կենտրոնական միութիւն գեռ ևս չկայ. շրջանային միութիւն կայ երկու հատ միայն. 1) Պետերբուրգի կենտրոնական գիւղատնտեսական ընկերութիւն և 2) Ռիգայի գիւղատնտեսական ընկերութիւն:

Բոլոր այն նահանգներում, ուր արդէն զգացւում է կարիք մտցնելու գիւղատնտեսական միութիւնները, յանձնարարում է ձեռնարկել շրջանային գիւղատընտեսական միութիւնների ջանքերին: Ճիշտ է, դա հեշտ գործ չէ: Բայց առանց դրան չի լինի. վաղ թէ ուշ պիտի սկսել այդ:

Մեզանում, կովկասում այդպիսի շրջանային գիւղատնտեսական միութիւնների գերը որոշ չափով, իւր կանոնադրութեան սահմաններում, կատարում է թիվը. չայոց գիւղատնտեսական և Տնայնագործ. Ընկերութիւնը, որի հետ մանրամասնօրէն ծանօթանալու համար ստորև դնում ենք նրա կանոնադրութիւնը:

ԳԻՒՂԱԿԱՆ ԿՕՊԵՐԱՑԻԱՑԻՆ ԱԶԱԿՑՈՂ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Եւրոպական երկրներում, բացի զուտ կօպերատիւ հիմնարկութիւններից՝ ընկերութիւններից, միութիւններից, որոնց նպատակն է իրականացնել ու տա-

լրածել կօօպերատիւ սկզբունքները, կան մի շարք բազմատեսակ հիմնարկութիւններ, որոնք հիմնւած են կամ աւելի լայն նպաստակների ու գործունէութեան համար և կամ առանձնապէս հէնց նրա համար, որ ցոյց տան ամենայն տեսակ աջակցութիւն արդէն գոյութիւն ունեցող կամ հիմնւելիք կօօպերատիւ հաստատութիւններին, սկսած նիւթական նպաստից մինչև խորհուրդներ ու հրահանգներ տալը:

Մուսաստանում ևս գոյութիւն ունեն, թէև աւելի սահմանափակ չափերով, նոյնանման հաստատութիւններ, ինչպէս՝ զեմստվո, Մօսկվայի Գիւղատնտեսական Ընկերութիւնը, զիւղական փոխախնայողական արդիւնաբերական ընկերակցութիւնների կօմիաեաի Ս. Պետերբուրգի բաժանմունքը, Վիլնայի կօօպերացիայի խրախուսող ընկերութիւնը և այլն, իսկ պետական հիմնարկութիւններից—Պետական Բանկը և Մանր Վարկի Գործերի Վարչութիւնը, հոգագործութեան և հողաշինութիւն գլխաւոր վարչութիւնը, առևտորի և արդիւնաբերութեան նախարարութեան արդիւնաբերութեան բաժանմունքը:

Իբրև օրինակ, մենք այստեղ բերում ենք դոցանից մէկի—Վիլնայի կօօպերացիայի խրախուսող ընկերութեան նկարագրութիւնը, որի նման ընկերութիւնների հիմնումն ու տարածումն մեղանում՝ կողկասում, օրւայ հարց է և կարող է մէծ ծառայութիւն անել կօօպերացիայից խոպան մեր երկրում:

Վիլնայի Կոօպերացիան Խրախուսող Ընկերութիւն
Վիլնայի կօօպերացիայի խրախուսող Ընկերութիւնը բացել է իր գործունէութիւնը 1908 թ. նոյեմբերին:

Ընկերութեան գործունէութիւնը կրում է զուտ պատրօնատի, հովանաւորիչի բնաւորութիւն և կայանում է հետեւելում:

ա) Ընկերութիւնը ունի Վիլնա քաղաքում Տեղեկատու Բիւրօ, որտեղ լի օրերը ժամի 5—6-ը տըրւում է ձրի խորհուրդներ, ցուցումներ, օրինակելի կանոնագրութիւններ, հրահանգներ՝ ինչպէս ամեն տեսակի կօօպերատիւնների անդամներին ու վարչութիւններին, նոյնպէս և այն անձանց, որոնք ցանկանում են հիմնել նման ընկերութիւններ:

բ) Միջնորդում է պատշաճաւոր իշխանութիւնների առաջ վերցնելու այն արգելվները, որ կամցնում են կօօպերատիւ ընկերութիւնների հիմնումն ու նորմալ գարգացումը:

գ) Հրատարակում է կօօպերացիային վերաբերող ձեռնարկներ, գրքոյներ, թերթիկներ՝ տեղական լեզուներով և հոգում նրանց տարածմանը:

դ) Ուղարկում է իր անդամներին միանգամայն ձեռնուու պայմաններով, իբրև գիտակ անձնաւորութիւններ՝ զեկալիարելու գոյութիւն ունեցող կօօպերատիւ ընկերութիւնները կամ նորերը հիմնելու:

ե) Ուղարկում է հրահանգիչներ՝ կօօպերատիւ ընկերակցութիւններում հաշւապահութիւն մացնելու համար, վերցնում է իր վերայ ընկերութիւնների հաշւապահութեան մշտական հսկումն, սառւցում է տարեկան հաշւեկշիռները և կազմում է հաշւէտութիւն՝ իշխանութեանը ներկայացնելու համար:

Ընկերութեան Բիւրօյում կարելի է ձեռք բերել փոխատու-խնայողական, վարկի, սպառողական ընկերութիւնների և աշխատաւորական արտեների օրինակելի կանոնագրութիւն:

Առանձնապէս սպառողական ընկերութիւնների համար պահուում են.

ա) Բնական կանոնադրութիւն չորս տեղական լեզուներով.

բ) Յուցումներ հիմնադիրների համար (նոյնպէս).

գ) Սպառողական ընկերութիւնների բլանկներ՝ Հիւսիս—Արևմտեան շրջանի համար, տպած թերթերով և կցածնահանգապետին տրւելիք խնդրի օրինակով:

դ) Պատասխանատու գործակատարի հետ կապւող պայմանագրի օրինակը.

ե) Սպառ. ընկերութեան տարեհաշւի օրինակը:

զ) Սպառ. ընկերութիւնների հաշւապահութեան ձեռնարկ (տեղական լեզուներով):

է) Մեմօրեալ—գլխաւոր (գլխաւոր հաշւապահական մատեան), երկու չափի, գինը 2 ր. 50 կ. և 4 րուբ:

ը) Խանութի ապրանքների գների հաշւապահական մատեաններ:

Իւր հրատարակութիւնները ընկերութիւնը ուղարկում է վերագիր վճարով, պատասխանի համար պէտք է ուղարկել 7 կ. մարկա:

Վիճայի կօպերացիայի խրախուսող ընկերութիւնը գոյութիւն ունի առանց սուբսիդիայի (պետական նպաստ):

Ըստ հաստատած կանոնադրութեան, ընկերութեան գործունէութիւնը տարածում է միայն Վիճայի նահանգում, սակայն միւս նահանգներից, մասսայական դիմումների պատճառով, ընկերութիւնը ձեռնարկել է միջնորդութեան թոյլ տարու տարածել իւր գործունէութիւնը նաև հարկան նահանգներում:

Ընկերութիւնների վերաբերեալ գործերի թիվը նահանգական տաեանի օրագրական որոշման համաձայն «Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը» մըտցրւած է յուցակի մէջ համարով № 115, ներկայ կանոնագրութիւնը հաստատւած է և նրա գործունէութեան սկզբնաւորութեան արգելքներ չը կան. 2 ապրիլի 1909 թ.

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար՝
Ա. Զերնեավսկի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական լիան Ընկերութեան:

I Ընկերութեան նպատակը

§ 1. Ընկերութեան նպատակն է նպաստել գիւղատնտեսական գիտելիքների և անայնագործական արհեստների զարգացմանը և տարածմանը կովկասի ազգաբնակութեան մէջ:

II Գործունեարկան եղանակները

§ 2. Իր նպատակին համելու համար ընկերութիւնը համապատասխան գէպքերում պատշաճաւոր թոյլաւութեամբ և սահմանաւած կանոնների պահպանութեամբ, կազմակերպում է գործադաշտեր և յուղագաշտեր, հիմում է օրինակելի վերմաներ, բացում է արհեստանոցներ, գալրոցներ և գալրնթացքներ, կազմում է զրոյցներ և գասախօսութիւններ, հրատախորհպակցութիւններ և համագումարներ, հետազոտութիւններ և ձեռնարկներ, գրքոյներ, հետազոտութիւններ և ալբոմներ, կազմակերպում է արդիւնագործութիւններ, պահում է ինստրուկտորներ կամ հրահանգիչներ, կազմակերպում է արդիւնքների յուցահանգիչներ, կազմակերպում է արդիւնքների, նպաստում է արդիւններ և վաճառահանման, յարաբերութիւններ է գիւղների վաճառահանման, կազմում վաճառահանցների հետ և պարզեալրում է ինչպէս արդիւնագործութեան, այնպէս և գործիքների ու օգտաւէտ աշխատանքների համար:

III Ընկերութեան կազմը, անդամների իրաւունքները եւ պարտասորութիւնները

§ 3. Ընկերութիւնը բաղկացած է երկու սեռի անդամներից անսահման թւով՝ ա) պատւաւոր, բ) աշակից և գ) իսկական:

Ծանօթութիւն. Ընկերութեան չեն մասնակցում ա) անչափահասները, բ) զպրոցներուն սովորողները, գ) իսկական զինուոր և թեան ծառայութեան մէջ գտնուող ստորին պաշտօնեաներ և իւնկերներ և դ) այն անձերը, որոնց իրաւունքները դատարանով սահմանափակւած են:

§ 4. Պատւաւոր անդամները կարող են լինել երկու սեռի անձեր, որոնք Ընկերութեան օգտին արել են նշանաւոր նւիրատւութիւններ կամ մատուցել են նրան առանձին ծառայութիւններ: Այդպիսի անդամները առաջարկում են վարչութեան կողմից և ընտրում են ընդհանուր ժողովից:

§ 5. Աջակից անդամներ կարող են լինել երկու սեռի անձեր, որոնք համակրում են ընկերութեան նպատակներին: Աջակից անդամի կոչումը յատկացւում է վարչութեան կողմից, որը գեկուցանում է այդ մասին մերձաւոր Ընդհանուր ժողովին:

§ 6. Իսկական անդամները վճարում են տարեկան 3 բուքի: Միանւագ ոչ պակաս քան 100 բուքի վճարողները ազատում են տարեկան վճարներից և համարում են ընկերութեան մշտական անդամներ:

§ 7. Ընկերութեան անդամ լինել ցանկացողը յայտնում է այդ մասին վարչութեանը:

§ 8. Ընկերութիւնից հեռացած են համարում այն անձերը, որոնք չեն տեղ իրանց անդամավճարը երեք ամսւայ ընթացքում:

§ 9. Ընկերութեան այն անդամները, որոնք անդամին կովկասից դէպի պետութեան ուրիշ մասները կամ արտասահման, կարող են մնալ ընկերութեան անդամներ ընդհանուր հիմունքներով:

IV Ընկերութեան միջոցները

§ 10. Ընկերութեան միջոցները կազմում են

ա) անդամավճարներից, բ) Ընկերութեան գրամագլուխների տօկօններից, գ) նւէրներից, կտակներից, ուրիշ պատահական մուտքերից և ընկերութեան պատկանող գոյցերի եկամուտներից:

Ծանօթութիւնը իր միջոցները ուժիգացնելու նպատակով կարող է կազմել, ամեն անգամ պատշաճաւոր թոյլտութեամբ, համերգներ, ներկայացումներ, երաժշտական և ընտանեկան երեկոյթներ, և այլն:

§ 11. Ընկերութեան գրամական միջոցները դաստուրում են այսպէս՝ ա) հիմնադրամ և բ) շրջանադրամ:

§ 12. Հիմնադրամը կազմում է յատուկ նւիրատւութիւններից հիմնադրամի համար, նաև այն գումարներից, որոնք խրաքանչիւր տարի Ընդհանուր ժողովի կողմից յատկացւում են հիմնադրամի համար:

§ 13. Միւս բոլոր մուտքերը, նոյնպէս և հիմնադրամի տօկօնները կազմում են շրջանադրամ դրամագլուխը, որը գործադրում է ընկերութեան բոլոր ընթացիկ ծախքերի համար:

§ 14. Ընկերութեան մէջ մտնող գրամական գումարները, նոյնպէս ընկերութեան գրամագլուխները պէտք է տօկօններ բերելու համար մատցնելու վարկային հաստատութիւններից մէկի մէջ կամ վերածեն պետական կամ կառավարութեան կողմից երաշխաւուած տօկօսաբեր թղթերի: Առձեռն գրամ ընկերութեան գրամագլուխի մէջ կարող է գտնել միայն ընկերութեան ընթացիկ ծախքերի համար անհրաժեշտ մի գրամ, որի քանակը որոշած կը լինի ընդհանուր ժողովից:

V Ընկերութեան գործերի վարումը

§ 15. Ընկերութեան գործերը վարում են՝ ա) վարչութիւնը և բ) ընդհանուր ժողովները:

Ա. Վարչութիւնը

§ 16. Վարչութիւնը բաղկացած է ընկերութեան նախագահից և վեց անդամից, որոնք ընտրում են

ընկերութեան անդամներից երեքամեայ ժամանակով:

§ 17. Որպէսզի միաժամանակ չը հեռանան վարչութեան անդամները, իւրաքանչիւր տարի դուրս է զալիս նրանց $\frac{1}{3}$ -ը, ընկերութեան գոյութեան առաջին երկու տարիները վիճակով, իսկ յետոյ ընտրութեան անդրանկութեան կարգով և նրանց փոխարէն Ընդհանուր ժողովի կողմից ընտրում է նորերի համապատասխան թիւը:

Ծանօթութիւն. Ընկերութեան կաղմից հեռացող անդամները կարող են նորից ընտրւել, եթէ կը տան իրանց համաձայնութիւնը:

§ 18. Վարչութեան անդամների հիւանդութեան, մահի կամ ժամանակաւոր բացակայութեան միջոցին փոխարինելու համար նոյն կարգով և նոյն ժամանակամիջոցով ընտրում են 2—4 փոխանդամներ: Փոխանդամները մտնում են իրանց պաշտօնավարութեան մէջ՝ ստացած ընտրական ճայների շատութեան կարգով: Նրանց պատասխանատաւութիւնը սահմանափակում է միայն այն ժամանակամիջոցով, երբ նրանք մասնակցել են ընկերութեան դործերի կառավարութեանը:

§ 19. Վարչութեան անդամները ընտրում են իւրաքանչիւր տարի իրանց միջից փոխանախագահ և գանձապահ և բաժանում են իրար մէջ պարապմունքները փոխադարձ համաձայնութեամբ:

§ 20. Վարչութիւնը ժողովւում է ընկերութան գործերով զբաղմունքների համար ըստ չափու անհրաժեշտութեան:

§ 21. Վարչութեան նիստերի օրինականութեան համար անհրաժեշտ է նախադասի և ոչ պակաս քան երեք անդամի ներկայութիւնը:

§ 22. Վարչութեան նիստերի բոլոր գործերը վճռուում են ձայների հասարակ մեծամասնութեամբ: Զայների հաւասարութեան դէմքում նախադասի ձայնը տալիս է գերակշռութիւն:

§ 23. Վարչութեան պարտաւորութիւններն են՝

ա) Ընդհանուր ժողովների որոշումների կատար ածումը, թիւը, բ) հաշւապահութեան և գրադրութեան վարումը, գ) դրամարկղի օպերացիաների գործողութիւնները, դ) անդամ լինել ցանկացողների յայտաբարութիւնների քննութիւնը, ե) ընկերութեան հիմնարկութիւնների գործունէութեան վրայ հսկումը և ղեկավարութիւններ, զ) ընկերութեան միջոցները շատացնելու աղբիւրներ գ) ընկերութեան տեղութեան կազմելը այն և միջոցներ գոտնելը, է) զեկուցումներ կազմելը պատրութեամբ, որոնք պէտք է ներկայացւեն ընդհանուր ժողովի քննութեան, ը) համերգների, երեկոյթների կազմակերպութիւններ և ուրիշ ընթացիկ գործեր, թ) յարաբերութիւններ պատուի տեղերի և անձերի հետ ընկերութեան աշամաւոր տեղերի և նոյն կազմական ճիւղերի բացումը:

Բ. Ընդհանուր ժողովներ

§ 24. Ընդհանուր ժողովները հրաւիրում են վարչութեան կողմից և լինում են՝ հերթական և տեղեկան:

§ 25. Հերթական ընդհանուր ժողովները նշանակւում են վարչութեան հայեցողութեամբ կամ երես վարչութեան այդ մասին դրաւոր կերպով ոչ պակաս յայտնել են այդ մասին գրաւոր կերպով քննութան տամն անդամ, մանրամասն բացատրելով քննութեան առարկաները. վարչութիւնը պարտաւոր է նշանակել ժողով երկու ամսուայ ընթացքում տուած յայտաբարութիւնից յետոյ:

§ 26. Իւրաքանչիւր ընդհանուր ժողովի ժամանակի, տեղի և զբաղմունքների առարկաների մասին նիստերի անդամները ոչ ուշ, քան երեք օր առաջ ձանուցւում են տեղական լրագիրների միջոցով կամ ծանուցագրերով. նոյնը վազօրօք յայտնուում է տեղական սատիկանութեան գլխաւորին:

§ 27. Տարեկան ընդհանուր ժողովները, որոնք նշանակւում են իւրաքանչիւր տարի մարտ կամ ապրիլ ամսին, ունեն իրանց պարապունքների առարկաներ ամսին:

հետեւալը՝ ա) վարչութեան գործերի տարեկան տեղեկադիր և վերաստուգող յանձնաժողովի գեկուցազիր քննութիւնը, բ) մուտքերի և ծախքերի հաշուփ և նախաշուփ հասաւատումը, գ) վարչութեան անդամների և փոխանդպամների, նոյնպէս վերաստուգող յանձնաժողովի երեք անդամի ընտրութիւնը:

§ 28. Հերթական ընդհանուր ժողովները ընթանում են ընկերութեան նախագահի ղեկավարութեամբ. իսկ տարեկան ընդհանուր ժողովին նախագահելու համար ընտրում է ամեն անդամ ընկերութեան անդամներից մէկը, որը չէ պատկանում ոչ վարչութեան և ոչ վերաստուգող յանձնաժողովի կազմին:

§ 29. Ընդհանուր ժողովը, թէ սովորական և թէ արտակարգը, կայացած է համարում, երբ ներկայ է Թիֆլիսում ապրող անդամների մի տասներորդ մասը; Իսկ այն հարցերի քննութեան համար, որոնք վերաբերում են անշարժ կալուածքներ ձեռք բերելուն կամ ծախելուն, կանոնադրութեան փոփոխութեան կամ լրացման, ընկերութեան փակման, նրա գործերի լիկ-փիգացիայի, պահանջւում է ոչ պակաս քան Թիֆլիսում ապրող անդամների կէսի ներկայութիւնը; Անդամների այդպիսի թուփ չը դալու դէպքում նոյն գործերի քննութեան համար հրաւիրում է երկու շաբաթից յետոյ երկրորդ ընդհանուր ժողով, որը համարում է կայացած՝ որքան ել լինեն անդամները;

§ 30. Ընդհանուր ժողովներում գործերը որոշում են զաղունի քուէարկութեամբ, ներկայ անդամների ձայների հասարակ մեծամասնութեամբ:

§ 31. Ընկերութեան իւրաքանչիւր իսկական անդամ ընդհանուր ժողովներում վայելում է միայն մի ձայնի իրաւունք, որը չէ կարող յանձնուել ոչ ոքի:

§ 32. Եթէ անդամներից որևէ մէկը ցանկանայ ընդհանուր ժողովին անել որևէ առաջարկ, պարաւոր է այդ մասին դրաւոր յայտնել վարչութեանը, որը, քննելով այդ առաջարկը և լրացնելով անհրաժշտ ցուցումներով և խորհրդածութիւններով, իր

դրաւոր եղբափակութեան հետ ներկայացնում է ընդհանուր ժողովի քննութեան և վճռին:

VII Վերաստուգող յանձնաժողով

§ 33. Ընկերութեան դրամական գումարների, ելեմուտքի մատեանի, արդարացնող վաւերաթղթերի, գործի և հաշիւների ստուգութեան համար ընդհանուր ժողովը ընտրում է իւրաքանչիւր տարի վերաստուգող յանձնաժողով, բաղկացած երեք անդամից և երկու փոխանդպամից: Վերաստուգող յանձնաժողովը ստուգման արդիւնքների մասին զեկուցանում է առաջին ընդհանուր ժողովին:

§ 34. Ընկերութեան հաշիւր կազմւում է առ մէկը յունտարի իւրաքանչիւր տարուայ և վերաստուգող յանձնաժողովի ստուգութիւնից յետոյ ներկայացւում է ընդհանուր ժողովի հասաւատութեան:

VII Ընդհանուր կանոններ

§ 35. Վարչութիւնը գտնուում է Թիֆլիսում և ունի կնիք «Թիֆլիսի Հայ Գիւղատնաեսական և Տնայնագործական Ընկերութիւն» մակագրութեամբ:

§ 36 Գործակարութեան մանրամասնութիւնները, հաշուեաւութեան մանրամասն կարգը և վերաստուգող յանձնաժողովի պարտաւորութիւնները որոշուում են ընդհանուր ժողովի կողմից հաստատուած հրահանգներով, որոնք կազմուած կը լինեն հաստատուած կանոնադրութեան շրջանակներում:

§ 37. Ներկայ կանոնադրութեան լրացման կամ փոփոխութեան ենթադրութիւնները՝ ընդհանուր ժողովին ներկայ եղած անդամների $\frac{2}{3}$ -ի հաւատութիւնը ստանալուց յետոյ՝ առաջարկուում են հաստատութեան սահմանուած կարգով:

§ 38. Ընկերութիւնը իրաւունք ունի ձեռք բերել իր նպատակների համար անշարժ կալուածք և վաճառել նրան, կազմել ամեն տեսակ պայմանագիրներ և համաձայնութիւններ, նոյնպէս պաշտպանել իր շահերը դատարանում լիազօնելի միջոցով:

§ 39 Ընկերութեան գործունէութեան տարեկան

հաշիւը, հաստատուած ընդհանուր ժողովից, կարող է ժողովի հայեցողութեամբ տպագրուել պարբերական հրատարակութիւնների մէջ, նոյնպէս առանձին գըրքոյներով:

VIII Ընկերութեան փակումը

§ 40. Եթէ որևէ պատճառներով անհրաժեշտ ճանաչուի փակել Ընկերութիւնը, այդ հարցը վճռուած է երկու Ընդհանուր ժողովներով, որոնք միմեանցից բաժանուած կը լինեն բաւական ժամանակամիջոցով:

§ 41. Երկրորդ և վերջին ընդհանուր ժողովի վերջնական որոշմամբ գործերի լիկիդացիայից յետոյ մնացած գումարները ստանուած են այնպիսի գործադրութիւն, որպիսին կը սահմանի ընդհանուր ժողովը:

IX Ընկերութեան ձիւղերը


§ 42. Ընկերութեան ճիւղերը բացւում են Ընկերութեան վարչութեան ձեռքով, երբ ստացուած կը լինի ոչ պակաս, քան հինգ հոգի տեղական գործողների կողմից յայտարարութիւն: Վարչութիւնը այդ մասին տեղեկացնում է նահանգական իշխանութեամբ:

§ 43. Տեղական ճիւղի վարչութիւնը բաղկացած է 3 - 6 անդամից և 2 փոխանդամից:

§ 44. Ճիւղերը զեկավարում են ներկայ կանոնադրութեան ցուցումներով: Նրանք պարբերաբար հաղորդում են տեղեկութիւններ իրանց գործունեութեան մասին կենտրօնական վարչութեանը, որը ունի վերահստութեան իրաւունք նրանց վրայ: Կենտրօնական վարչութեան յարաբերութիւնները ճիւղերի հետ որոշուած են կենտրօնական ընկերութեան ընդհանուր ժողովի կողմից հաստատուած հրահանգներով:

§ 45. Ընկերութեան ճիւղի անդամները, թիֆլիս եկած ժամանակ, կենտրօնական ընկերութեան ընդհանուր ժողովներում վայելում են ձայնի իրաւունք:

Տաճակ 1905 թ. ապրիլ 15^ի Տիֆլիս, въ Правление
Тифлисской губернаторской Сельско-хозяйственного и
Кустарного Общества:
* 7/1. 1922



ՑԱՆԿ

	ԵՐԵՒ
Առաջաբան	3
Ի՞նչ է կօպերացիան.	5
Կօպերացիայի տեսակները	7
Վարկի կօպերացիա	8
Գիւղամանտեսական կօպերացիա	10
Սպառողական կօպերացիա	14
Արտելներ	18
Կօպերացիայի բոլոր տեսակների կապը	20
Կօպերացիայի նշանակութիւնը Գիւղական անտեսութեան մէջ	23
Ի՞նչ յարաբերութիւն կայ կօպերացիայի և քաղաքականութեան մէջ.	25
Ի՞նչպէս պէտք է բանալ գիւղամանտեսական ընկերութիւն	27
Բնական կանոնադրութիւն	29
Ընկերութեան կազմը	35
Անդամների ընտրութեան եղանակը, նոցաիրաւունքներն ու պարտականութիւնները	35
Ընկերութեան վարչական կազմը, պաշտօնավար անձնաւորութիւնները, նոցաիրաւունքները և պարտականութիւնները	38
Ընկերութեան ժողովները	43
Ընկերութեան միջոցները և նրա պատասխանաւութիւնը	46
Ընկերութեան փակումներն ու պատասխանաւութիւնը	47
Կանոնադրութիւնների գիւղամանտեսական ընկերութիւնների ընական կանոնադրութիւնը	48
Ի՞նչպէս բացել սպառողական ընկերութիւն	56
Սպառողական ընկերութեան կանոնադրութիւն	60

Ընկերութեան միջոցները	72
Ընկերութեան կազմը, անդամների իրաւունքներն ու պարտականութիւնները .	63
Ընդհանուր ժողով	67
Ընկերութեան վարչութիւնը, նրա իրաւունքները և պարտականութիւնները	71
Ընկերութեան գործերի հաշվէտութիւնը, վաստակի բաժանումն և դիվի- գենտի հատուցումն	77
Ընկերութեան գործերի վերաբերեալ վէճե- րի լուծումն, ընկերութեան գործի դա- դարումն և նրա պատաս- խանատութիւնը	80
Ի՞նչպէս բացել վարկի կամ փոխառու ինսայտղական ընկերութիւն	84
Ի՞նչպէս կազմակերպել արտել	87
Աշխատաւորական արտելների կանոնագիրը.	94
Ի՞նչպէս բացել իւղագործութեան արտել	101
Իւղագործութեան արտելի պայմանի ձևը	102
Կանոնագրութիւնների հաստատման այլ միջոցներ	104
Գիւղատնտեսական ընկերութիւնների և ընկերակցութիւնների շրջանային միութիւնների մասին	108
Գիւղական կօօպերացիային աջակցող հիմնարկութիւններ	109
Վիլնայի կօօպերացիայի խրախուսող ընկերութիւն	110
Կանոնագրութիւն Թիֆլիսի չայ Գիւղատըն- տեսական և Տնայնագործական ընկերութեան	113

ՀՀ Ազգային գրադարան



NL0210065

